



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99

4-81

6503

Fragment of a label or piece of tape, partially obscured and illegible.

UNIVERSITY OF TORONTO  
LIBRARY  
E. B. FORD ALBANY  
1901

2011

01 JAN 1908

891.99  
G-81  
W

U. S. S. S. S.

N: 9068.

# ԴԻՄԱԿՆԵՐ

ԵՐԳԻԾԱԿԱՆ ԱՐԿԱԾՆԵՐ

( Արտասյուրիս )



ԹԵԻՐԻՉ

Ատրպատականի Հայերի Թէմական Արագատիպ  
ՅԻՇԱՏԱԿ ՎԱՂԱՄԵՌԻԿ ԵՂԻՍԱԲԷԹ ՄԻՉՁԱԷԳԵԱՆՅԻ

1904

1001  
4056

14

4150-02

Ա

ԵՋԻ-ՊԱՆԻՐ

4056

ԱՐՏԱՏՊԱԾ Լ

„Լուսն“ Հանդիսի Սեպտեմբ. Հոկտեմբ. 1903 թ.

# Ե Ջ Ի - Պ Ա Ն Ի Ր

ԱՐԿԱՆՆ

Արձակուրդներն հասան, ազատեցի պրոֆեսորներիս լեկցիաներից, բայց նրանց սուր սուր հեղնանքից ազատութիւն խո՛չկայ: Աշմարիտը խոստովանած դատախօսութիւնները, երկար ու ձիգ լեկցիաները այնքան կեանքս չէին մաշել, որքան սալօնների զրախօս դամբերը և պոռոտախօս ընկերակիցները: Պէտք էր հեռանալ մայրաքաղաքի ապականուած մթնոլորդից, պէտք էր անապակ մաքուր օդ ծծել, թարմանալ, կազդուրել, յոգնած միտքը, խարխալուած իրանը հանգստացնել, ուշքը կենտրոնացնել ստեղծագործութիւն և գիւտեր անելու համար: Պայուսակներս կարգի էի բերում և գրքերս կապկպում, բայց չէի իմանում ո՞ւր դիմել և ո՞րտեղ վայելել քառամսեայ խաղաղութիւնն ու անգործութիւնը:

Դասակիցներս արդէն այլևայլ նիւթերի մասին որոշել էին դիւտարացիները գրել, ամէն մէկը որոշ վայր էր քաշել՝ յատկապէս իր ընտրած առարկան ուսումնասիրելու և իւրաքանչիւրը յոյս ունէր դոկտորի, կամ մագիստրոսի աստիճանի հասնելու։ Ես երբէք ծոյլ աշակերտ չեմ եղել, իմ անձնական ջանքովս, առանց կողմնակի նպաստների ընթացական ուսումնարանից փոխադրել եմ բարձրագոյն կրթութեան տաճարը, բայց ինչով եմ մեղաւոր, եթէ ստեղծագործելու հնարելու ընդունակութիւն չեմ ժառանգել ծնողներիցս։ Պրոֆէսորներս իրենց սուր, հեզնալի կատակներով ծակել են սիրտս, ինքնուրոյնութիւն չունենալուս պատճառով, բայց, ասէք, խնդրում եմ, ինչ օգուտ, ինչ կարող եմ անել, հանձարը, տաղանդը չեն ծախում, որ գնեմ... չեն բաշխում, որ մուրամ... Բնածին որ չեմ ժառանգել, ինչ կարող եմ անել...

Գլուխս ամբողջ տարիներով պատէպատ եմ տւել, ափերիս մէջ տրորել եմ գանկիս մաշկը, սեղմրտել ճակատս, որբան փետրել եմ մագերս, բնածին ստեղծագործելու շնորհք որ չունիմ, գանգս ծակելով մէջը քանքար խո չեմ կարող լցնել տալ...։

Քանի նկատում եմ ընկերներիս զբաղմունքի մէջ խորասուզւած, սիրտս տրաքւում է... Հազար անգամ նստել եմ զրասեղանի առաջ, զրիչս վերցրել, խաղմզել տետեակներս, բայց որ բան չի դուրս գալիս... Կատաղութիւնիցս որբան տետրակ եմ գրչովըս ծակծկել, պատուտել և փշրել զրիչս։ Քանի

քանի անգամ մոլեղնած չափչփել եմ մայրաքաղաքի փողոցները, թէ ինչ է, մի նիւթ մտածեմ, ճարեմ, մի յանկարծակի դէպքից, առիթից օգտուիմ, դիտարացիա պատրաստեմ, բայց միթէ կարելի է բռնի դիւտանել, ուժով ստեղծագործել...։

Լաւ էր, բարեբաղտութիւն և մեծ բարեբաղտութիւն էր, որ քեռի Մարգարի որդին՝ Ենովքը ինձ առաջարկեց այս տարի միասին գնալ ամառանոց՝ իւր ծննդավայրը՝ Ալէքսանդրապոլ և այցելել Աղբաբայի *Աստուծոյ Անրիւն*, որոնք նահապետական կերպով եղ ու պանիր են պատրաստում։ Յայտնի բան է, սիրով ընդունեցի առաջարկը, քանիոր երկու - երեք ամիս ծծելու էի ամենամաքուր օդ և օդի արժէքով էլ անւելու էի ամենաթարմ և աննղարար ուտեստներով։ Կեանքի մէջ տնտես լինելը, մանաւանդ ինձ նման գոլի համար՝ անհրաժեշտ պայման է։ Մենք ծիծեռնակի նման թռանք, սլացանք, միայն թռչիւնների ներհակ ընթացքով և մի սուաւօտ վաղ իջանք Ալէքսանդրապոլ, քեռի Մարգարի դռան առաջ։ Ընդունելութիւնն ու հրճւանքը հրաշալի էր, ապրուստը՝ իշխանավայել. բայց ինչ օգուտ որ դիտարացիայի միտքը հանգիստս կտրել էր, մեխի նման գամել էր ճակատիս մէջ, հնար չկար մոռանալ։ Այդ անիծւած գամի լայն ու տափակ գլուխը աչքիս առաջից չէր բաժանուում...։

Ալեւոր ինչպէս կարելի է մտահան անել, ուշրից հեռացնել մի այնպիսի առարկայ, որ սիրտս ճարեցնում էր։ Գերմանացի, Լէհ, Ռուս, Հրէա, բոլոր ընկերակիցներս, նոյն իսկ հայ դասակից-

ներս դիտերտացիա պատրաստէին, և ես կարողանայի անդորր սրտով ուտել, խմել ու քնել: Անիծւած Յնովքն անգամ նիւթ ունէր և պարապում էր դրա ուսումնասիրութեամբ, էլ ես եթէ քարից էլ կազմւած լինէի, չէի կարող անզգա մնալ...: Մտածում էի, գլուխս ճմուռն էի գիշերը մինչև լոյս, բայց գուր, ստեղծագործելու համար հանճար է պէտք, տաղանդ է հարկաւոր, ինչ կարող էի անել: Հառաչում էի անդադար նիւթ, դիտերտացիայի նիւթ, գիւտ... շո՛ւտ... քունս անգամ ընդհատուում էր այս մտքից և խռովում հոգիս:

Ալէքսանդրապոլ մտնելու երկրորդ առաւօտը վսիղ բեռի Մարգարը բարձրացաւ, աչքերի ճպուրը տրորեց, թափեց և շուրջը դիտեց զւարթերես: Արևն արդէն նոր էր ծագել, տանտիկինը՝ Արեգնազան արլան կանուխ վեր էր կացել թոնիրը վառել; գառը քերթել էր տալիս և հնդուհաւը ինքն անձամբ փետրում: Յնովքի մայրը կանչել էր զրկից՝ տալի աղջկան, փլաւի բրինձն էր տւել իստակելու, որպէս զի վերջն էլ տուն, դուռ մաքրելուն օգնէ: Կովին արդէն նախիր էին ճամբել, հորթը արևի մէջ պառկել, կռնակն էր լիզում և հաւերը դարբասի շուրջն էին կրկնում: Տօնոն ախոռը, դուռը աւիլել էր, աղբը թափել, հորից ջուր բաշել, ջրջկնել էր բազն ու հայեաթը, պարտէզն ու դուռը և թթոցը դռան հետը դրած, կողքին պպգած տիրոջն էր սպասում, որ գնան բազար դանազան ուտեստ առնելու: Զուրջը մի լաւ գննելուց յետո, Մարգարն սթափուեցաւ ուրախացաւ, որ դեռ ևս շնչում և թագաւորում

է իւր յարկի վրա, թափթփւած շորերը գլտորւող ձմեռուկներ բռնողի նման, յատակից վերցրեց և շտապ շտապ հագնելով կանչեց.

— Արեգնազան, հորից մէկ պաղ ջուր բաշէ, բեր, լաւցւեմ, աչքերս բացւեն:

Կինը ըոպէական արագութեամբ կոնջը, սրբիչը պատրաստեց, Տօնոին քաշել տւած սառը ջուրը լեցրեց մոշորբան, եկաւ, կանգնեց մարդու սպասին: Մարգարը ձեռները տրորելով աղտը թափելուց յետո, երեսին խաշ հանեց, լաց աչքերն ու դէմքը և կօշիկները հագնելով դուրս եկաւ տանից: Գոնից դուրս չելած ճաշի համար կարևոր պատէրը տւեց կնոջը ասելով.

— Արեգնազան, լաւ նայիր, հնդուհաւը չը չորացնես: Գառի երեսին կարագ, մածուն բօլ բսէ, փլաւի եղը չցամքեցնես:

Արեգնազանը ուրախութիւնից մի թիղ բարձրացել էր, նա քսան տարեկան հարսի նման թռչկոտում էր և չէր իմանում ինչ նորանոր հնարներ մտածել, որ ուրախ անցկացնի զաւակը մի քանի ամիսները հայրական յարկի տակ:

Մենակ չմնալու և չտխրելու համար, ես էլ բեռի Մարգարի ետեից դուրս եկա, անդադար մտածելով մի այնպիսի դէպքի պատահել, որից կարողանայի օգտուել, դիտերտացիա գրելու: Գանդաղ քայլերով բեռի Մարգարը և Տօնոն մի բանի փողոց անցնելուց յետո, կանգնեցին Մայր եկեղեցու պատի տակ: Մարգարը հրամայեց Տօնոին դուրսը սպասել, իսկ ինքը մտաւ մատուռ և եօթն

անգամ ծունը դրեց « Եօթվիրաց » առաջ, ուխտեց, մոմերը վառեց, դուրս եկաւ, ուղղեց խափանի կողմը: Գինի, արաղ, կանանչի, միրգ և ուրիշ կարեւոր նիւթերը Տօնոյ հետ տուն ճանապարհեց, իսկ ինքը մտաւ սանահէր Յովհաննէսի դայֆատունը: Հեռւից ինձ նկատելով կանգնեց և ներս կանչեց: Յայտնի բան է ինձ հման հետաքրքրւողը չէր կարող մերժել այդ կոչը: Մանաւանդ որ յոյս էլ ունէի այդտեղ աչկարաց մարդի պատահելու և մի նիւթ գտնելու դիտէրտացիայիս համար...:

Ամէն կողմից աչքալոյս տեղացրին բեռի Մարգարին, որդու գալու պատճառով և նա հրճալի ամէն մէկից շնորհակալ լինելով, մի մի ֆինջան դայֆայով նրանց պատուում էր, հիւրասիրում: Ամէն կողմից գովք ու գովասանք տեղացրին Մարգարի զլխին, որ իր չնչին կարողութիւնը և ջանքը չէր խնայել Ենովքին համալսարան հասցնելու համար: Բարեսիրտ հայրը այդ բարեմաղթութիւնների և գովքի ավգեցութեան տակ թիզ ու կէս բոյ վեր քաշած, լեզուն բռնւած, չէր իմանում ինչ բառերով իր հրճւանքն ու երախտագիտութիւնը յայտնի շրջապատողներին: Նա ամէն մի բարեկամին փոխադարձաբար պատասխանում էր.

— Տարոսը քո որդուդ, տարոսը ձեր զաւակներին:

Այս վիճակում երկու ժամ նստեց Մարգարը դայֆատան փէքեայի վրա, առանց ժամանակի այդքան արագ սլանալը զգալու: Անդադար աչքը դռնից ներս մտնողի վրա ուղղելով նա ծխում էր և ան-

համբեր, կարծես մէկին սպասում էր: Մարգարը յաճախ ոլորում էր իր բեխերի ծայրերը, որոնց մէջ սպիտակները հազիւ նկատելի էին: Նրա այտերի կարմրութիւնը տարածւել էր ինչպէս գերծած կզակի, նոյնպէս արծաւուղի վրա, որի ծայրից դուրս էին ցցւել քթի մազերը: Խոշոր ու փոս ընկած աչքերը, թաւ ու կեր ունրերի տակ արտայայտում էին նրա բարեսիրտ հոգին, որը կնճռոտած ճակատի վրա աւելի խոր դրոշմւած էր երևում: Վերջապէս Մարգարի լայն, բայց լզար կուրծքը ազատ շունչ քաշեց և դէմքի վրա ցոլած հոգեկան բաւականութիւն: Մի խումբ ինտելիգէնտ մարդիկ մտան դայֆատուն.

Գալողները այնպիսի զիրը ունէին, որ դայֆատան աւագ կողմը նրանց տեղ բացին և արհեստաւորներն ու մանրածախները աւելի ակնածալի զիրը բռնեցին: Գրանք օսլայած շապիկներ չունէին, բայց գտակների վրա սիգուրթայի նշաններ էին կրում: Ղայֆատան խօսակցութիւնը մի կէս ժամով ընդհանրականի վերածւեց, բոլորը ուշադրութեամբ լսում էին և խօսակցութիւնը առօրեայ կեանքի սահմանից դէնը չանցաւ: Իսկ իմ ակնկալութիւնս գուր անցաւ — չկան, չի պատահում, ուղում ես ճարիր...: Երբ դայֆատնից դուրս եկանք և ընկերները բաժանւեցան, Մարգարը մօտեցաւ իր մտերմին ու սասց.

— Գետրոս ջան, առաջ անցի տուն երթանք: Ենովքս եկաւ, « բարի եկարի » էլ տուն չմտար: Գոչդ մի ծռիլ, բերանդ մի բանալ, ուրիշ խօսք չեմ լսում,

այս օր կիրակի է, բանի, գործի օր չէ: Երթանք մեզի:

— Գնանք, քեռի ջան, զնանք: Մեր Յակոբին թէև խօսք էի տուել, զնալ պոչով շանախ ուտելու, բայց վնաս չունի, նա կնեղէ: Մոսկուայից, Պետերբուրգից եկած տղոցը պէտք է ողևորել, խեղճերը օտարի՛ լնհացու և զերմանացու մէջ ամբողջ տարի կաշկանդում են, խորթանում, հայրենի նիստ ու կացի կարօտ են քաշում: Այնպէս պէտք է նրանց խնկարկել, որ այս երկու երեք ամսում իրենց վրայի պանդխտութեան խորթ հոտը անհետանա: Չատ ուրախ եմ, զնանք, խնդանք, ծիծաղենք: Գրանք մեր ծաղիկն են դառնալու, պէտք է դրանց փայփայել և տակերը փորփրել, որ անուշ բուրեն: Է՛հ, պարոն Դամադդաղեան, բիշ էր մնում, որ ձեզ չճանչնամ, շատ էք փոխուել:

— Տարիները վերցնում են իրենց հարկը, ասացի, պարոն Պետրոս, դուք էլ շատ էք ձերմկել:

— Ճերմկեցայ, սպիտակացրին ինձ, պարոն Մարկոս, առաց հառաչելով և մի բանի բոպէից յետո հասանք տուն:

Արդէն ճաշի մօտ էր: Անմիջապէս բոլորեցինք աղանդերի սեղանի շուրջը մի մի բաժակ արագ խմելու, ախորժակներս գրգռելու համար: Ուրախ խօսում էինք, կատակում, ծիծաղում և մեր հրճանքի ձայնը եօթը դրացու տուն հասնելով, ակամայ գլարթութիւն և բարի նախանձ էր բորբոքում: Ամէնքը երազում էին իրենց գաւակներին

համալսարանի շէմբից ներս ձգել, քեռի Մարգարի նման:

— Մարկոս, մի մի բաժակ գորկի չխմենք, ասաց Ենովքը բաժակները լցնելով:

— Ուրախութեամբ, պատասխանեցի լիք բաժակը վերցնելով:

— Պարոններ, ասաց Պետրոսը մեզ զիմելով, այդ գորկին ինչ առաւելութիւն ունի մեր քիշմիշի արաղից: Գորկիի ո՞ր յատկութեանը հետ էք կապել այդքան հաճութիւնով:

— Փորձիր, փորձիր և տես ինչ ախորժելի է, ասաց Ենովքը:

— Ես իմ փորձած թանը ձեր անփորձ մածնի հետ չեմ փոխի: Բայց ցանկալի է իմանալ այդ գորկիի առաւելութիւնը. ինչի է այդքան յարգի արժանացել, ինչպիսի հիւլէներից է բաղադրւած:

— Է՛հ, պարոն Պետրոս, խմեցէք, և կզգար առաւելութիւնները, ասացի: Մինչև քիմիա չգիտենար, դրա բաղադրութեան և հիւլէների մասին չէք կարող գաղափար կազմել: Դա մի շատ բարդ խնդիր է, որը միայն քիմիա սովորածներին կարելի է տեսնիքական տէրմիներով բացատրել: Չեզ ինչքան էլ որ պարզ նկարգրեն, էլի դժւար թէ ըմբռնէք: Ի՛նչ գործ ունիք բաղադրութիւնների հետ, խմեցէք և կզգաք դրա համի, հոտի առաւելութիւնը: Ես մտադիր եմ համալսարանը աւարտելու պէս մի գիտական հանգէս հրատարակել մայրենի լեզուով: Համալսարանական դասախօսութիւնները ժողովրդականացնել ու տալ մեր ժողովրդի ձեռքը, որ նա քայլ առ քայլ

մօտենայ գիտութեան: Ո՛հ, ինչքան գիտութիւնից ետ է մնացել հայ ժողովուրդը, կարող էք երևակայել: Մեր վարժապետները, մեր ինտելիգէնցիան ֆիզիկայից բան չգիտէ, քիմիան նրա համար մի անծանօթ աշխարհ է: Կենդանական աշխարհից, բուսական հարստութիւնից այնքան տեղեկութիւն ունի, որքան լուսնի վրա ապրողների մասին նրանց պատմել են տատերը: Եւ բանն այնտեղ է, որ հրաշալի կերպով կեղծում են, արտայայտում են՝ թէ գիտնականներ են, են... մասնագէտներ ու էնցիկլոպէդիստներ.. Օրինակի համար մեր երկրում կաթը վառում են կրակի վրա, խանձում և այնպիսի թան, մածուն, կարագ, պանիր պատրաստում, որ բոլորովին փչացած է, անպէտք: Ոչ ոք չգիտէ, թէ ինչից է կազմւած կաթը, ինչպէս պէտք է դրա հետ վարել և ինչպէս օգտել: Երբ ես իմ քիմիական, կաթնաբանական դասախօսութիւններս սկսեմ տպագրել մեր հանդէսում, հետաքրքրեցէք և ծանօթացէք քիմիայի տարրական բացատրութիւնների հետ: Երբ սովորիք նիւթերը վերլուծել, քիմիական խնամութիւնները տեսնել, այնժամանակ կկարողանանք ևս ըմբռնել գորկիի բաղադրութիւնը:

— Գուցէ ձեր տեխնիքական բառերից շատերը չհասկանամ, պարոն Դամադղաղեանց, ասաց Պետրոսը, բայց... ախար ես էլ քիչ ու միչ այբ ու բն կերել եմ, քիմիայի աղերից կուլ եմ տւել, թէ չեմ սովորել, պարզ պատմւածք կարող եմ ըմբռնել:

— Ո՛չ, ո՛չ, տարրական քիմիայի օրէնքները

պէտք է իւրացնել, ասացի դրական կերպով, որ ապա հնարաւոր լինի ձեզ քիմիապէս նկարագրել:

— Բան չունիք, ասաց Ենովքը, մեր ճաշը լաբրատորիա չէ:

— Պետրոս ջան, մի բաժակ գորկի ուզում ես տնկել, ասաց քեռի Մարգարը, դատարկ խօսքերը փոր չեն կշտացնիլ:

— Զէ, քեռի, անսովոր բան բերանս չեմ դնիլ:

— Գէհ, որ այդպէս է, մի բաժակ ճաճի արագ խմէ. ապուրը բերին:

— Զեր կենացը, ասաց Պետրոսը, յաջողութիւն եմ ցանկանում ձեր ապագայ գիտական հանդիսին:

— Յոյս ունիմ, ասացի Պետրոսին, գալ տարի յունւարից սկսել այդ հանդէսը: Ենովք, պէտք է ծրագիրն էլ կազմել, որ Պետերբուրգ վեռադառնալու պէս խնդրագիր տանք և իրաւունք ստանանք: Մեզ կաշխատակցէք, այնպէս չէ, հարցրի Պետրոսից:

— Գուր սկսեցէք, ազնիւ և կարևոր գործը աջակիցներ շատ կունենա, ասաց Պետրոսը և մի կտոր պանիր կտրելով կերաւ: Պատառը բերանը խեղդելով ասաց քեռի Մարգարին:

— Քեռի, այս « Եզի պանիրը » որտեղից գնեցիք:

Քու էլ բանդ, Պետրոս ջան, ասաց Մարգարը կարմրելով, ամէն բան բաց չեն ներկել: Կուլ տուր, անցիլ:

— Մխար այնքան ցամաք է, որ կուլ չի

զնում, խեղդեցա: Միթէ իրաւունք չունիմ բողոքելու: Ամէն բան անխնայ, առատ, ժլատութիւնդ « Եզի պանիրով » ես ուզում ապացուցանել:

— Գէ՛հ լաւ է, ասաց թաշքշելով Մարգարը, աշխատելով խօսքը փոխել:

Այս խօսակցութիւնը ուշքս գրաւեց սրտիս մէջ կրակ գցեց: Սկզբում կատակ կարծեցի, բայց Մարգարի ամօթից կծկթիւր նկատելով, զգացի, որ հանաքի բան չկար: « Եզի - պանիր », այս ինչ տարօրինակութիւն, ասում էի մտքումս և անտարբեր ձև ընդունելով, թողի ձկնկիթը և մեծ նեղութիւնով մի կտոր պանիր կտրեցի — պոկեցի ու կերա: Յամաք պանիրը դէմ առաւ նոյնպէս իմ կոկորդում և ես խեղդւելով կիսահեգնական ձևով ասացի.

— Ամա « Եզի պանիր » հա՛, այսքան էլ կոշտ բան կլինի: Սրա մէջ կարծես բնաւ կաթի հիւթ չկա: Այսպիսի մի առատ երկրում, սր: նման փայտի մանրուք կարելի է ուտել: Ահա հայի տղիտութեան արդիւնքը: Այս պանիրը սրտեղ են պատրաստում, պարոն Պետրոս, հարցրի:

— Մեր սարերում, եայլաւորները, ասաց Պետրոսը: Գէ՛հ, կերէք ու մտածեցէք հայ գիւղացու դառն ազրատ վիճակի մասին: Այն գիւղացին, որ պատրաստում է աշխարհի բարին, ստիպւել է իւր պատրաստած համեղ նիւթերով քաղաքացուն կերակրել և ամբողջ տարին իւր չոր հացը այս « Եզի - պանիրով » խեղդւելով կուլ տալ:

— Բայց եզից ինչպէս կարելի է պանիր արտադրել, ասացի չկարողանալով զարմանքս և

հետաքրքրութիւնս զսպել: Պետրոսը ծիծաղեց ու ասաց.

— Խեղճ մարդ, խորթացել էք, կարծես թէ դուք այս երկրի դաւակը չլինէք: Միթէ չգիտես, չես իմացել, որ թշուառութիւնը այնպէս է ճնշել հայ գեղջկուհուն, որ նա ստիպւել է և ստիպել է եզին էլ կթւելու: Բայց որովհետև եզի կաթը իւր չունի, դրանից էլ այս խեղթան պանիրն են արտադրում:

Ես լռեցի ապշած: Ակամա ուսերս վեր էր բաշուում: Որքան աշխատեցի, զարմանքս չկարողացայ ծածկել ու ասացի.

— Միթէ կարելի է եզը կթել և ինչպէս:

— Եզը միթէ ծիծ չունի, ասաց ծիծաղելով Պետրոսը: Այնքան ժամանակ բնական պատմութիւն էր կարդացել, կենդանական աշխարհի հետ էր ծանօթացել, միթէ չգիտէք, որ եզն էլ ծիծ ունի, ինչպէս և տղամարդիկ, ուրիշ արու կենդանիներ, ասաց լրջութեամբ Պետրոսը և հայեացքը ուղղեց աչքերիս:

— Ունի, բայց եզի ծծերը դարերի ընթացքում չորացել, սմբել և անընդունակ են դարձել գործելու: Հէնց գիտնականները, Գարվինն էլ ասում են, որ մի ժամանակ, դուցէ մի - երկու հարիւր դար առաջ արուններն էլ են զիւցնելիս եզել ձագերին, բայց պարբերաբար քիչ գործածելով, չգործածելով դարերի ընթացքում բթացել են, անընդունակ դարձել կաթ արտադրելու: Իսկ այդպիսի կարճ ժամանակում...

ԴԻՄԱԿՆԵՐ

1001



— Այն, բայց հայ կիներ, այդ մարմնացած թշ-  
 ւառութիւնը, զրկանքի և չքաւոշութեան հարւածնե-  
 րով մարգւած ստրկուհիին կարիքն ստլպել է եզից  
 կաթ քաշելու և այդ անդադրում տանջւածները  
 այնքան են արորել եզի պտուկները, որ նրանք ա-  
 կամայ կաթ են արտաթորել: Է՛հ, ջահել էք, հոր ուշ-  
 քատածը և մօր ւփածը պատարաստի կերել էք, չէք  
 դդացել, թէ ինչ է թշուս ութիւնը, այն էլ հայ  
 կնոջ զրկանքների դատապարտում վիճակը: Զբաւո-  
 րութիւնը, անճարութիւնը հայ կնոջ գլինել, յարձա-  
 կել է եզի վրա և շարտանջ կլնը հարստահարել է  
 եզին, ինչպէս իրեն հարստահարել ու կեղերել են  
 զար՝րի ընթացքում իսլամի հարկահանները՝ կաթ է  
 քաշել եզի կրակներից: Ինչպէս իւր արիւնն են ծը-  
 ծել մուրաշիքներն ու շահնանները և այդ կաթից  
 անպէտք լսո - պանիր է մակրդել իւր ձագերին ցա-  
 մար չթողնելու համար:

— Բայց այս այնչափ դարմանալի բան է, մը-  
 մնջեցի ապշութիւնից, թորքս բերանումս չորացաւ,  
 չկարողացայ կրքերս գսպել և շրթունքիցս դուրս  
 թռաւ զգացածներս: Թէպէտ ուզում էի կրքերս գս-  
 պել, բայց անհնար է, և ակամայ նորից կրկնեցի: - Ո՛չ  
 մի երկրում այսպիսի բան նոյն իսկ չէ լսուած: Ահա  
 երեք տարի է մեր պրօֆէսօրները կաթնատնտեսու-  
 թեան պրօսթութիւն են մեզ դատախօսում և անթիւ  
 առակներ ու առօտակներ են պատմել, իսկ այս մա-  
 սին ոչինչ և ոչինչ չեն իմանում:

— Կարիքը ստիպում է զրկւածներին միջոց-  
 ներ գոննելու, հնարագէտ է շինում, ասաց Պետրոսը

մանանելը սրելով և ապուրի միսը մանրելով:

— Բայց մեր կողմերի թարարեամա զիւզա-  
 ցիք միայն կովերին են եայլա տանում, ասացի տա-  
 րակուսած:

— Է՛է, ուշադրութիւն չէք դարձրել, եզերին  
 էլ են տանում: Միթէ չէք պատահել եզերին բեռնա-  
 ւորւած սարերը բարձրանալիս: Գուցէ թուրքերը  
 այնքան էլ չեն հետամտում եզերին, բանի որ հա-  
 րուստ են, կողոպտել գիտեն, առատ ապրում են և  
 կարիք չունին խեղդան լոռի...:

Մտածման մէջ ընկայ և չէի կարողանում բա-  
 ցատրել այս խնդիրը: Հաւատալս չէր գալիս, բայց  
 վնշչս պէս համոզեցի, որ կարիքը կարող էր  
 հայ կնոջ ստիպել եզից կաթ քաշելու: Եթէ իսլամի  
 հարկահանները իրենց այրուձին պարարտացնելու  
 համար ամուլից և ստերջից բաժ էին կորզում, հայ  
 կինն էլ պարտաւորւած էր անձինը կթելու ընտելաց-  
 նել: Բայց և այնպէս չէի կարող երևակայել, թէ Ա-  
 լէքսանդրապօլում սեղանի վրա, կեր ու խումի մէջ,  
 կարողանայի մի այսպիսի նոր դաս առնել, հետաքը-  
 րիւր բան սովորել և զիւտ անել --- գիտութեան հա-  
 մար մի հրաշալիք բանալ: Ամբողջ երեք տարի հա-  
 մալսարան յաճախելով զիսէրտացիայի նիւթ էի փն-  
 տում, գլուխս տրաքացնում էի, ինչպէս կարող էի  
 երևակայել, այսպիսի ահաւոր զիւտով մի հետաքրքիր  
 նիւթ ինքն է գալու ինձ գտնելու և այսպիսի տարօ-  
 րինակ կերպով: Թէև խօսակցութիւնը փոխեց քեռի  
 Մարգարը և սեղանը հաւարեցին, բայց ուղեղումս  
 մեխուեց « եզի - պանրի » խնդիրը, անվերջ դրա մասին

լի խորհում: Պետրոսի և Ենովքի մի բանի հարցերին, առանց ըմբռնելու կցկտուր և անկապ պատասխաններ տուի. չեմ յիշում ո՛չ հարցերը, ո՛չ պատասխանները: Պետրոսն ու Ենովքը մի բանի ակնարկ էլ փոխանակեցին խորհրդաւոր կերպով, չկարողացայ ըմբռնել պատճառները: Բայց կարծում եմ, որ Ենովքի բէֆին կպաւ Պետրոսի ինձ տւած բացատրութիւնները «Նզի - պանրի» առթիւ: Գուցէ նրա դիտէրոացիայի նիւթն էլ այս է, որն ինձնից այնքան գազանի է պահում: Ո՛չինչ, ես կշտապեմ...:

— Պարոն Պետրոս, ասացի, երբ պարտէզ իջանք զբօսնելով, Եայլաւորները որքան հեռու են տանում իրենց կթանք: Ալէքսանդրապօլից:

— Ամէն գիւղ ունի իւր յատուկ արօտատեղը - ամառանոցը, ոմանք շատ մօտ են, ուրիշները հեռու: Ի՞նչ էիր անելու, հարցրեց Պետրոսը:

— Ես մտածում եմ, ասացի, մի բանի Եայլայցեղել: Ախար Ռուսաստանում և ուրիշ եւրոպական կողմերում ոչխարը, այծը չեն կթում: Մեր գիւղացու տնտեսական աշխատութեան մէջ մի նշանաւոր տեղ է բռնում ոչխարի կաթը, որը ոչ միայն ուտում են, մածուն շինում, այլ մեծ քանակութեամբ պանիր են պատրաստում: Ասենք այդ պանիրը այնքան էլ համեղ բան չէ, բայց ուսումնասիրելի նիւթ է: Ես խոստացել եմ մեր պրօֆէսօրին ոչխարը կթելու և նրանից պատրաստւած ուտեստի մասին մի ուսումնասիրութիւն գրել:

— Եթէ կամենար, միասին գնանք: Ես ձեզ կը տանեմ մօտակայ Եայլաները: Բայց չենք կարող ան-

միջապէս ետ դառնալ, հարկաւոր է գիշերը մնալ այնտեղ:

— Ոչինչ, ոչինչ, աւելի ուրախ կանցկացնենք, ասացի, Եայլաւորների կեանքը տեղում կընենք և և կծանօթանանք:

— Այնտեղ ձեզ ցոյց կտամ նոյնպէս, թէ հայ կանայք ինչպէս են եզերին էլ կթում, աւելացրեց Պետրոսը, հետաքրքրութիւնս շարժելով:

— Կտեսնենք, ասացի ըթի տակ, չուզելով իսկական նպատակս արտայայտել և անտարբերութիւն կեղծելու համար ըթիս տակ սկսեցի շշուացնել, բայց ակամայ ընկզմեցի դարձեալ իմ խօհերում:

Ուրախութիւնիցս կարծես թեք առած թռչկոտում էի: Այսպէս էլ անակնկալ գիւտ և այն էլ այսպիսի մեծ գիւտ: Պիտի դրդացնեմ գիտական - կենդանական աշխարհը: Երեսակայութեամբ ս'աւառնում էի ամպերի վրա, և արդէն համոզւած էի, թէ մտել էի համաշխարհային գիտական ջոջերի շարքը: Այսպիսի գիւտից յետո, բունի պիտի ստիպէի բոլորին, որ ոսկէ տառերով իմ անունս գրեն ո՛չ միայն հայ մածերի, այլ հանրամարդկային հսկաների դասում: Եզը բռնաբարել և ստիպել կթուելու...: Այն անաւոր եղջիւրաւորին ստրկացնել և խոնարհեցնել...: Չէիր հաւատում, տիւմարներ, «տեսակների ծագման» պատմութիւնը, տարակուսում էինք «քննակաւի լատուրթիւս» տէօրիայի մասին, կոյրեր, կասկածներ էիր տածում «սայրակե, սրկուս» խնդիրների առթիւ, դէ՛հ լսեցէք նոր, բոլորովին աներևակայելի փաստ, նոր գիւտ, որ տալիս է արևելքի կեանքը արևմուտքի փորձառու

և քննադատ գլուխներին:

Արդէն սկսեցի մտքումս ծրագրիս կազմել, եզրին կլծելու ընտելացնելու առթիւ գրելիք գիտելութեան համար: Անպայման հաւատացած եմ, որ այդ գիտելութեան ոչ միայն դոկտորի ու մագիստրոսի աստիճանի եմ բարձրանալու, այլ կաթնատնտեսութեան կաֆէղրան, պրոֆէսորական աստիճանով ինձ են առաջարկելու: Այո, քաղցր երազ է, բայց իրականութեան շատ մօտ, այնքան մօտ, որ ինձ գծեցնելու, խելագարեցնելու աստիճան յափշտակում է: Ես ինձ, կրքերս գտալել գիտեմ և կարող եմ տոկայ, իսկ թո՛ղ Յնովքն ու Պետրոսը ինչպիսի աշխարհներ որ ցանկանան, փոփոխեն...: Այդու դրօսանքից վերադառնալիս, մօտեցա, քեռի Մարգարին և ասացի:

— Խնդրում եմ մեզ համար ձի վարձել տաք, գնանք մի երկու օրով եայլաները:

— Երեւի սէր ու կարագի կարօտ ես քաշում, ասաց քեռին բմծիծաղով: Ուզում ես, առաւօտը առնեմ, որքան սիրտդ ուզում է: Խափանի տակ շատ են բերում:

— Ո՛չ, ուզում եմ մի քիչ սարի օդ ծնել, հովիւներն ու հարս աղջիկները տեսնել, լմանալ թէ ինչ կեանք են վարում նրանք և որքան տանելի է նրանց վիճակը: Մեր լեռների լեռքը ուսական դաշտավայրի մարգաստանների բոյսերից անչափ իւղոտ է, պէտք է լմանալ, թէ ինչ է պատճառը, որ մեր տեղական կովերի կաթը Առուսական կովերի կաթից պակաս է:

— Տեսնելու ոչ մի հետաքրքիր բան չկայ. հարս, աղջիկ կամ աթար են շինում, կամ խնոցի հարում: Առաւօտ ծառային դրկեմ, երթայ Եասաւուլից մեր ձիերը բերլ: Նստէք, գնացէք: Դու էլ կերթնա, Յնովք:

— Անպատճառ, անպատճառ, հայրիկ, ես էլ եմ գնալու: Ես էլ ուզում եմ հանքերը գննել, մանգալ ձորերը: Ինձ կրնկերակցես, Մարկոս, այնպէս չէ...

— Ինչպէս կամենաք, ես պատրաստ եմ, ասացի, միայն թէ շուտ գնանք:

— Որ այդպէս է, մեր թարաքամա Մուկուշին էլ պէտք է ձեզ հետ տանք, ճանապարհները նա լաւ գիտէ և այն կողմերը ճանօթներ շատ ունի: Չորեքշաբթի կամ հինգշաբթի ճանապարհ կգձեմ ձեզ:

— Ինձ էլ կտանիք, ասաց Պետրոսը ձեռքից «Մշակի» համարը ցած պցելով:

Ուրախութեամբ, ուրախութեամբ, ասացի և դուրս եկանք, նստանք ֆայտօնները, դիմեցինք Չէրքեզի ձորը, ապա Արփա-չայի կողմերը դրօսնելու:

— Բնութեան գեղեցիկ տեսարանները չէին կարողանում սիրտս գրաւել, արեգական վերջին ճառագայթները, ջինջ ու գով օդը, որ թարմացնում և կայտառացնում էր մեզ, ինձ չէր կարողանում հրապուրել: Գլխումս լծակի նման մեխել էր «Եզրպանիքը», հայ դարաքաշ շինականը, կարիքներից ընկճած եզր կլծելու ընտելացնող հայ կիներ և նորահամբերատար և շարքաշ կեանքը: Այս մտքերով օրօրւելով և ճոճելով ֆայտօնի մէջ, սրտագեղ տուն վերադարձայ, նստեցի ու սկսեցի նամակներ գրել Մուսկա, համալսարանի բնական պատմութեան, կենդա-

նաբանութեան, բիմիայի և ֆիզիքայի պրօֆէսորներին և դիրեքտորին: Անկարելի էր շշտապել, քանի որ Ննովքը կարող էր առաջնութիւնը խլել ինձնից, իսկ առաջնութիւնը արդէն ամենաէական մասն էր կազմում այս գիւտի մէջ: Ասենք նա ինձի չափ մանրամասն կերպով հարցի էական մասը չի կարող նկարագրել և հրապարակ դուրս գալ, բայց և այնպէս առաջնակութիւնը կորցնելուց յետո, նկարագրութիւնները այն փառքը չեն կարող յատկացնել: Առանձնացայ, գրիչս վեր առի ու պատմեցի պրօֆէսորներին, թէ ինչպէս հարստահարւած ու կեղեքւած ժողովուրդը ստիպւել է կեղեքելու իւր իրաւունքի տակ դանւած - անասուններին, մինչ այն աստիճան, որ եզին կթւելու է ընտելացրել, նրանից կաթ է քաշում և աղքատի սնունդի համար մի տեսակ անիւզ, խեղդան պանիր, լոր է պատրաստում: Խոստացայ կտտարելիք ուսումնասիրութիւններս մանրամասն արձանագրել և նրանց ուղարկել: Եռանդս բորբոքել էր, գոռիչս սահում էր ճախարակի արագութեամբ և իրար ետևից թերթիկները լցում էին: Անչափ շտապում էի, որ շինի թէ մի ուրիշը ինձնից առաջ գիւտս հաղորդէ գիտական աշխարհին և ես զրկեմ առաջնականութեան իրաւունքից: Մինչև անգամ նամակների հասցէները գրեցի, կնքեցի և ապա անկողին մտայ:

Հետևեալ առաւօտ մեր սեղանը զարդարւած էր լաւ անքաշ ոչխարի պանիրով: Քեռի Մարգարը ամօթից առաւօտ վաղ գնացել, գնել, բերել էր բազարից մի քանի գլուխ անքաշ պանիր: Անչափ վը-

դովեցի, որ չափտի կարողանայի օգտուել և եզի պանիրի նմուշ ուղարկել պրօֆէսորներին: Չայից յետո նամակներս պոստ էի տանելու, բայց ինչպէս անէի, որ կարողանայի ձեռք բերել մի քանի կտոր «Եզի - պանիր»: Մի քանի անգամ մօտեցայ տանտիկնոջ և ուղեցի նրանից խնդրել, բայց չուղեցայ դադանիքս դուրս տալ: Գրածներին մասին չէի ուզում Ննովքին բան հաղորդել, կամ մի ուրիշին յայտնել, մինչև դիւքրտացիան պրօֆէսորներին ձեռքը հասնելը: Եթէ ծառայից, կամ բանանողից ուզէի, կարող էի կասկածանքի տեղիք տալ: Վերջապէս վճռեցի բազարից գնել և պոստին յանձնել:

Պոստ գնալիս ուշի ուշով գննում էի նպարավաճառների խանութները, որպէսզի նախ տեսնեմ և ապա պահանջեմ «Եզի - պանիր»: Մի քանի խանութպաններ զգուշով որ բան տունելու ցանկութիւն ունիմ, սկսեցին ինձ վաճառք առաջարկել: Վերջապէս մի տէփուրի վրա նկատելով ուզածս պանիրը, մօտեցայ, մի կտոր վերցրի և ասացի.

— Խնդրեմ սրանից ինձ ևրկու ֆունտ տաք:

— Այա ջան, պատասխանեց խանութպանը գնացիր, եկար մեր քաղաքը, էլ ուրիշ ծաղրի բան չգտար, այժմ ուզում ես «Եզի - պանիր» գնել: Այս լաւ պանիր չէ, չէք կարող ուտել, բզիւ կկանգնի: Այդ թողէք, ես ձեզ անքաշ, լաւ եղոտ մի կտոր պանիր տամ:

— Աղբէր, ասացի, քեզնից ինչ որ պահանջում եմ, այն տուր: Կշռիր երկու ֆունտ այս պանիրից:

— Պարոն, մի նեղանաք, հակաճառեց ինձ

հետ խանթւորը, ես համոզւած եմ, որ դուք այդ պանիրը չէք կարող ուտել, ձեզ կխեղդէ: Անքաշ պանիր տամ...

— Այդ քու գործդ չէ, ասացի սրտնեղած, ինչ ուզում եմ, դու այն տոնը:

— Ուտելու համար չէք ուզում: Ուրեմն մեր «Եզի - պանիրով» ուզում էք մեզ ծաղրել: Ես ձեզ չեմ ծախի այդ պանիրից:

— Ախար քու ինչին է պէտք, թէ ես կխեղդուիմ, կամ ուզում եմ ծաղրել ձեր ապրուստը: Դու խանութպան ես և ծախելու ես քու ապրանքը: Ան գին, և տուր ինձ ցանկացածս:

— Ներողութիւն, ասաց խանութպանը, մենք էլ պատիւ ունինք, մենք էլ մեր պատիւը դիտենք: պաշտպանել, չենք կարող մեր գլուխը ոտքի տակ գցել: Դրանցու համար ծախու «Եզի - պանիր» չունինք:

— Այ մարդ, ինչ յաման ես եղել: Քեզ սով ասաց, թէ ես ծաղրելու եմ ձեր պանիրը, ձեր պատիւը ոտքի տակ եմ գցելու: Ես ուզում եմ դիտնական քննութիւն անել, հետազոտել...

— Այդ աւելի վատ: Երևի մտածում էք սրա վրա էլ հարկ դնել տալ և անձար ազրատին այս խեղդան պանիրից էլ զրկել: Ո՛չ, աղա ջան, ո՛չ: Մի կարծէք, թէ մենք գարման ուտող ենք, մանք էլ քիչ ու միչ բանաւանութիւն և մտածողութիւն ունինք: Հերիք է ձեր գլխաւան քննութիւնները մեր գլխին կատարէք և օրէցօր հարկերս ծանրացնելու ճանապարհները ցոյց տար...

— Բարեկամ, ախար անմեղ տեղը ինչի էք բորբորում: Երևակայական կռիւ ինչի էք մղում ինձ դէմ: Գիտութիւնը հարկի հետ գործ չունի: Ան փողը կրկնակի, տոնը ինձ երկու ֆունտ պանիր, ուզում ես, քառապատիկ ան...:

— Փութին մի մանէթ էլ տաս, ծախու չէ. քեզ պէտքերից որքան հեռու ապրենք, այնքան հանգիստ կանցկացնենք մեր թշուառ օրերը:

Բարկութիւնիցս չէի խմանում ինչ պատասխանել այդ կամապաշտ նպարավաճառին, որը չէր ուզում իր երևակայական կասկածներից ձեռք քաշել: Անճարացած թրեցի ու առաջ գնացի: Մի երկու նպարավաճառի մօտ թէև տեսայ ուղածս, բայց սիրտ չառի նրանց մօտենայու, մանաւանդոր երևակայող նոյարավաճառը փողոցի մէջ կանդնած աչքով, ունքով և ուսերով նշաններ էր տալիս արհեստակիցներին: Վերջապէս մի ձերուկ խանթւորի 20 կոպէկ գցելով ցոյց դրւած պանիրից երկու ֆունտ խնդրեցի: Նպարավաճառը խելոյն խնդիրս կատարեց և առանց սպասելու փողից յաւելւածը ետ ստանալու, ձեռի շարժումով խանթւորին հասկացրի, որ իրեն եմ նւիրում այդ յաւելեալը, շտապեցի պոստատուն:

Էլ հանգստութիւնս կտրւեց: Գիշեր ցերեկ մտածում էի դիսէրտացիաս գրել վերջացնել: Առաւօտից մինչև իրիկուն գրում, գիշերը կարդում չնչոտում, փոփոխում և սրբազրում էի: Գիշերը մինչև լոյս երազում էի ինձ ամբիոնի վրա դասախօսելիս, վիճաբանում էի պրօֆէսօրների շարքին: Երբեմն յափշտակում էի, թուում էր, թէ վճճի էի բռնւած

այս ու այն գիտնական պրօֆէսօրներին հետ, որոնք երբեմն իրենց սուր սուր նկատողութիւններով խայթել էին ինձ: Ինձ ու ինձ երագումս տանջում էի, ոյժերըս ամփոփում, ուշքս կենտրոնացնում, դէմքիս լուրջ կնճիռներ էի տալիս, շատ ծանր, շատ չափաւոր շարժումներով մտքերս արտայայտում: Մինչև անգամ արթուն ժամանակս անցնում էի հայելիի դիմաց, ուղղում էի ձեւերս, զննում էի դիմագծերս, ուսերիս, գլխիս տատանումները և յաղթականի խրոխտութիւնով, ինքնաբաւական ժպիտով տարածում էի թիկնաթոռիս մէջ, աչքերս խփում, սուսում էի մտածումների անյատակ խորերը:

Վերջապէս երկու զիշերայ ընթացքում կարգի բերի գիտէրտացիաս. միայն թէ հայւանները այցելելուց, եզր կաթը կշռելուց, բովանդակութիւնը, հիւլէները քիմիապէս բաժանելուց և ուսումնասիրելուց յետո, պէտք էր այդ թւերը գետեղել զբաժնիս մէջ: Մինչև անգամ սանտիմետր և կոր կարկին էլ գնեցի, կաթ տուղ եզների ծծերի և պտուկների ծաւալը - երկարութիւնը, լայնութիւնը, տրամագիծը չափելու համար: Մի քանի տարրական գործիքների և աղերի կարիքը մտածելով գնացի գեղատուն, այդ բոլորը ձեռք բերի և գետեղեցի ճանապարհորդական պայուսակիս արկղիկներում: Այսպէս կազմու պատրաստ սպասում էի հինգշաբթի առաւօտին՝ ճանրահանելու:

Իայց ժամերը դանդաղ են սահում, երբ մարդ անհամբեր սպասում է որոշիակ բոպէի հասնելուն: Երեքշաբթի իրիկուսն Պետրոսը Ենովբի հրաւրի համաձայն կրկին մեզ այցելեց: Թէից յետո մի բանի

բարձր ուսում ստացած ինտէլիգենտներ նոյնպէս հաւաքուցին մեր գահիճում և բաւական զւարթ ժամեր անցկացնելուց յետո, Ենովբն ասաց,

— Պարոններ, ես ձեզ հրաւիրեցի ձեզնից մի կարևոր հարցի առթիւ խորհուրդներ խնդրելու. ներեցէք, որ զւարճութիւններից յետո, ձեզ պարտաւորեցնում եմ քիչ էլ միտք յոգնեցնելու: Չատ անգամ ասել եմ ձեզ, որ ես մտադիր եմ մի գիտնական թերթ հրատարակելու, որի մէջ գլխաւոր տեղ բռնելու են գիւղատնտեսական հարցերը: Նպատակս ձեր առաջ պարզելով, ցանկանում եմ, որ ինձ խորհուրդ տաք, թէ ինչ ընթացք տամ այդ ապագայ ուսումնական հանդիսին: Նախ ցանկալի էր իմանալ ձեր կարծիքը, գործի յաջողութեան համար ո՞րն է նպաստաւոր, արդեօք հանդէսը գուտ գիտնական բաժիններով խմբազրել, թէ զբական - գեղարեւոտական մասն էլ ունենալ:

— Այդ հարցը դնելով աւելորդ է, ասացի, դէմքս սեղմելով, քանի որ արդէն վաղ վճռել ես սոսկ գիտական գործերով զբաղել:

Խօսքս չվերջացրած Պետրոսը ընդհատեց ինձ և ասաց.

— Յայտնի բան է, եթէ լոկ գիտնական լինի հանդէսը, շատ օգտակար կլինի, բայց չի կարող տարածւել մեր մէջ: Մեր ժողովուրդը դեռ այն ատիճանի զարգացման չէ հասել, որ կարողանալ գուտ գիտական հանդէսի կարիքն զգալ և նրան բաւարար բաժանորդ տալ: Թերթը պիտի հասարակութեան համար հրատարակւի, մի բանխնները կարող են օ-

տար լեզուներով այդ ճիւղերին վիարերեալ հանդէսներ ձեռք բերել, յագեցնել իրենց պահանջները, նրանք կարիք անդամ չեն գգայ հայ լեզուով հրատարակելիք գործի: Փողովրդին գիտութեան հետ ծանօթացնելու համար հարկաւոր է դեռևս այդ տրւածները համեմել գեղարւեստական գործերով:

— Անհրաժեշտութիւն է, գոռացին ամէն կողմից և գրեթէ բոլորը ձայնակցեցին Պետրոսին: Ես մնացի մանակ: Թէև մէջ ընդ մէջ մի քանի խօսքեր գլորեցի, պնդեցի, որ հանդէսը գիտական սահմանից պէտք չէ դուրս հանել, բայց ոչ ոք ուշք չղարձրեց իմ նկատողութեան վրա, և ես էլ գգացի սխալս: Երբ Ենովքն էլ հակեց այդ կողմը և ես ընթռնեցի, որ իմ սասածը առաջ տանելն անհնար է, սասացի,

— Ես իսն գրական բաժին ունենալու դէմ չեմ, բայց իմ ցանկութիւնս այն է, որ գիտական բաժինները տիրեն հանդիսին և նրա բուն նպատակը մեր ժողովրդի մէջ գիտութիւն տարածելը լինի: Բայց երբէք վնաս չի լինի, եթէ գեղարւեստական ընտիր երկեր և թարգմանութիւններն էլ ունենան իրենց բաժինը...

— Ուրեմն, սասաց վճռապէս Ենովքը, հանդէսը կունենայ գիտական, գրական և հասարակական բաժիններ: Էլի ես պատուով դուրս եկայ...:

— Ես համոզւած եմ, սասացի, որ մեր բոլոր ինտելիգենտները առանց բացառութեան, բոլոր ազատ մտածող հայ տարրը, ժողովրդի շահերի պաշտպանողները պիտի աջակցեն այս գործին, որը մի վերանորոգիչ գեր պիտի կատարէ մեր մէջ:

— Ասացէք, խնդրում եմ, սասաց Ենովքը հարցն Պետրոսին ուզեցիով: որքան մշտա՛ն բաժանորդի յոյս կարող ենք ունենալ: Գուր խմբապրատնութեամ շատ էր ծառայի: ձեզ ծանօթ է այս գործը և ձեր կարծիքը գերակշիռ է ինձ համար:

— Երիջ հարիւրից ոչ տւել, սասաց ուսերը քաշելով և ճակատը կնճռոտելով:

— Ի՜նչ էր ասում, սասացի բամբիժաղով, ինչպէս կարելի է: Միտջն Թիֆլիսը հազար բաժանորդ կտայ: Հասցա պաւանները:

— Դատարկ յոյսեր են, երեակաութիւններ... Եթէ առաջին տարիները երեք հարիւր բաժանորդ էլ ունենար, պէտք է մեծ յաջողութիւն համարել: Այդ ուսանողութիւնից դիպումներով վերադարձած և շող գիմակները կպած երիտասարդութեան վրա շատ մի վստահիք: Նրանք ճրճուան ֆրագներ շատ լաւ են կ'կշում, խկ երբ հարցը խօսքից գործի է անցնում, խբում են իրենց առօրեայ սրջերը, հաստ հաստ վարագոյրներով ծածկում դռներն ու լուսամուտները:

— Է՛հ, պարոն Պետրոս, դուք էլ ամէն բանի վատ կողմն էր միտջն տեսնում, այդքան յոռետեսութիւնը լաւ բան չէ: Մի բանի այլանդակութիւններ մատի վաթաթան շինել և ամէնին միկնոյն գազով չեն շափել:

— Ափսոս, որ դուք այնքան լաւատես էք, որ կեանքի ներքին ապականւած ստատուր չէք էլ մտածում ուսումնասիրել:

— Ինչպէս չէ, ես այդպիսիներից վաղ եմ

ձեռ քաշել, բայց ախար ընտիր ինտելիգէնցիան, մեր անձնէր երիտասարդներին չի կարելի ուրանալ: Ամէն կողմ, ամէն քայլափոխի նրանց գործերը նկատելի և խրախուսիչ է:

— Խօսքեր, լոկ բաներ և աչքի թող փշել... Մտէք, մտէք կեանքի մէջ, բազմեցէք խմբազրատան թիկնաթուղի և կտեսնէք... Ամէն պոստի հազար բանաստեղծութիւն կտանար, երկու հարիւր խորհրդակցութիւն և հրահանգ, հարիւր քննադատութիւն, յիսուն հեղինակութիւն, երկու - երեք թարգմանութիւն, գուցէ և մի մի բաժանորդագրութիւն, այն էլ ապառիկ: Մեր ինտելիգէնտները գրչի զոհողութեան պատրաստ են, իսկ քսակի սև փողին էլ մի դիպչէք: Այս էլ քիմիա չէ, որ ես չհասկանամ, պարոն Գամաղդաղեանց:

— Էհ, պարոն Գետրոս, ասացի, յափշտակում էք: Մեր հանգէսը խո պառաւած նախապաշարեայների օրգան չի դառնալու, ոչ էլ չոր ու ցամաք, անկապ, աննպատակ և հակասող յօդաւանդների, առաջնորդողների և թղթակցութիւնների հաւաքածո: Մենք պիտի տանք գիտութեան այն ուղին ու ծուծը, ինչով որ մեր երիտասարդութիւնը սնոււմ է, որը նրանց սիրտը բարախեցնում ու տրոփեցնում է: Այնտեղ պիտի շօշափւին այն հարցերը, որոնցով կենդանանում է, ոգևորում է ուսումնասծարաւ ուսանողութիւնը: Մեր օրգանը այնպիսի յեղափոխութիւն է առաջացնելու հայ կեանքի մէջ, որ ոչ թէ նրանից երես են շուռ տալու, այլ անհամբեր ոգևորութեամբ յափշտակելու, խլելու են նրա համարները, քանի որ

նա կեանքի, տպրուստի, դադափարի և իրականութեան առաջնորդ է հանդիսանալու:

— Տար - տար բառեր, որոնցից ոչ ճաշ կեփելի, ոչ էլ տաղակած: Մեր կեանքը ամէն տեսակ դադափարական ոգի խեղդում է, մորթում - թողնում: Մեր տղերքը մեծ քաղաքների կրեսոսների շրջանում, փարթամ - շուայլ կեանքից վարակում, ուսանողական գրասեղանը թողնելուց յետո, պահանջների - մոլութիւնների հեղեղներում խեղդում, ընդհանուր հոսանքի հետ գնում, ծովն են թափւում: Մի քանի տարի անցնի, Թիֆլիսում մի չաղ պաշտօնի կպիր, պ. Մարկոս, բեղ էլ կտեսնենք... ասաց Գետրոսը հեղինելով:

Այլևս դայրոյթս չկարողանալով դսպել, բարձրացայ տեղիցս, մտքումս հայհոյեցի և շրջանը, և նեւթիւն, դուրս եկայ դահլիճից ասելով:

— Դուք քաղաքավարութիւնից տարրական հասկացողութիւն անգամ չունիք, խօսելու ձեռն անգամ չգիտէք և ամէն մի բառով խաթում էք ձեր խօսակցին: Ե՛հ, միթէ ինձ նախատելու համար էք ժողովւել, ասացի, դուռը պինդ լսփելով մտայ պատշգամբը և բորբոքած, արագ քայլերով իջա պարտէզ:

Ո՛չ նեւթի խնդիրը, ոչ բևեի Մարգարի թախանձանքը և ոչ էլ Գետրոսի ներողութիւնը չուգեցի լսել: Լաւ էր, որ նրանք պատճառ եղան: Ես արդէն յոյս չունէի, որ այդ լրագիրը առաջ գնա, քանի որ մեր մէջ Գետրոսի նման գաւառափտունները դաւառներում տնից տուն են անցնում, պան-

դով ու դայֆախանայ այցելում և ամէն տեղ մեծ մեծ քարեր են դնում երիտասարդութեան գործունէութեան առաջն, մեր բոլոր քայլերը կաշկանդում, խոչնդոտ են դառնում ամէն մի սուրբ գործի:

Ինչիս է պէտք հայ զբաղան - դիտական հանդէսը. ես վստահ եմ, որ դիտելըտացիաս պատկանելուն հասնելու պէս, ինձ հրաւէր են կարգաւու ամէն կողմից: Մայրաքաղաքում պրօֆէսորի պօրտֆէյլը թողնել և գալ այս գոեհիկ, յամառութեամբ նախապաշարումների հետ կապաւածներին բան հասկացնելու տաժանելի գործին կպչել: Եւ ո՞վ է գնահատելու, եթէ ինձ նման մի դիտական, թողնի այնպիսի շահաւէտ կարիէրը և գայ մտնի մի այսպիսի շարքաշ լծի տակ:

Յայտնի բան է, յիմար չէի, որ հրապարակապէս այս մտքերս արտայայտէի և գանազան ածականների արժանանայի: Ես նրանց մինչև վերջը պնդում էի, որ նրանք իրաւունք չունէին խորհելու, թէ ես որևէ ժամանակ կարող էի անձնասպաշտ դառնալ, թողնել ընդհանրական, հասարակական գործերը և սուզել իմ ներքին կեանքով, շոայլութեամբ և զեղխութեամբ ապականել:

Երբ ինձ չկարողացան ստիպել, ետ տանել իրենց ժողովը, նրանք էլ ցրեցան: Ես քաշեցի առանձնարանս և կրկին աչքից անցկացրի դիտելուտացիաս: Քանի անգամ կարդում էի, այնքան հրապուրում և համոզում էի, որ անպատճառ տանելու էի մրցանակ, ստանալու էի դոկտորի աստիճան և որ ամենապլխաւորն է — պրօֆէսորի պօրտֆէյլը: Իսկ

զբանից յետո մայրաքաղաքի կեանքի հրապուրը, շրջանները և վայելքը երեակայութեանս մէջ ամենախիստ գոյներով նկարում, ինձ հրապուրում, շշմեցնում էր: Ուրախութիւնիցս թռչկոտում էի, ինձ ամպերի մէջ էի դգում:

Չորերշաբթին էլ մթննց: Գիշեր է և ես առանձնասենեակումս եմ: Ենովըր մի քիչ սառն է շարժում, քիթը կախել է, որ ես նրա հօր բարեկամին՝ Պետրոսին վիրաւորեցի: Այսինքն ես չկպա, այլ նա ինձ վիրաւորեց և ես այնքան քաջութիւն ունեցայ, որ նրան սանձեցի, չթողի խենթ ու խելար դիւին տալու: Մեր բոլոր թերուսները այդպէս են: Ով որ Մեսրոբի տաւերը ճանաչելու դժբաղդութիւնն ունի և երկու բառ իրար մօտ շարելու շնորհ, նա այնքան անձնավստահ, աւելի ճիշտ ասած, այնքան յանդուգն է, որ արհամարհանքով է մօտենում դիտութեան և նրա տաճարներում աշակերտոյններին: Պէտք էր նրան չափը ճանաչեցնել: Վնաս չունի, վազը կհաշաւենք Ենովրի հետ: Երբ նրան հասկացնեմ այդ տիրացուի գէպի մեզ բռնած արհամարական շարժումները, վստահ եմ, որ ինձ հետ համերաշխ ընթացք պիտի բռնէ ընկերս այդ երեակայող ինքնուսի գէմ: Ախ այս հոտած տիրացուները:

Արդէն ձիերը պատրաստ են: Առաւօտ վաղ ճանապարհորդելու ենք դէպի եայլաները: Յնժութիւնից սիրտս տրոփում է և բունը իսպառ փախել է աչքերիցս: Պիտի գնանք և հինգ — տասը ժամից հասնենք այն վայրերը, որտեղ հայ գեղջկուհին իւր սովալլուկ մանուկներին մահւան ճիրաններից փրկե-

լու համար, մրցումի է մտել իւր հարստահարիչների հետ և կեղեքում է իր աշխատաւոր եղին: Այն եղին, որը վարում է ռանչպարի հանդը, կրում է նրա բեռները, լծում է նրա սայլերին, քաշում է նրա կամր, սահնակը, ստիպել է կ'իջելու, պարտաւորեցրել է արիւնից էլ մաս տալու: Ա՛խ, երանի թէ մի քանի ժամ առաջ տեսնէի այդ կաթը, մի քննէի զրա բազդը թիւնը:

Անպիտան Պետրոսը մեզ ընկերակցելու խոստման դէմ դրժել է: Չանտ հարկաւոր է, կարծէս պիտի գար և քիմիական փորձեր կատարէր: Բայց և այնպէս կարող էր պէտք գալ: Այս ժողովուրդը շատ յամառ է, նրա լեզուից այդպիսի տէրացունները միայն կարող են հասկանալ: Ե՛հ, Ենովքի էլ բանը, կարծես թէ հանդէսի մասին անհրաժեշտ էր այդ թերուսների խորհուրդը: Ի՛նչ վիսա կլինէր, եթէ նրանց չյայտնէր իւր նպատակը: Ի՛նչ կորուստ կունենար, եթէ այս ճանապարհորդութիւնից յետո հրաւիրէր նրանց խորհրդի:

Ես էլ, ասենք, շատ անտակտ վարուցի: Ի՛նչ հարկ կար կուելու: Մի ուրիշ պատճառ կարող էի ճարել և իսպառ հրաժարել այդ հանգէսի հրատարակման մտքից: Կեանքումս այսպիսի քաջութիւն չէի ունեցել և ոչ ոքի դէմ պատիւս պաշտպանելու համար այսպէս արիարար չէի դուրս եկել: Ինքս էլ զարմանում եմ, թէ ինչպէս պատահեց: Որ ասում են, թէ յաջողութիւնը մարդու քաջացնում է, ճշմարիտ է: Գիւտս, այս աննման գիւտս ինձ կատարելապէս արիացրել է և ես ինքս իմ աչքում արդէն ան-

չափ բարձրացել եմ: Եղածն անցել է և ես երբէք չեմ ստորանալ և ետ դառնալ խօսքից:

Գեռ արշալոյսը չէր բացել, հկան մեզ ձայն տւին: Գիշերը երկար ժամանակ անքուն մտորել էի դիւտովս և ուշ քուն մտել, այնպէս որ դժւար բացւեցին աչքերս: Հագնեցինք, ձիաւորեցինք, ճանապարհ ընկանք: Արևադալին արդէն Կարմիր - Դուլի ձորն անցել էինք, անմուռնչ շարունակում մեր ճանապարհը դաշտի միջով: Խաղաղ էր եղանակը, վարդակարմիր դոյնով ծախում էին հեռւում լեռներն ու սարալանջերը և դալարների միջով մեր երիվարները սրադրնթաց սլանում էին: Թէև Յունիսի վերջերքն էր, բայց այս սարահարթում այնքան ցուրտ է լինում նոյն իսկ ամառն անգամ, որ ձմառն վերաբերուներս հագնուել և կոճկել էինք՝ պաղից զգուշանալով:

Երբ արեգակն անաջին ճառագայթներն ընկան լեռների գողաթին, ձիերը խրխնջացին, ոսկեփայլ ճաճանչները ցրեցին ու տարածւեցին հորիզոնի շուրջը, ընկերս ասաց.

— Մարկոս, մենք շատ սխալեցինք, որ համագրեստով և աստղանիշ գտակներով ճանապարհ ընկանք: Թէև մի կողմից լաւ է պաշտօնական զգեստը, մեզ պատիւ կտան և վտանգից ապահոված ենք, բայց մեզ հետ մտերմաբար չեն վարւիլ: Գեղջկուհին այնքան սև ու մաւղ օրեր է տեսել, այնպիսի դահիճների տանջանքներին է մատուել, որ շատ զգոյշ և ծայրահեղ գաղտնապահ է դարձել, կասկածելով նոյն իսկ իւր հարազատների վրա:

— Բան չունես, ասացի Ենովբին, ով գլուխ ունի նրանց հետ իրենց առտնին և ներքին գործերի մասին խօսքի մտնելու: Սրանց հետ եթէ մտերմաբար խօսեն, կբարձրանան մարդու գլխին կնատեն:

— Գու էլ իրաւունք ունիս, կակազեց լնկերս, և առանց երեսիս նայելու առաջ անցաւ: Ուշքս միտքըս ամբոջապէս կենտրոնացած էր գիւտովս և ես անվերջ խորհում էի դիւելրտացիաս լրացնել կարևոր քննութիւններով, բազմակողմանի բացատրութիւններով: Հինգ ժամ յետո հասանք Ղազանչի, որտեղ ձուակեղով, սերով և մածնով փորերս կշտացրինք, թէյերս խմեցինք, ժամը չորսին ճանապարհը շարունակելով գիշերից էլ մի ժամ անցած հասանք Եայլա: Գեռ վրաններին և քոխերին հասնելու կէս ժամ ճանապարհ ունէինք, երբ սկսեցին պահապան շները ամենակատաղի ձայնով հաչել: Մինչև Եայլա հասնելը, արդէն ամենախոր քնով խորթացող պահապաններն ու հովիւները, պառաւներն ու հարսաղջիկները ոտքի էին բարձրացել, պատրաստել էին որևէ յարձակման դիմադրելու: Կարծես մենք աւազակներ լինէինք: Եյնքան կատաղի էին հաչում գամփռները, որ մեզ դիմաւորող պահապանների ձայնը, ասածները չէինք կարողանում լսել, հասկանալ: Երբ բոլորովին իրար մօտեցանք և մի առաջնորդը նրանց հաղորդեց մեր մասին, անմիջապէս ամբարանոց լուր հասցրին նրանց հանգստացնելու համար: Մենք էլ նրանց օգնութեամբ, դամփռների ժանիքներից ապահով կարողացանք հասնել բնակարանները և մի սև վրան մեզ առաջնորդեցին հանգստանալու: Այդտեղ մի ձը-

ձում նստող չորացած պառաւ, իւր փայլուն աչքերով, ցից քթով ու կզակով, առանց տեղից շարժւելու մեզ թեթև գլուխ տւեց ու ասաց.

— Հրամանեցք, հրամանեցք, դուք իմ աչքիս վրա, դուք իմ գլխիս վրա, բարձով, ձեր գալուստը հազար բարձով...

Իսկոյն նորատի երկու կին, որոնց գլուխները և դնչները կապած էին գունաւոր թաշկինակներով, ներս մտան, սէրգի և վրան էլ մինդար փռեցին ու մեզ առաջարկեցին դրանց վրա ծալապատիկ նստել և կարպետի բարձերին յենել: Աղօտ լոյսով կիսով չափ լուսաւորւած էր վրանը ձիթի ճրագով, այնպէս որ հազիւ կարողանում էինք իրար դէմք նկատել: Աղտը, ծուխը, ձենձն ու իւզը իրար էին խառնել այն աստիճանի, որ անվարժ աչքի ու քթի զգանք էր պատճառում ամէն մի առարկա: Նորածին հորթը, ուլիկն ու գառնուկը, բալուկի մէջ փաթաթւած մանկիկների հետ մրափում էին վրանի մի անկիւնում, միւկնոյն թաղիքի վրա: Մի ուրիշ անկիւնում պտուկներն ու քուղաները, պանրի տկերն ու մածնի պարկերը շարան շարան իրար վրա էին դարսւած, փայտի, գաղի մանրուքի և աթարի հետ: Աւելի հեռուն մի չափահաս կին երեխաներին կողքերին բնացրած լանոցի էր հարում և անդադար կարագը դուրս հանում լցնում առաջը զրւած բաղիան: Անդադար հոտաղները, մշակները ներս ու դուրս էին գնում գալիս և մի ալևորի կարգադրութիւնները կատարում: Օղը թէև ցուրտ, բայց չոր էր և կազդուրիչ, ապա թէ ոչ տարափոխիկ հիւանդութիւնները իրենց բունը

չէին հեռացնել այս թշուառների որջերից:

Դեռ չէինք հանգստացել, սեղան դրին, սուստ սեր, մածուն, կարագ և պանիր մատակարարեցին: Սաջի վրա եփուած լոշ հացը քիչ սև էր և խմոր, բայց սարի գլխին այդպիսի մանրամասնութիւնների մէջ չէր կարելի մտնել: Հրճանքով ուշքս կենտրոնացրի պանրի կոտրած պնակի վրա, փնտռածս էր: Ամէնից առաջ նրա համին նայեցի: Թէև թարմ էր, շատ քիչ ազած, բայց արդէն խեղդում էր: Երևում էր, որ վրանի հրամանակալ ջաղին Եղների գլխաւոր կեղերիչն էր և նրանց ստինքը ցամբեցնել աւոզը: Պանիրը մի տեսակ հոտ ունէր, որից կարելի էր նշմարել, թէ դա կովի կաթից չէր կարող մեկարդուած լինել: Հրճանքս այնչափ էր, բայց ինքզինքս երբէք չպէտք էի մատնել: Լուեցի և չթողի, որ Ենովքը զզացումներս նկատէ:

Հետեւեալ առաւօտ շատ վաղ վեր կացա: Ժրագլուխ հարսները մթնէմութ նախիրը կթել ճանապարհ էին դրել, ոչխարի մեծ մասը կթել, պրծել էին: Առանց ուշք դարձնելու շների յարձակումներին ամէն կողմ դնացի, բայց ոչ եզի, ոչ էլ կովի չպատահեցի: Կաթնաշափը և գլանապիկը ձեռքիս կշռեցի ոչխարի կաթը, գննեցի համը, հարցաբննեցի և չափչփեցի ամէն մի ոչխարի տուած կաթի քանակը, բերի լուծեցի բացատրութիւնները, որպէսզի Ենովքին համոզեմ, թէ զբաղուած եմ միմիայն ոչխարի կաթի ուսումնասիրութեամբ: Որ վրանը, սր քոխը որ մտա, նշատեցի որ զբաղուած էին ոչխարի կաթից պանիր կտրելով, կամ խնոցի էին հարում:

Ենովքն էլ շքի ողէս պոչիս կտակից ման էր գալիս, այնպէս որ հարց արձնելու միջոց չէի գտնում: Երբ յոգնածութիւն կեղծելով եկա մեր վրանը, տարածուեցի, Ենովքն ասաց. —

— Իու ճանապարհորդութեան մէջ տխուր ընկեր ես, ինչ ես խորասուզել: Ես չեմ ուզում փակել այստեղ, եկ գնանք լճի ափ, ձկնորսներին սէյր անենք, ձուկ որսանք:

Անհանգստութիւնս պատրուակելով նրան ճանապարհ գցեցի: Երբ առանձին մնացի, իսկոյն առթից օգտուեցի և հիւրընկալ պառաւից հարցրի.

— Նանի, ձեր եզներին որտեղ են արածեցնում, ինչի հովիւները նախիրները բերին, իսկ եզներին չմօտեցրին:

— Ադա՛ չան, ասաց քաթառը ոլորելով, եզները հանդում գութան են վարում, հերգ են աւնում:

— Միթէ եզները կայլա չէիք բերել:

— Բերինք հինգ տասն օր դինջացրինք, բայց գութանի ժամանակն էր, մի ամիս կլինի, որ տարան լծեցին: Ախար դիւզացու ապրուստը գութանն է, որ չհերգենք, քաղցած կկոտորենք:

Ջգացի, որ երկչոտ պառաւը վախեցաւ հարցից և նա աշխատեց ինձնից թաղցնել եզներին: Իրիկունը թարմ եզի պանիր էի կերել, ինչպէս կարող էի հաւատալ, թէ եզները մի ամիս առաջ տարել էին գութան վարելու: Եթէ նորանոր հարցեր տայի, պառաւը խալառ ինձ մոլորեցնելու էր, իսկ ես չպիտի կարողանայի կարևոր տեղեկութիւններ

ձեռք բերել: Երբ մտածում էի բռնակալը ընթացքիս մասին, քաղթառը աչքերը շփշփացնելով և դեմքի կաշին ծրմուելով, իբրև ծիծաղ ձևացնելով, վախվիսելով հարցրեց.

— Ազն, դուք դեղատուր (բժիշկ) էք, թէ ինչին էր... Ես ասում եմ դեղատուր էք, իսկ մեր մարդը պնդում է, թէ ինչին էր էք:

— Ոչ էն ենք, ոչ էլ մէկէլը, ասացի պառաւին, մենք կաթնատնտեսութիւն ենք սովորում, որ պանիր կտրենք, կարագ շինենք, կով պահենք...

— Վայ, հողը գլխիս...: Ազն ինչի էք մեր վրա ծիծաղում: Էդ ինչ բան է, որ դրա համար Մոսկով երթաք, է՛րքան խարջ ու ծախս անէք...

— Հաւատան, նանի, մենք էլ ձեզ պէս ախոռ ենք մաքրում, կով ենք կթում, կարագ ենք շինում...

— Զէ, ազն, չէ, կատակ մի անէք: Ես դիտեմ, դուք դեղատուր էք: Ընցած տարի եկան մեր գեղը, ասին ցաւ է, հարիւր կով և եզ վառեցին: Ա՛խ, իմ քեայաշն ու դաշխէն էլ խլեցին ձեռքիցս և գլորեցին...: Եստուած գիտէ, այդ կովերս ժմին մի մի բուղտ կաթ էին տալիս: Թէ դուք էլ եկել էք հիւանդութիւններին մտիկ անելու, ազիզ արեզ վկա, եայլայում մի հիւանդ անասուն չկա:

— Զէ, նանի, չէ: Գու մի վախենալ: Մենք ոչ բժիշկ ենք, ոչ էլ այդ գործով ենք եկել: Բայց ոչ մի վստահութիւն չկարողացա ներշնչել պառաւին: Մտորմունքը ինձ պատեց նորից: Ես ինչպէս համոզելի պառաւին, որ մենք այդպիսի գործով չէինք

եկել: Յոյսս կորցրի, տխրութիւնը ինձ նորից պատեց, ըմբռնեցի, որ դրանք մեզանից շատ խիստ են վախենում և հնար չալիսի գտնելի նպատակիս հասնելու:

Իրիկնաղէմին նորից բերին ուխտաբը, կովերը կթեցին, տարին, բայց ոչ մի եզ չկարողացա տեսնել: Մօտեցա նախիրին, լաւ գննեցի, չկար ու չկար: Ենովքն էլ ուշ վերադարձաւ: Մտածմունքից անձիւս մըսն էի ուռում: Ուզեցի սիրտս բանալ ընկերոջս, բայց զգուշացա, եթէ դադոնիքս խմանար, անպատճառ կարող էր շտապել և գիւտը ձեռքիցս խլել: Լաւ կարմրախայտ ու զեղարբունի էր բերել, խաշեցինք, ընթրեցինք և ընկանք, քնեցանք:

Երկրորդ առաւօտ արշալոյսին վեր կացա, հագնեցա և դադտակողի դուրս եկա վրանից: Հարսները նախիրն էին կթում: Ուզեցի անմռունչ նրանց մօտենալ, շները քիչ մնաց ինձ բզկաէին: Հազիւ դադանների ժանիքներից ազատուած մօտեցա մի քանի կթանների, բայց արդէն ամէն կողմ զգացել էին իմ դուրս գալս և դգուշութեամբ միջոցներ ձեռք առել: Ոչ մի կողմ մի հատ եզ չտեսա: Գործիս անյաջողութիւնը ճաքեցնում էր սիրտս: Լճակի ափերում բազեր շատ էր տեսել Ենովք: Ես հրացանները վերցրեց և մեր առաջնորդի, ծառայի հետ գնացին որսի, ինձ նորից մինակ թողնելով: Ինչ միջոցի դիմեցի, պառաւից մի խօսք անդամ չկարողացա դուրս քաշել: Իսկ մնացեալ կանայք ինձ հետ չէին էլ խօսում:

— Ա՛յ, նանի, ասացի վերջապէս վրդովւած,

ասում ես եզները տարել են հանդը դալթան վարելու, բնա այդ եզի պանիրը որտեղից մակրղեցիր:

— Վնյ, հողը գլխիս, ասաց նորից բաւթաւը, եզից էլ կաթ կլինի, որ պանիր կտրեմ: Մեզ ինչի ես ծաղրում, ազն ջան...: Չիլի եկել էք եզների վրա նոշ խարջ, նոր հար՛լ դնե ու...:

— Երանր բաւթաւ, ասացի նորա շարժումները տնազելով, ինձանից ինչի ես թնայցնում. ես ամէն բան գիտեմ: Մի վախենալ, ինձնից ձեզ վնաս չի հասնել, ասա, որտե՛ղ էք կթում եզներին:

— Ողորմած Աստուած, ասաց պառաւր թեերը երկինք բարձրացնելով, էս ինչ բան են ասում: Ազն ջան, ինձ խեղարի տեղ ես դրել: Եզն էլ կկթւի:

— Է՛յ քաւթան, ջաղո՛ւ, ինձ մի յիմարացնիլ: Ետա, սրտեղ էք կթում եզներին և ինչպէս: Մի աման ինձ եզի կաթ տուր, տեսնեմ ինչ համ ունի, ինչ գոյն ունի. մի ցոյց տուր տեսնեմ, ինչպէս էք կթում, քեզ բան մանէթ տամ, երեսուն մանէթ կտամ, ասացի ու ոսկիները բոով առաջարկեցի պառաւին:

Քաւթաւը միմոսաբար ծիծաղեց ու երկինք աշեց:

— Աղա, Աստուած գիտէ, այդպիսի բան չը կա:

— Հոպա այն ինչ թաժա պանիր էր, որ մեզ ուտեցրիր: Յոյց տուր տեսնեմ, թէ ինչ կաթից ես պատրաստել:

— Կովի պանիր է աղա, ոտքերիդ մատանդ, գնանք տաշտում կաթը փռած եմ, տես, քննէ: Քիչ

յետո նորից պիտի մակրղեմ, քեզ ցոյց կտամ ամէն բան: Ե՛կ, միասին գնանք և տես կովերին է՛է...

Համաձայնեցի, գնացինք գետնավոր մառանը, որտեղ տաշտերի մէջ մեծ քանակութեամբ կաթ էր լցրած: Իսկոյն գործի կալա, լցրի ապկ գլանակը և աստիճանաշաւը մէջը ցած թողի: Քաշը կովի կաթից ծանր էր, ջրայինը շատ, իւղայինը քիչ: Կաթը քիչ թթւած էր համ տալիս, աւելի կարուկած և ինչ որ անսովոր հոտ ունէր: Իրեթէ բոլոր տաշտերի կաթը կշռեցի, մէկը միւսից տարբեր աստիճան էր ցոյց տալիս, այնպէս որ շարեցա: Այսպիսի օձ պարածող ջաղուններից միթէ հնարաւոր է բան հասկանալ: Այս կաթը հին է, ասում է, այս երեկանն է, այս մէկէլ օրւանն է, և անվերջ հէքիւթներ: Ջգուշութեամբ աստիճանները նշանակեցի յիշատակարանումս, համը հոտը արձանագրեցի և նստա խոշորացոյցի տակ գնեցի կաթիլները: Տարբեր, տարբեր տեսարաններ, անհնարին է բան հասկանալ և եզրակացութեան հասնել:

Միևնոյն տաշտի կաթիլներն անգամ իրարից տարբերում էին, ուր մնաց միւսները: Բաղադրութիւնը կովի կաթին մօտ էր, բայց ինչ նշանակութիւն ունի, իշու, ձիու, այծի, խոզի կաթերն էլ այդբան իրար նման են: Միայն ակնայայտ էր, որ արիւնային մասը սովորականից շատ էր և մեծ քանակութեամբ ջուր էր բովանդակում: Իւզ գրեթէ չունէր: Ուզեցի լուծել բաղադրութիւնները, իսկոյն փտորեց, պանիր դարձաւ: Պառաւր պղնձի տակ կրակ վառեց, կաթը սկսեց տաքանալ և մակարղել աղած

ստամոքսի մանրուքով: Իրար ետևից շէքեփով քաշում էր դուրս սլանիքը, մանածի նման կաթում, կաժ կաժ գցում խոնչի վրա քամելու:

Պանիրը եղի էր. բայց ինչ օգուտ, որ կթան եղներին չկարողացա տեսնել: Պառաւի ստելը ակներև էր, կովի կաթը երբէք այդպէս չոր ու ցամաք սլանիր չէր կարող արտադրել: Տեսարանները լաւ գննեցի, տխուր քաշեցի վրանը, խորասուզած այն մտքով, թէ ինչ միջոցով հասնէի նպատակիս: Ո՛չ երջիւղը, ո՛չ խնդիրքն ու փաղաքշանքը, ո՛չ էլ կաշառը չնպատեցին: Ընդհանրապէս քաթառը նորանոր հնարներով աշխատեց ինձ յիմարացնել և հաւատացնել, թէ նա միայն կովի կաթից պատրաստեց այդ խեղդանը: Որոշեցի այնպէս ձևացնել, իբր թէ հաւատացի և ծրադիրս պատրաստեցի:

Ննովքը բաղերի և զեղարբունիների որսերով բեռնաւորւած եկաւ և ահագին գործ բացեց եայլի հարսների համար: Սկսեցին փետրել, մարբել և ընթրիք պատրաստել: Բոլորը սեղանի պատրաստութեամբ էին զբաղւած, իսկ ես... Եզան պանիրով: Այս հարցը մեխ էր դարձել և դամել ուղեղիս մէջ, քունս էր կտրել:

Երշախոսից մի երկու ժամ վաղ զարթեցա և սողալով կամաց դուրս եկա վրանից: Նկատեցի, որ դեռ շատ վաղ է, բոլորը քնած են և հարսներից մէկը երեխային ծիծ էր տալիս: Մի որևէ պատրուակ բռնեցի և կրկին ներս մտա պառկեցի: Յայտնի բան է քունս փախել էր, մանաւանդ նախնթաց օրը մենակութիւնից ձանձրացած մի երկու ժամ քնել էի:

Մի կէս ժամ շանցած սլառաւր կամաց մօտեցաւ հարսներին, ոտքով հրեց, հրմշկեց և զարթեցնելով ասաց.

— Վեր ելէք, կանգնեցէք. նախիրը բերին:

Իսկոյն հագնեցա ես էլ և երբ նրանք դիմեցին աղչները, ես էլ հետեցի. Յանկարծ ետևիցս մի զոյգ դամբու հասան, սրունքներիցս կծեցին և ինձ գլորեցին: Բարեբախտաբար ռեօլներս ձեռքս էր, ճիգ արի և մի երկու հարւածով կրակ պարպեցի: Գամբուները թէև բիշ հեռացան, բայց խսկոյն էլի վրա տւին և ինձ ատամների տակ գլորեցին: Ցաւից և երկիւղից ուշքս անցել էր...: Սթափուկի վրանում, տեսայ որ Ննովքը վերքերս է կապում. Ժանիքները բաւական խորն էին թափանցել մսիս մէջ և սաստիկ ցաւում էին վերքերս: Ննովքը լնէ՛ անպատճառ պէտք է շտապել, բժշկի օգնութեան կարիք կա: Գուցէ հարկ լինի Օդեսա գնալու, կատարած շան խայթւածքի դէմ պատուաստելու:

Համակերպեցի: Տարաբաղտաբար առանց մի կթան եղի երես տեսնելու ետ դարձա, բաւականա՛նալով ձեռք բերածս տեղեկութիւններով: Շտապ շտապ զրեցի դիտերտացիաս, այսինքն պակասորդները լրացրի. Քիչ ու միչ սխալ կարող է պատահել, բայց ինչ կարելի է անել, բաղդս չբերեց, մանաւանդ որ մահկանացուն միշտ սխալական է: Ամէն մի զիտնական գործ մօտաւորապէս մօտ է ճշմարտութեան, կատարեալ ճշմարտութիւն գոյութուն չունի արարածների աշխարհում: Գործս պոստին յանձնեցի և ապալրեցի, որ պրօֆէսորներին հասցէլին

տրւի, իսկ նկարագրութիւնս խմբագրութեան, որ  
ամբողջ աշխարհ չաւ անեմ գիւտս:

Միթէ կարելի է կասկածել, որ ես մի այս-  
պիսի աննման գիւտով, այսպիսի զգրղեցնող նորու-  
թիւնով չպիտի արժանանամ դոկտորի, մագիստրի  
աստիճանի և չպիտի ստանամ կաթնաստնատեսութեան  
պրոֆէսորի պրոֆէսոր...: Երբա՞ծ: աշխարհ թող  
խմանա, թէ ինչքան հանճարեղ է հայ գեղջկունին, որ  
եզլին կթելու է ընտելացնում և մանաւանդ իմ հոչա-  
կը, որ ես խաւարից լոյս աշխարհ հանեցի այս ա-  
հաւոր գիւտը: Չուտով ձեզ կուզարկեմ իմ դոկտորի,  
մագիստրոսի և պրոֆէսորի վկայականներէս պատ-  
ճէնը, որպէս գտիչ:

Եզի Պանիրի:

Նոյեմբեր 1902 թ.

Թաւրիզ.



Բ

# Չ Է Ք - Օ Ն Ա Ն

# Չ Է Ք - Օ Հ Ա Ն

ԱՐԳՄԾ

Սրանից քառասուն - յիսուն տարի առաջ, երբ  
ղեռ սուղեք հաստատուած չէր, Նարսիս Իւանիչը Նրե-  
ան մալրով ( գառաւոր ) էր: Ամբողջ Արարատեան  
աշխարհի դատն ու գառաստանը նրա ձեռին էր,  
կտրածը, կապածը, զրածն ու ճգածը ոչ թէ գու-  
բերնասոր, նամէսնիկը, սկնասն անգամ չէր կա-  
րող քանդել, այնքան որ նա հմուտ էր օրէնքներին  
և այնքան խտուրթեամբ հետևում էր պետական  
կարգերին: Կրօմը, վճռածը անդառնալի էր, մարդ  
չէր կարող նրան իր ընթացքից շեղել, ուզածին  
զրախտ, չուզածին Սիրիբ էր բշոււմ, սիրածին թախ-  
տի, առածին կախաղանի էր բարձրացնում: Այլ կա-

րող էր նրա առաջ յանդգնել ու ասել, « — Նարսիս Իւանիչ, աչքիդ վերե ունը կայ: » Նա կրակ կտրած ռոզգի, դամղա, բալաբան, կազախ ու դահիճ էր պահանջում և հրամայում էր այդպիսի ըմբոստին տանջել, մաշկից տիկ հանել: Ո՛չ որ չէր համարձակել ձայն բարձրացնել նրա ներկայութեան, լեզուն ու շուրթները շարժել և երկու խօսք արտասանել: Նա սիրում էր, որ իրեն շրջապատողները պատերի նման համը լինէին, կոճղների նման անզգայ և ոչ խարի նման հետևող: Խեղճ ժողովուրդը լուր ու մունջ գլուխ էր թեքում, ուշադրութեամբ լսում նրա պատգամները, լրացնում պատւէրներն ու հրամանները, բաւականացնում պահանջները և սրտատրոփ դողում էր, որ չլինի թէ դատաւորը դժգոհի ու գայրանա իր դէմ, տուգանքի ու տաժանակիր աշխատանքի մատնէ: Նարսիս Իւանիչը այսպէս տասը տարի մովրովի աթոռին բազմած կրակ էր շաղտել Երևանցիների գլխին, նրանց կաշիից տիկ էր հանել, գառի գառի լացացրել էր: Անխիղճ դատաւորի շրթունքի շարժումը, կզակների տատանումը պատգամ էր դարձել ժողովուրդի համար, ահաբեկել ու սարսափացրել էր:

Յայտնի բան է, ժողովուրդը բնդհանրապէս չի սիրում դատաւորներին, բայց Երևանի սոզաբնակութիւնը հայ-թուրք, ո՛չ միայն գզւում էր այս կաշի բերթող մովրովից, այլ մինչև անգամ նրա չորչրիկ սև ու դեղին երեսը, օձի աչքերը, նեխած բերանն ու պնչները, ժահրոտ ականջները տեսնելը ամենամեծ անբաղտութիւնն էր համարում, այս պատ-

ճառով խոյս էր տալիս դատից ու դատաստանից, մովրովի տանից ու դռնից, նոյն խի վողոցներում հանդիպելուց: Նարսիս Իւանիչը օրիցօր աւելի դաժանանում էր, երբ գզւում էր, որ հասարակութիւնը նախապատիւ էր համարում զրացուց գրկել, կարողութիւնից ձեռ վերցնել, անժանօթից, կամ ծանօթից նախատել, մինչև անգամ սրի ու դնդակի վերքերի ցուերը անմոռնչ տանել, քանթէ գնալ դաժան ու կաշառակուլ դատաւորի ճանկն ընկնել, տանջել, մաշել, հացի պատառից գրկել: Այս միտքը մովրովին ո՛չ գիշերը թողնում էր քնելու, ո՛չ սեղանի վրա՝ ճաշելու, ո՛չ էլ դնջանալու: Անվերջ մտատանջութիւնները քամել էին նրա արիւնը, ցամաքեցրել ուրբների ծուծը, կակկայրել ոսկորները, մնացել էր Նարսիս Իւանիչի լոկ ջղերն ու մաշկը, որոնք անբնդհատ սրտում, դողդոցում, ցնցում էին երաժշտութիւնից էլ, խօսակցութիւնից էլ, քամիից էլ, ամենաթեթեւ շշուկից էլ, այնպէս որ շարաբազտ դատաւորը հանդստութեան կարօտ էր մնացել:

Որբան մարդիկ խոյս էին տալիս մովրովից, սա այնքան մարդատեաց էր դառնում, առանձնութեան, մենութեան դատապարտած՝ աշխարհի վրա լաւ բան չէր տեսնում, ամէն ինչ մուայ, մթին ու նեխած էր թւում նրա աչքին ու քթին և վնորում էր կեանքի ամէն մի երևոյթ, մարդկային ամէն մի յօրինւած: Նա չէր հաւանում վաճառականների գործարաններից բերած կերսասը, կասկածելով որ իրեն խաբում են, աժան, անպիտան ապրանք են նւէր բերում: Նպարափաճառի մթերքը դառն ու ան-

համ էր թուում դատաւորի քմբին, շարարն անգամ լեղի էր համ տալիս նրա շրթունքներին, դինին անգամ՝ բացախած, մրգերը՝ լեակ ու ազույած հաց-թուխի բորոնը՝ կծւած: Երգիչների ձայնը վառ էին բաղ-խում նրա ականջներին, ջութակի, սընդի, դաշնա-մուրի ձայնը՝ խզխզած, եկեղեցու մեղեդիները՝ ազաւաղած, գինւորական երաժշտական հնչական գործիչները՝ ճաթատած: Կիւնի նորածն հաղուստ-ները, պաշտօնէականների համազգեստները այլանդակ ու անճոռնի էին թուում նրա աչքերին: Երբ հեռւից լսում էր ժողովարդի դարձութիւնը, երգը, պարը, հանդէան ու հարսանիքը, նրա կրքերը լիստ բորբոք-ւում էին, կատաղութիւնից փակում էր տան խոր-քերը՝ ներսէներս, որ ոչ տեսնի, ոչ լսի, գուցէ ջղա-յին ցնցումներից ազատւի, բայց միտքը — երեւա-կացութիւնը այդտեղ էլ նրան տանջում էր, ամբողջ աշխարհը — բնութիւնը հրէշային պատկերներով էր նրան ներկայանում, ցնցում էր, ջղաձղում, թէև նա աչքերը փակում էր, ականջներում բամբակ թխում, ուղում էր անզոյացած նիհրին անձնատուր լինել: Ամէն առարկայ նեխւած հոտ էր ներշնչում նրա հո-տոտելիքին, որից ազատելու համար, նա առաւո-տից մինչև իրիկունք թախտով էր լցնում պնչները: 2 էր կարողանում ըմբռնել, որ նեխումը իր մէջն էր կենտրոնացած, ինքն էր տպականւած, բայքայւած ու փշրւած, ինքն էր ամէն բան ծուռ տեսնում, վատ լսում:

Սարսափելի կերպով զղւած էին նարսիս Ի-ւանիչից նրա ստորագրեալները, նա չէր հաւանում

ոչ մի դրութիւն, ոչ մի գեղազրութիւն, ոչ մի շա-րադրութիւն: Իրեն ներկայացւած պաշտօնաթղթերը կարգալիս խազմում, փոփոխում, աւելայնում, սլա-կասեցնում, յաճախ պատառում և ստիպում էր նո-բերը գրելու: Նա չէր հաւանում մինչև անգամ իր ուղղած փոփոխածները, ջնջում, ջնջոտում էր և այս գրաւածները, մինչև յուսահատ պաշտօնակալները գողգոլալով նրան յիշեցնում էին, որ ներկայացւած-ները իր ուղղած, կամ թէլաղրածներն էին: Նա չէր հաւանում մինչև անգամ իր նախորդ օրը գրած-ները:

Մարդատեսացութիւնը այնտեղ էր հասել, որ նար-սիս Իւանիչը կնոջ կեանքն անգամ դառնացրել էր, այս խղճալի արարածն էլ չէր ցանկանում տեսնել իւր դահիճ ամուսնին, որի ճիրանների մէջ ծիրուում ու հիւժւում էր: Որպէսզի միակութիւնից և ջղային տանջանքներից ազատւի՝ նարսիս Իւանիչը անձնա-տուր էր եղել ոգելից խմիչքներին և մտերմացել թղթախաղի սեղանին: Այնպէս էր կապւել խաղին, որ նա դարձել էր կլուրի մշտնջենաւոր, անբացակայ անգամը: Ամէն իրիկուն՝ մինչև կէս գիշեր խաղի սեղա-նից չէր բաժանւի, անմոռնչ նա շարունակում էր խաղը մինչև վերջը, առանց փոփոխելու երեսի կնճիռները: Թէև խաղընկերներից ոչ որի չէր հաւանում, ոչ մէ-կին մարդատեղ չէր դնում, ոչ մի ուրիշ նիւթի մա-սին խօսք չէր փոխանակում, բայց մտատանջութիւ-նից միառժամանակ ազատելու տենջով նա մեքենա-բար շարունակում էր թղթախաղը: Մովբովը չէր սիրում խաղի մէջ ոչ պարտ մնալ, ոչ էլ պահանջա-

տէր, նա ստիպում էր, որ խաղընկերներն էլ խիստ պարտաճանանչ լինին: Այսպէս նարսիս Իւանիչը անցկացրել էր քառասունը հինգ տարին, բայց հինգ տարի դատաստանական ծառայութեան մէջ:

Մի գիշեր եկան նարսիս Իւանիչին յայտնեցին, թէ կինը ազատել և նրան մի արու ժառանգ էր աշխարհ բերել: Այս աւետիսը թէև մեծ հաճոյք պատճառեց մովրովին, բայց նա սովորական դիրքը չփոխեց, խաղի սեղանից չբաժանուեց, մինչև կէս գիշեր: Տուն հասնելու պէս սպասում էր, որ իրեն կը ներկայանան ազգական - բարեկամները շնորհաւորելու, ուրախալի աւետիսով և ժպտալի դէմքով, բայց այնչափ զարմացաւ, երբ տեսաւ, որ դարձեալ լուռ պատերը և արձանները նրան դիմաւորեցին: Անճարացած մտաւ ծննդկանի ննջարանը, բայց այդտեղ այնպիսի մտայլ դէմքերի ու տիպերի հանդիպեց, որ կասկածեց, թէ միգուցէ երեխան մեռած լինի: Նա մտածութեամբ դիմեց պայեկին, հարցրեց, թէ ինչպէս է երեխան, ինչ է պատահել:

— Ազան ջան, ասաց պայեկը կակազելով, երեխան այստեղ է, ողջ է, բայց...

— Ինչ է պատահել, հիւանդ խո՞չէ...

— Հիւանդ չէ, ասաց զոդդալով խեղճ դայեկը, բայց խկի վրան մարդու շնորհք չկա: Ըստ փոքր ու նիհար...

— Փոքր ու լղար լինելուց ինչ վնաս, ես էլ փոքր եմ անձով, բայց խելքով, մտքով...: Ինձ մնացու պէտ չէ...

— Նիհար ու մանրիկ լինելը վնաս չէ, բայց

այնպէս լարծուն. թուլթուլիկ մի գաս է, որ կարծես դորտ, խլիղ լինի: Կարծես թէ ոչ ողնաշար ունի, ոչ էլ ոսկոր, վախենում է մարդ ձեռք տայ:

— Այ դդում կնիկ, ինչ վնաս, որ թուլթուլիկ է, ես էլ խո՞ վայտից, երկաթից չեմ շինւած: Դու թուլութեան մի մտիկ տան, դու դիմացկանութիւնն ասա: Ես էլ բարակ պողպատի նման դողդղում եմ, տատանում եմ, բայց առաջս գոմշից էլ հաստ մարդիկ դողում են, կծկում են, չորս տակ են լինում: Դու էն ասա, ջիւերը պինդ են, ողջ է, շնչում է, մնացեալը կուղղուի:

— Ազա ջան, ասաց յամառ դայեկը մեղմութեամբ, ես ձեր ոտքի տակի հողն էլ չեմ լինի, ես ինչ գիտեմ, հէլբէ՛՛ տմէն բան դուք լաւ էք իմանում: Բայց ահա երեսուն տարի է ես երեխա եմ առնում, տարեկան հարիւր կնիկ ազատել եմ, էս առաջին անգամն է, որ կտալիսի հրէշի պատահել...

— Այդ մասին մի զարմանա, ես քառասուն տարեկան եմ, դեռ ոսկորներս փափուկ է, դա նորածին, խո՞ մետաղից չէ շինւած դրա կմախքը: Իմ որդիս հօրը պիտի քաշէր, խո՞ եզի ոսկորներով չը պիտի օժտէր: Կամաց կամաց կամբաւա, դարդ մի անէր:

— Ինչ ասեմ, ուսերը վեր քաշելով մումնջաց դայեկը, դուք զրքերի մէջ շատ բան էք կարդացած, զակոններից ամէն ինչ տեղեկացած էք, գիտէք, ձեզ զարմանք չի պատճառում, բայց ես անգլտ եմ, չեմ տեսած, չեմ լսած, շւարիկ մնացել եմ: Երեխային աղելուց, լողացնելուց յետո, ինչի՛ լարծունից

չախտի ազատւի, գորտի նման, ձկի պէս ինչի ձեռ-  
քիցս, գրկիցս պիտի պլստէ, ցած պիտի գլորւի:  
Ո՛չ միայն փափուկ, լայրժուն է, այլ մարդի ձեռի  
մէջ չի ուզում մնա:

— Աշխարհում տարօրինակ բան չկա, ասաց  
ժպտալի Նարսիս Իւանիչը և քահ քահ ծիծաղելուց  
յետո տւելացրեց, — նա այնպիսի չնայ է, որ պո-  
չը խալի ի ձեռը չի տալ, չի թողնել, որ գլուխը բո-  
նեն, բերանը սանձեն: Իմ բալէն քօհլան է, քօհ-  
լան, ոսն ու ձեռը բարակ են, բայց որ քացի տա,  
փոքր կգլորէ, մի ճրտիկ տա, սարեք կանցնի: Գու  
լողացրիք՝ նանի, սլարտրդ կատարեցիր, ատը մօրը,  
թո՛ղ ծիծ տալ, մնացածին մի խառնելի: Նա ո՛ւմ  
որդին է, որ քու ձեռում տեղաւորելի:

Թէև մանուկի բնածին յատկութիւնը անչափ  
հաճելի էր հօրը, բայց երեխան օձի նման այնքան  
պող էր, ձկի նման այնպէս լայրժուն, գորտի նման  
այն աստիճանի փափուկ, որ հօթներորդ օրը չկարողա-  
ցան նրան եկեղեցի կնքելու տանել, պարտաւորւած  
բժիշկներ հրաւիրեցին: Պետերբուրգից, Վարշաւից  
եկած գոկտորները շարել մնացել էին: Բոլորը միա-  
բերան ասում էին, թէ այս երեխան մի այնպիսի  
ինքնուրոյն հիւանդութիւն ունի, որի մասին գիտու-  
թիւնը մինչև օրս խաղառ տեղեկութիւն չունի, ուս-  
տի իրենք անկարող են որեւէ օգնութիւն հասցնե-  
լու:

Ընճարացած ծնողները դիմեցին քաղաքի դեղ-  
տուր պառաւներին, էթտարներին, տէքտէրներին,  
մուլաներին, գրբացներին, խորհրդի հրաւիրեցին,

հարցեր տւին, բայց ոչ մէկը չկարողացաւ օգնել  
երեխային, լսողները, տեսնողները գարմանքով հեռա-  
նում էին այդ տարօրինակ հիւանդից: Մովբովը մարդ  
հանեց, ամբողջ նահանգը ման եկաւ, վերջապէս մի  
ղէրիշ գտան, որը յանձն առաւ երեխային բժշկել  
այս անբուժելի առատներից:

Գէրիշը երկար, բարակ քննութիւններ կա-  
տարելուց, կօթն օր, կօթը գիշեր « վեց հազար-  
կայի », թասի տշելուց և ողինների հետ ներշնչումով  
յարաբերութեան մանելուց յետո, պատգամ տւեց,  
թէ պէտք է երեխային կօթն անդամ ձիթհանք տա-  
նել և մամուլի ճնշման տակից ծորած թարմ կտա-  
ւատի ձիթով լողացնել, որպէսզի այդ ախտից ու  
յաւից ազատւի, կազդուրի: Նարսիս Իւանիչը, որ  
տասը տարի տանջւել էր մի ժառանգ ունենալու  
տենջով, գուակին վրկիւու, կեանք ներշնչելու հա-  
մար, հրամայեց անմիջապէս գրբաց զէրիշի հրա-  
մանները կատարել:

Կառքեր պատրաստեցին, ազախիւնները գաւ-  
դարեցին, երեխային բալուկեցին փափիկ շորերով,  
ուխն ծծմօր գիրկը, զէրիշի առաջնորդութեամբ  
տարին Փարաքարի ձիթհանքը, ուխտ արին, ձէթի  
ճշտութիւնը վառեցին և զէրիշը իր ձեռքով մամուլի  
ճնշման տակից ծորած ձիթով լողացրեց երեխային  
և ձիթի աւազանի մէջ նստացրեց: Այս վաւան այն-  
քան նպաստեց երեխային, որ նա մեծ հաճոյքով  
սկսեց շարժւել և լող տալ ձէթի աւազանում: Այս  
լուրից յուսադրւած Նարսիս Իւանիչը ամբողջ մի  
ամիս ամէն օր երեխային Փարաքարի ձիթհանքը

ուխտի դրկեց, ձէթի վաննա նստելու և ձէթով լողանալու: Երեխան անշափ ուրախանում և կայտուում էր, երբ նկատուում էր, որ պատրաստութիւն էին տեսնում իրան ձիթհանք տանելու:

Ձէթի լողարանը թէև նպատեց, երեխան բուական կազդուրեց, մարմնի լարժանը ցամաքեց ոսկորները ամրացաւ, դէրւիշն իւր վարձն արատաբար ստացաւ, հեռացաւ, բայց ձէթի ծորումն ու հոտը երեխայի վրայից չբաշւեցաւ, չանհետացաւ: Երեխայի մորթից, մազերից քրտինքի փոխարէն միշտ ձէթ էր ծորում, ապականում նրա բոլորը օրօրոցը, տեղաշորը, մօրը կուրծքը, հագուստը, աշխիւնների վրադուխը, այնպէս որ բոլորը դանում էին երեխայից ծորած ձէթից և դարշելի հոտից: Որտեղ դիպէր երեխայի դուխը, ձեռք, ոտը՝ ապականում էր, ձէթը ծորում դեզին գոյնը տարածւում, կաշում, ծծում էլ դուրս չէր դալիս: Բրդեղէն, բամբակեղէն թանկագին շորերը, տան կահ-կարարասիրը, պատերը, յատակը ամէնը ներկել, աղականել էր այդ գարշահոտ ձէթը: Ո՛չ սապոնով, ոչ կաւիչքով, ոչ չողանով, ոչ էլ զանազան աղերով ու թթուներով հնար չէր լինում սրբել, մաքրել ձէթի գարշելի ծորածոն և հոտը, այնպէս որ քիչ ժամանակից յետո զգանքով փախչում էին նարսիս Իւանիչի անից բոլոր ծառաները, աղախիւնները, բանաւորները, ոչ ոք չէր ուզում ապականել երեխայից ծորած գաշահոտ ձէթով:

Թէև երեխան քիչ քիչ տոաջ էր գալիս, ուժեղանում, ամբանում էր, բայց նրան հնար չգտան

տաքացնելու, սառն էր, պաղ օձի նման: Որքան շոր էին հաղցնում, սենեակները տաքացնում, անկողինը փափկացնում ու թանձրացնում, ճարը չէին գտնում մանուկին տաքացնելու: Նարսիս Իւանիչը ասում էր.՝ Մի մտածէ՛ք, ես էլ շատ տաք չեմ, թո՛ղ նա ապրի, վնաս չունի, թո՛ղ ջանն էլ սառը լինի: Տաք անձ մարդերից ի՛նչ օգուտ:

Քառասունքին բարեկամները, ազգականները հաւաքւեցան, խորհուրդ արին, որ շուտով երեխային տանեն, կնքեն, գուցէ մեռոնը վրկէ ախտաւորին այդ անբուժելի, գարշելի հոտից, ապականութիւնից: Մայրը ամօթից հակառակում, չէր ուզում եկեղեցի ուղարկել, տէրտէրի, տիրացուի և աշխարհի առաջ խայտառակել, բայց բարեկամների թախանձից, մանուկին փրկելու յոյսից և մովրովի հրամանից ստիպւած զիջաւ, յանձնեց երեխայի բոլորը դայեկին, ուղարկեց եկեղեցի: Բայց գուր, մկրտութեան աւագանն ու մեռոնը չփրկեցին, չառողջացրին, այնքան որ նարսիս Իւանիչի հօրը անուշը կպցրին ախտաւոր մանուկին, Յհան կանչելով տուն դարձրին:

Նարսիս Իւանիչը բնաւ չէր մտածում գաւակի ախտի մասին, նա ասում էր.՝ թո՛ղ սաղ լինի Օհանս, ի՛նչ անենք, վրայից քիչ էլ ձէթի հոտ գա: Եյսպէս չի մնալ, կմեծանա, կանհետանա, հետջը չի մնալ:

Խեղճ մայրը էլ թուղթ ու գիր բացող չմնաց, գեղ ու դեղտուր չմնաց, սուրբ ու ուխտ չմնաց, որ չզիմէր, բայց գուր, ոչ մի կողմից օգնութիւն չհա-

սառ նորա Յհաննին: Թշառ կինը օր ու արև չէր տեսել մարդից, յոյսը կենտրոնացրել էր զաւակի վրա, Յհանն իւր անբուժելի ախտով հալում, մաշում էր ցաւատանջ կեռօջը և իւր սառ մարմնով պաղաղանում էր մօրը սիրան ու թոքերը: Օրովան երէք չօրս անգամ պիտի լողացնէր Յհանին, ամբողջ շորերը պիտի փոխէր, լանալ տար, մաքրէր, որ կարողանար գրկել, գիեցնել, բայց դարձեալ հնար չէր լինում ձէթն ու հոտը չէր կտրւում:

Երբ երեխան երեք տարեկան եղաւ վերցրին տարին հանքային ջրերը՝ Թիֆլիս, Երասթունան և Պիատիգորսկ, բայց դրանք էլ չօղնեցին, երեխայի ախտը մնաց անբուժելի: Գուցէ, եթէ երկար կարողանային յաճախել այդ ջեւմուկները, երեխան առողջանար, բայց վերակացուները նկատելով մանուկից ծորած ձէթը և նրա դարչելի հոտը, մի քանի օրից յետո ջեւմուկի դաները փակում էին Յհանի առաջ և նրանք պարտաւորւած թափառում էին ջեւմուկից ջեւմուկ, առանց որեէ օգուտ ստանալու: Յհանի դլխի, ստքի, ձեռի դիպած շորից, կտորից, բարից, փայտից, աղիւսից ու կրից էլ անհնար էր ձէթը մօքրել, հոտը հականելի: Խեղճ երեխայի դլխից դտակը, ստից կօշիկը, ձեռից ձեռնոցը երբէք չէին հանում, որպէսդի այս ու այն կողմը դիպելիս չապականի սեղանն ու աթոռները, բազմոցներն ու բարձերը, թաղիքներն ու գորգերը, յատակն ու պատերը, բայց հնար չէին գտնում, ձէթը կաշիից էլ, մամշորից էլ թափանցում, անցնում էր, կաշում էր, ծորում էր կահկարասիքի և ամեն մի ամանի մէջ:

Տաժանակրի տանջանքով մայրը մեծացրեց Յհանին մինչև եօթներորդ տարին: Նարսիս Իւանիչը յոյս ունէր, որ երեխան մեծանալով կազատուի ձիթախտից, բայց շարել էր, երբ համոզւել էր, որ տարոցտարի սաստկանում էր նրա մարմնից ձէթի արտածութեամբ: Ինչ գիբր որ տալիս էր հայրը Յհանի ձեռը, երեխան անմիջապէս սալականում էր, այնպէս ձէթը տարածւում էր թղթի մէջ, որ տառերն անընթեռնելի էին դառնում: Մովրովը մտածում էր ուսուցիչ վարձել, երեխային սլատրաստել դիմնադիտն մտնելու, բայց անճրկիկ մնացիկ էր, չէր իմանում, ինչ անէր: Երկար մտածելուց յետո, մի օր կանչեց Յհանին ու ասաց.

— Յհան, սրանից յետո դու էլ իրաւունք չունիս գրչի ձեռ տալու: Դասագիրքը դրասեղանի վրա դրւած է, հեռից նայիր ու կարդա:

— Հապա երեսները ինչպէս դարձնեմ, ասաց Յհանը հօրը դեմքին նայելով:

— Գրագրին կասեմ, որ ըովդ կանդնի, երբ պէտք լինի, երեսները շուռ տա:

Բայց այս միջոցով էլ գլուխ չեկաւ, Յհանը դարձեալ դասագիրքը ձիթոտում էր: Մի օր հայրը չարացած ասաց.

— Այ տղան, բեդ չասացի, թէ ձեռ մի տալ դրքերիդ, էդ ինչի ես էլի ապականել գրքերը:

— Հայրիկ, ախար անշնորհք է գրած, դայրութից մատս վրան դնելու պէս փշացաւ:

— Հա, բալէս, լաւ ես արել, ասաց հրճանքով նարսիս Իւանիչը, ուրախանալով որ որդին ժա-

ուանդել էր կատարելապէս իր բոլոր յատկութիւնները, դեռ եօթը տարեկան հասակից փնորում էր գասագրքերը: Հօր քաջայերից խրախուսւած Օհանը գասագրքի գասերի երեսները մատներով ձիթոտում էր. որ աշատի գասը սովորելուց, իսկ հայրը որդու բնածին ձերբը շխանդարելու մտքով անարտունջ նորանոր գասագիրք էր աւնում, ջանում էր Օհանի ճաշակի գրւածներ գտնել:

Բայց ոչ միայն հայերի, ռուսների, այլ Ֆրանսիացիների, գերմանացիների, անգլիացիների գասագրքերի մէջն էլ ճաշակաւոր բան չգտաւ Օհանը, նա անձնատուր եղաւ Լատինական և Յունական բնտիր հատւածներին: Զօր ու զիշեր Օհանը անդիր էր անում Հոմերի Իլիականը, Վիրգիլի Մշակականը, առանց բմբռնելու, մի բառ անգամ հասկանալու: Այնքան Լատիներէն և Յունարէն անդիր ոտանաւորներ, արձակ գրւածներ սերտեց, այնքան երկար գրանք թթթուում էր, կրկնում, որ բժժեց, յիշողութիւնը, գատողութիւնը իսպառ կորցրեց էլ ուրիշ բան սովորելու ոյժից, կարողութիւնից զրկեց:

Նարսիս Իւանիչը, երբ Օհանը տասը տարւան գարձաւ, տարաւ յանձնեց զիմեազիտն: Թէն այդ ժամանակ հրաժարւած պաշտօնական էր, բայց նրա նախկին դիրքը, աստիճանը, կատարած ծառայութիւնները Օհանի առաջ բացին զիմեազիտնի դուռը և երեխային բնդունեցին երկրորդ գասարան: Տեսուչը անշամի գոհ էր, որ Օհանը Լատիներէն և Յունանարէն գասերը մեքենայաբար անդիր արասաւանում էր, իսկ միւս ուսուցիչները այնքան զգւած էին նրա

մեծամտութիւնից, յոռի գատողութիւններից, որ եթէ համարձակէին, մի ժամ էլ չէին թողնել, որ նա մնա գասարանում: Մանաւանդ Օհանից ծորած ու արտահոսած ձէթն ու նրա հոտը ապականում էր գասարանի օդը, զրասեղանը, յատակը և բոլոր գասագրքերն ու տետրակները: Նոյնպէս խիստ զգւում էին նրանից աշակերտները, որոնք սովորաբար Զէք - Յուան էին կանչում:

Բայց ոչ աշակերտների բողոքն էր լսում տեսուչը, ոչ էլ ուսուցիչների տրտունջը: Օհանը ոչ միայն նրա փնտուած ու գտած աշակերտն էր, Յունարէնը, Լատիներէնը թուլակի նման բերան սերտելով բթանում և ուրիշ բան սովորելու ընթուակութիւնից զրկում էր, այլ տեսչի հլու հպատակն էր ու տեղեկատուն: Աշակերտներից եթէ մէկը որեւէ շարութիւն էր անում, կամ տեսչի խստութիւնների զէմ բան մռմնջում, իսկոյն լուրը հասցնում էր տեսչին, որը հլու աշակերտին չմատնելու համար անորոշ կերպով պատժում էր կրակոտ աշակերտներին, որ պէսզի նրանց սրտի բռնկած կրակն ու կայծը յանգցնէ, դիակնայնէ: Աշակերտներից որմէկն որ համարձակէր Օհանին ձէք կանչել, մովրովի որդին անուղղակի ճանապարհներով նրանից վրէժ լուծելու ճանապարհը լաւ էր ուսումնասիրել: Օհանը այնքան զարգացաւ իւր արհեստի մէջ, որ եթէ ուսուցիչներից մէկը իրեն խէթ էր նայում, կամ որեւէ ուրիշ աշակերտի հետ լաւ յարաբերութեան մէջ էր մտնում, նա կրքերից, նախանձից կուրացած տեսչի ականջը այնպէս էր թունաւորում, որ ուսուցիչը թուչում էր

Խրբիմ կամ Աստրախան:

Օհանը բանը այնտեղ հասցրեց, որ աշակերտները գրգուռեցան բռնակալ և հողեսպան տեսչի դէմ, փոփոցի մէջ նրան այնպէս ծեծեցին, որ նա անճարացած քաղաքից փախաւ, իսկ ուսուցչական խումբը հանգուցեալ մովրովից էլ երգիւղ և ակնածութիւն չունենալով, դիմնադիտնից գուրս արաւ Օհանին, դեռ չորրորդ դասարանը չաւարտած: Թշուառ այրի մայրը յուսալով թէ էջմիածինը կուղղէ, կառողջացնէ իւր ձիթաթոր գաւակը, տարաւ նրան ուխտ և յանձնեց ճեմարան: Բայց մարդատեսաց մովրովի չհաւան գաւակը չկարողացաւ ոչ ճեմարանի, ոչ էլ վանքի վարդապետների հետ հաշտ ապրել: Նա ծաղրելով բոլորին, արհամարելով դասակիցներին, փնորելով ուսուցիչներին թողեց գնաց Մոսկւա համալսարան մտնելու: Երկար տանջւեց, բայց ոչ մաթէմատիկական, ոչ բնագիտական և ոչ էլ բժշկական ֆակուլտետներում չկարողացաւ տեղ գտնել: Վերջապէս Օհանի բազում փոխւեց, իր սիրելի տեսչին արած այլևայլ աներևոյթ ծառայութիւնների համար համալսարանում պաշտօն տւին և սրա շնորհիւ Օհանն էլ գետեղւեց իրաւաբանական ֆակուլտետը: Եօթը տարի տանջւեց, վերջապէս պրօֆէսօրները խղճացին, ձեռք մի ինչ որ թուղթ տւին, ճամբեցին Վովկաս, որ փաստաբանութեամբ պարապի և մի կտոր հաց ճարէ:

Դատաւորի որդին փաստաբան դարձաւ: Դատաստանական ինչ ատենն որ մտնում էր, Օհանի ձիթի ծորումից ու հոտից դատաւորները զզւած

գուրս էին անում, անհետեանք թողնելով Օհանի բոլոր խնդիրները: Օհանն էլ բորբորւած փնորում էր նրանց տաւժ վճիռները և որոշումների դէմ բողոքներ էր բարձրացնում բարձրագոյն ատեան: Նա ոչ միայն վճիռներից չհաւանած տողերը մատներով ձիթոտելով ապականում էր, այլ օր, նսգրքի այն յօդւածները, որոնք չէր ըմբռնում կամ ձեռնտու չէր գտնում՝ ձիթով ջնջոտում էր:

Ովոր դիմում էր Օհանին գործ յանձնելու, նրա գարշելի ձիթախտից զզւած թողնում, փախչում էր: Թէ մէկ երկուսն էր ամօթից անճարացած կտ չէին դառնում, պարտաւորւած գործ էին յանձնում, չապականելու համար պարտաւորում էին նրան ձեռ չտալ և միշտ պիչները բռնած էին բանակցում: Օհանը Մոսկւայից արդէն ծննդավայր, ծանօթների շրջանը չէր վերադարձել, բայց պարտաւորել էր շուտ շուտ բնակավայրերն էլ փոփոխել, յուսալով անծանօթ վայրում յաճախորդ և բարեկամներ գտնել, բայց գուր... Նրանից խոյս էր տալիս ժողովուրդը ինչպէս ժանտախտից (չուսա): Ինչպէս նարսիս Իւանիչը հարստահարութեան և ազահութեան համար ընկերական շրջանից արտաքսւած, միայնութեան դատապարտւած լինելու համար մարդատեսաց էր դառել, այնպէս էլ որդին Օհանը ձիթախտի համար առանձնութեան դատապարտելով ոխակալել էր զարձակեացների դէմ, ատում էր բարեկեցիկներին: Տղամարդիկ նրանից խոյս էին տալիս, կիները զզւում էին, իսկ օրիւրդները կօթը փարսախ հեռու էին փախչում:

Նարսիս Իւանիչը մաշկած, յափշտակածները բժշկի ու թղթախաղի էր տւել, Օհանին բան չէր մնացել, յաճախորդները խոյս էին տալիս, դատաւորները մերժում էին, առանց նիւթականի ինչով պիտի ապրէր: Նա շատ երկար ժամանակ երազում էր օժիտաւոր կին ճանկել, բայց նրա ձիթի հօտը ինչ մատաղահաս օրիորդի բժին որ կաշում էր, սոսկումից և դղւանքից էլ նրա մանեկած փողոցով վախենում էր անցուկարձ կատարել:

Այս սոսկալի վիճակից անպիտի նեխւած ժահր էր կուտակւել Օհանի ուղեղում, անքսան ժանգոտ մաղձ էր ամբարւել նրա սրտի վրա, անպիտի դառը թոյնով էր մակրդւել նրա արիւնը, և այն աստիճանի կծու ծխով էր սևացել նրա թորքերը, որ եթէ մէկին շունչը կպչէր, տեղոցտեղ կթունաւորէր օձի, կարիճի խայթոցի նման:

Առանձնութեան անգործութիւնից նեղւած նստում և երազում էր որեւէ « գլուխ - գործոց » հրաշալիք յօրինել: Երևակայում էր, թէ ինքը Բայրօնից էլ, Չիլիբից էլ, Մոլիէրից էլ, Միլտօնից էլ, Չէքսպիրից էլ բարձր հանճար էր, մտածում էր Գէօթէի նման մի Փառատ հեղինակել, կամ Գանթէի նման մի Աստուածային կօմէդիա յօրինել, հսկա տաղանդների դասն անցնել: Ամբողջ մը շարաթ, տասն օր գրում էր, խաղում, սրբազրում, ջնջոտում և յաճախ դեռ սրբազրութիւնն էլ չաւարտած ամբողջ աշխատութիւնը պատառոտում, զցում էր կրակը, որպէսզի յիտքն անգամ չմնա և չը... ծաղրի: Օհանը համոզւած էր, որ ձիթոտածները անկարելի

էր կարգալ, ինչպէս պիտի խմբագիրները քննէին, զրաշարները շարէին, աւելի լաւ էր համարում մեղնից աղէկնեի՛ն յանձնել այդ գրւածները՝ կրակի միջոցով: Բայց գանկը ժահրից, սիրտը մաղձից թեթեացնելու համար Օհանը կարգացած ամէն մի երկ խմբծում էր, թէև խելքը չէր հասնում, միտքը չէր ըմբռնում, բայց ամէն մի գործի մասին մի փնտրանք ճարկու, մի մի անուն դնելու շատ ճարպիկ էր, մըտտում էր ամէն բան, ուղարկում էր զազեաներին, որ քննադատութեան բաժնում մուրտրածները սևացնեն: Խմբագրութիւններն էլ ձրի գրւածները պարզած թեքով գրկում, գովաբանում և թանկ թանկ ծախում էին իրենց յաճախորդ - բաժանորդներին: Այդտեղ Օհանը գուրս էր գալիս դերասանի մանտիան ուսին, Կինտաւրօսի հացիի տէգը, հեփեստական աղեղի հետ ձեռին, Ոլիմպական անմահների դիմակն երեսին, տէգերով, նիզակներով, որոտներով ու կայծակներով սպառնում էր հորիզօնի վրա բարձրացած գրիչներին, բայց դերասանի ու կլօունի գործիքի նման նրա սուրը, տէգը, նիզակը, որոտն ու կայծակը չէր ներգործում, Գրիչները համբընթաց առաջանում էին իրենց նպատակին, որից կատաղած Օհանը ծխալի թորիքից փչում էր առատ մուր երկերի երեսին, ձիթոտ մատներով քսքստում, ջնջոտում էր, ... բայց ո՛չ գրւածները, ... այլ իւր քննադատութիւնները:

Հեռագհետէ Օհանի ձիթահոտը այնքան սաստկացաւ, որ գազեաների ձրիակեր խմբագիրներն էլ, զրաշարներն էլ, ցրիչներն էլ, ընթերցողներն էլ,

ունկնդիրներն էլ զգւեցան Յանի լորձունքոտ բաշկրտուքներից, այդ միակ մխիթարութիւնից էլ զրկեցին: Նեխւած սրտի բուրմունքից, ապականւած ուղեղի ցնցումներից խելացնոր Յանը ամայի անապատներում, բնակութիւններից հեռու թափառելիս պատահեց մի արջրի սֆինքսի, որն իրեն նման կեանքից մէկուսացած, շրջանից անջատւած, լոկ ինքն ու իր չոր գլուխը արձանացած նստած էր ասլառածի պանտաղանի վրա: Կեանքի զեղեցկութիւնները անարգող Յանը, բնութեան հրաշալիքները փնտրողը, վարդի անուշահոտը ժխտողը, բլբուլի ձայնից զգուղը, երգ ու տաղը, խմբերգ ու երգեհոնը, երգիչն ու կաքաւսողը քամահրող-ծարողը՝ սիրահարուց այդ սառն ու անշարժ սֆինքսի վրա: Այն սֆինքսը, որին դարերից իվեր արևի ճառագայթները չէին կարողացել տաքացնել, երկրաշարժները՝ տատանել, հովերը - հողմերը՝ սրտուցնել, հրդէհները՝ շիկացնել, այդ սֆինքսը դարցաւ Յանի սէրը, այն Յանի, որը ամէն քայլափոխի զեղարուեստի մէջ կայծ էր որոնել, հրդէհ, բորբորող սրտեր վառող բոց էր փնտռել: Այդ բորենու մարմնի վրա կպած արջրի կանանցի գլուխը դարձաւ Յանի իզէալը, կուռքը և պաշտամունքը:

Սֆինքսի անասակ և անհայելի մեծ մեծ ակներին էր անընդհատ յառած Յանը իր մկան փոքրիկ աչքերը, հրճուում էր նորա անթարթ կոպերով ու թերթեխներով: Արձանի անշունչ պնչները, անշարժ շրթունքները, ողորկ կզակը դիւթել էին մովրովի ժառանգին և նա գմայլած գիտելիս շրթունք-

ներից դոժի փոխարէն ծորում էր ձէթը: Բայց աւելի շատ յափշտակւել էր Յանը նորա ձիգ ու երկար վզովը, որի վրա կանգնած էր անդրդուլի գլուխը:

Յանը, որ իւր նեխւած ձիթով ապականել էր յայտնի նկարիչների դիմանկարները, տեսարանները, ծովանկարները, թորերից արտավիժած ծխով ջանացել էր, մրտաել վրձինի հրաշալիքները, տանջել էր, որ մատներովը քչփորէ քանդակագործների նշանաւոր անդրիները, կաշուց դուրս գալու չափ ջանացել էր, որ իւր ձիթի մէջ խեղդէ յարգանքի ու համակրանքի արժանացած աշուղներին, բանաստեղծներին, զրամատուրգներին, վիպասաններին և երգիծարաններին, յափշտակւած սֆինքսի ձիգ ու բարձր վզով, ամբողջ ժամեր կանդնում էր տապ արեւի տակ, մակուսացած գննում էր, դիտում և հիանում էր իր կուռքով, երբ նկատում էր, որ սֆինքսն էլ ո՛չ միայն հողմերին, մրբիւններին, փոթորիկներին արհամարական անտարբերութեամբ էր պատասխանում, այլ որեւէ արձագանք էլ չէր տալիս անեղ գոչիւններին, դարհուրելի որոտներին: Յաճախ ձիթոտ ձեռքերը մարբելուց, սրբելուց յետո, զգուշութեամբ մօտենում, շոյում էր անդրիի ցուրտ կուրծքը, պաղ այտերը և բերկրում էր, որ բաղդը նրան իր նման մի սառնութեան էր դիմաւորել, որը միայն ամբողջ աշխարհում կարողանում էր նրան սփոփել և մանութիւնից ազատել: Անդգա անդրին մի անաւոր աշխարհ էր թւում Յանին:

Անթարթ այնքան էր դիտում սֆինքսին, որ յափշտակութիւնից հիպնոսուում, անզգայացած գննում

էր պաղած աչքով, որոնք արոյրի գլխին յառած երկար անշարժ մնում էին քարացած: Այս քնի մէջ Օհանն էլ արձան դարձած, արոյրի բորենիից բոլորովին չէր գանազանւում: Այդ նիհարի մէջ մովրովի որդին յաճախ տեսնում էր սֆինքսի շարժումները, լսում էր ձայնը, յուզւում էր նորա խօսքերից, բարախում էր սիրտը, ձգւում էին ջղերը, բորբոքւում էր գանգը և նա սիրատենջ ընկնում էր սֆինքսի գլխիկը: Անըջական այս ջերմ համբոյրներից այնպէս էր ցնցւում ու հրճւում, այնպիսի հոգեկան գւարճութիւն էր զգում Օհանը, որ սա սշխարհի - կեանքի վայելքներից ոչ մէկի հետ չէր փոխի այդ երազների վայրկեանը, ակնթարթը: Օհանին թւում էր, թէ սֆինքսը թափանցելով իւր սրտի խորքերը, քննելով ուզն ու ծուծը, նկատելով ջղաձգութիւնները, ըմբռնելով ծովացած մաղձի ու ժահրի դառնութիւնը, կարեկցում, հոգի էր առնում, նրան դուրդուրում էր, որ ոգի ներշնչի, խրախոյս կարդա. ամբապնդի կեանքի դէմ կուելու,....:

Եւ երբ սթափւում էր Օհանը այս բազըքնից, թէև անչափ խռովում էր, բայց անհամեմատ բարեբաղտ էր գտնում իւր վիճակը, քանի որ համոզւած էր, որ չէր կարող մի ուրիշը իր միակ վայելքը յափշտակել, կամ սֆինքսը մի ուրիշին սիրել ու կարեկցել: Ինքն էր ու իր սֆինքսը, իր սրտի գաղանիքը միայն արոյրի բորենիին էր յայտնի, նա էլ ոչ որի չէր կարող պարզել: Օհանը համոզւած էր, որ կեանքի մէջ ոչ որ իւր նման սուր աչք չունէր, որ կարողանար արոյրի արձանի արժանաւորութիւնը

գնահատել, ոչ որ այն լեզուն չունէր, որ սֆինքսին կարողանար կենդանացնել, ոչ որ այն ջղերը չունէր, որ նորան սանձէր ու տատանէր, ոչ որ այն համարձակութիւնը չունէր, որ նորա ճիրաններին կեանքն յանձնէր, նորա շրթունքներին հպէր ու ծրծէր: Օհանի համար բացի սֆինքսը կեանք չկար, Օհանի արժանիքը սֆինքսից ջոկ գնահատող չկար:

Ո՛հ, ինչպիսի դոյկեր ենք, ասում էր ինքն իրեն Օհանը, սրտեղից էլ իրար գտանք: Ասենք, ես գտա նորան, ես ստիպեցի նորան, որ կրկին կեանք առնէ, ես սթափեցրի նորա սրտի խորքերում թմբած զգացումներին, բայց նա էլ դիակնացած սիրտս կենդանացրեց, զգացումներս ուղղութիւն տուց: Որքան իրար նման ենք, թէ ես սակաւախօս եմ, նա խապառ լուկաց է, թէ ես փնորում եմ ամէն գործ, նա արհամարանքից ոչնչի վրա ուշք չի դարձնում, թէ նախանձն ինձ բորբոքում է գեղեցկութեան դէմ, նա իր հպարտ աչքերի ցոլքը ոչնչի վրա չի դցում, բացի իմ կապոյտ աչերից և սրտիս ջղերից: Եթէ իմ մատներից ծորած ձէթը ապականում է ամէն մի կերտւած, նորա ճիրանները կարող են փշրել ամէն ոսկոր, ամէն մի յօդւած:

Օհանը հարբած սֆինքսի սիրով, հպարտացած իր տարօրինակ տարփածուով, սկսեց մտովի օդի էլ բարձր շերտերում սաւառնել և այնտեղից ձէթ ու մուր տեղալ գէպ երկիր, դէպի հոգեղէն մահկանացուները, որոնցից գերազանց էր դասում իւր ձիթային ու մրային ծնունդը: Օհանն ինքն իրեն համարում էր կայծակի, կրակի արտադրութիւն,

հրաշունչ բոցերի, ճարճաթան պէծերի ծնունդ, սրանց ծխից ու մխից զանգւած: Երեւակայում էր, որ իր շնջի հետ կայծակ էր արտավիրում, այրում, մրկում պատահած ամէն բոյս ու կենդանութիւն, աշրերից կայծեր էր սլաքտում, շշմնցնում, սարսեցնում ու կուրացնում էր ամբոխը, լեզւից կրակ էր թափւում և բոցավառում հորիզօնը, մասներից ձէթ էր հոսում և բորբոքում արծարծւած կրակը, կոկորդից արտավիրած ծխով ու մբով խաւարեցնում էր աշխարհ և կսկծացնելով մահկանացուների աշքերը, ստիպում էր փակել և մթնել:

Բայց հրը սթափւած նկատում և համոզում էր, որ իր այդ երեւակայական հոտը, բարձունքից շաղ տւած ձէթն ու մուրը չէին հասնում երկիր, չէին ներգործում աշխարհի երեսին ապրողների մաշկի ու կեղևի վրա, չէին խանձում, չէին ձիթոտում, չէին մրոտում, նա զայրութից անշափ բորբոքւում էր: Մֆինքսի կողքին ժամերով ու օրերով նստած շուրջը զննելուց յետո, երբ համոզւում էր, որ երեւակայութեամբ սփռած կայծը, բոցը, ձէթն ու մուրը չէին ծառայում իր նպատակին, չէին մոխիր դարձնում, փոշիացնում կեանքն ու իր կերտւածքը, որոնք արհամարելով Օհանի ցնորքը, անխափան շարունակում էին իրենց բնական ընթացքը, Օհանը բնկճւած թօքերից կախւած նախանձոտ լեզից, գանկնում արծարծւած ժահրից, խրում էր մտքի անսահման ովկիանք, որոնելու, յօրինելու մը այնպիսի հրէշային հոսանք, որով սրտի մազձը՝ ելեքտրականութեան հոսանքի նման՝ կարողանա հասցնել

ուր որ կամենա, այրել, ապականել, այլանդակել աչքի մէջ ցցւած ամէն մի կոթող, ամէն մի կերտւած և ամէն մի յօրինւած:

Այս երեւակայութիւնները այնքան խիստ ներգործութիւն ունեցան Օհանի մտքի վրա, որ նա ենթադրում և հաւատում էր, թէ արդէն գտել էր, կազմակերպել էր այդ գերագոյն ոյժը, կուտակել, ամբարել էր իւր ջղերի և մկանների մէջ այդ անսահման զօրութիւնը: Զրթունքից գուրս թռածը՝ անմիջապէս կատարւում էր, մտքից անցածը՝ իրագործւում: Այս համոզմունքով էլ Օհանը յաճախ թողնում էր սֆինքսը, ամայի անապատը, իջնում էր քաղաք, մտնում էր շրջաններ զննելու, քննելու իր երեւակայական կործանածները, փշրածները և լսելու ամբոխի կարծիքը: Խղճային ինչպէս հաւատացած էր, ինչպէս ենթադրում էր, սկզբում աշքերին էլ այդպէս էր երևում ամէն բան, աւերակ, կործանւած և մոխրացած էր տեսնում չորս կողմը առանց որևէ տարակոյսի: Ամէն մի պատահողի հետ այս արկածների առթիւ այնպէս էր խօսում, իբր թէ կղած - կատարւած էին իր բոլոր ենթադրութիւնները և գուշակութիւնները: Այնքան երկար էր ճոռումարանում, այնպիսի ձանձրացուցիչ կրկնութիւններ էր անում, որ բոլորը տաղտկացած մի կերպ թողնում, հեռանում էին, որպէսզի չձիթոտւին, չմրոտւին, չհոտին, չբծաւորին Օհանի անբուժելի արաաներից: Բայց երբ կեանքի մէջ շրջելով Օհանը բմբունում էր սխալը, զգում էր, որ չէին ներգործել ոչ նրա մուրը, ոչ ձէթը, ոչ սլաքները, ոչ էլ կենդանի խօսքերը, նա

գայրութից շշմած, խելակորոյս զառնում էր անապատ պաշտելի արոյրի բորենիի մօտ, մի հնար գոնելու կրքերը գոհացնելու համար: Այս մտքերը այնքան մաշեցին Օհանին, որ նրա կաշւի տակ մկանները ցնդել, կմախքն էր մնացել:

Այսպէս բորբորած, ծիւրած Օհանը մի օր դարձաւ իր սփինքսի մօտ, սիրտը լցւած գանկատւեց, թէ ինչպէս չէր ներգործում մարդերի վրա ոչ նրա ձէթը, ոչ մուրը, ոչ էլ սլաքները, թէ ինչպէս մարդիկ ծաղրում էին նրա խօսքերը, արհամարում սոլառնալիքները, թէ որքան առւած էր նրա ընթացքը, ծանուկի մատնւած հկատողութիւնները: Եսաց Օհանը, պատմեց այրած սրտով, հառաչեց, սրտի մաղձը անյնքան թափեց, արոյրի բորենու առաջ, որ հողու վրա կուտակւած ժահրից ու ժանդից թեթեւացած ընկաւ, բնեցաւ: Երբ խոր քնի մէջ ընկողմեց, նրա երազում արոյրի բորենին թեւերը տարածեց. Օհանին զրկեց, զգւեց, փայփայեց և արձանի կուսական շրթունքները նրա շրթունքին հպած ասաց.

— Օհան ջան, մի յուսահատւիլ, մի տրտմիլ, աշխարհը մարդարէներին, վարդապետներին է ծաղրել, արհամարել, նրանց բարոզած վեհ մտքերն ու գաղափարներն է անարգել, նախատել, ուր մնացիր դու ու բու մտքերը: Այս ժանիքներս քեզ կտամ, մի վախենալ, նրանք անչափ պինդ են, ուր որ խրցնես չեն փշրւել: Քանի որ գեղին է, մարդերի խելքն էլ աչքերի մէջ է, ալդ ոսկիի տեղ ընդունելով պիտի զգւեն, փայփայեն, եթէ մինչև անգամ զրանք խցկես պատահողի որկորը: Բայց հրապարակով չարձակուիս,

գիշերը, մթնումը գաղտագողի դուրս գնա, խաւարում ման եկ, որ քեզ չնկատեն: Ծառերի, պատերի, խրամատների և ժայռերի մէջ թաղւալիք, որ քեզ չտեսնեն ու չհալածեն: Զօրեղների հետ գործ չունիս, հուժկուների առաջ մի դուրս գալ, թաղւած-ծածկւածդ տեղն այնքան սպասէ, մինչև որ իրարից բաժանին, առանձնանան, մէկ մէկ մնան: Եթէ կարող ես այնպիսի գիրք բռնէ, որ իրար հետ կուլեցնես, շթողնես իրար մօտենալու: Այս ճիրաններիցս էլ մի բանիսը վերցրու, սրանք ոչ միայն անչափ զօրեղ են, երբէք չեն բթանալ, այլ թալիսիմած, կախարդւած են, կարող են քեզ պէտք գալ: Երբ կառանձնացնես մէկին, զգոյշ այնպէս վրա պրծիր, որ չսթափւի, նախ ճիրաններով նրան կաշկանդիր, ապա ժանիքը միսի մէջ, մինչև որ անձնատուր դառնայ: Երբ թաթերից տակը զլորես, մրտալիք, ձիթոտիք ու սըլաքտէ, ուրան որ կամենաս, էլ չի կարող քեզ զիմազրել, ձէթդ ու մուրդ կծուրէ նրա մարմնի մէջ, էլ դուրս չի գալ: Այսպէս մէկ մէկ ում ուզում ես, մութ տեղը վրա պրծիր, տրորէ, ոչ որ չի փախչիլ այս ոսկեգոյն ժանիքներից, ոչ որ չի յանդգնիլ այս կախարդւած ճիրանների գէմ մաքարիլ: Բայց ամէնից խելօք այն է, որ երբէք երևան չգաս, մութ տեղը ում որ բռնես, մրտես, ձիթոտես, բաց թողնես, որ մարդու ձեռ չտաս օձիքդ, երբ այդպէս ներբուստ գործես, ամէնն էլ կսարսափին բո ձէթից էլ, մուրից էլ: Քեզ հալածում են, հեռացնում են շրջանից, դու էլ մի երևա ոչ մի տեղ. ինչ գործ ունիս ամբօխի մէջ, երբ ոչ որ քեզ յարգելու տրամադիր չէ, ամէնը

զգուժմ ենք քո ձէթի հոտից, քո շնչի մուրից: Ծագրում ենք քարոզներդ, դու էլ լուսնաւորիք ժանիքներդ, նեխոտիք ճիրաններդ և այնպէս խոր մխիթ, որ թոյնը սրտերը հասնի և կտկծից խնդազարւին: Բայց ամէնից խելօքն այն է, սր սուս բարեկամի տարագով նրանց մօտենաս, կեղծ խորհրդական ձեանաս, խալխի արիւնը ծծելիս անգամ այնպէս ձեացնես, թէ տղրուկի նման վատ արիւնից ես նրանց ազատում, ապականութիւնից ես փրկում, աշխատում ես առողջացնել, ըռնտցնել, այն ինչ դու գործդ շարունակիր, ժահրդ ու թոյնդ տարածիր նրանց զարկերակներէ միջով ամբողջ մարմնի ամէն մի կողմը, այնպէս որ բոլորովին թուլանան, բայքայրին և յուսահատին այդ վարակումից:

Անշափ դարթ զարթնեց Յանը այդ երայից, այնպէս ողնորւած, որ արշալոյսին թողեց սփինքսին, նորա քարոզներից ու դասերից խրախուսւած՝ իջաւ ամպերից ու օդային պալատներից, հասաւ երկիր, ծածկեց, պահեց ժանիքներն ու ճիրանները, մտաւ կեանքի շրջանը: Նա ընդհանրապէս ծածկւած ու ծպտած էր մօտենում պատահողին և կամացուկ, հովահարելով խայթում ու ծծում էր մարուք արիւնը, տեղը թոյն փսխելով:

Այնպիսի մտերմի ու սրտակցի ձևեր էր անում, որ ենթագրում էին, թէ հին բարեկամ է, անշահասէր ընկեր, բայց երբ մօտենում, զննում էին ձիթոտ մասները, ժանդոտ ժանիքները, սուր սուր ճիրանները, հոտած բերանը, ծխոտ դունչը - պինչը, մբոտ արտաշնչութիւնը. խնդին երես էին դարձնում ու

դէմքերը ծամածռելով կրկնում էին. — Ձէթ Յանն է:

Ում ոչ անանում էր մովրովի զաւակը, ժպիտ էր արտայայտում, որին որ պատահում էր մտերմի կնճիռ և խնդում էր կեղծում, դերասանի նման ճկւում էր ու մօտենում, բայց մարդիկ արդէն այնքան էին վարժել, որ խնդին դէմքերը դարձնում հեռունում էին կրկնելով. — էլի ձէթ Յանին պատահեցինք, գործներս սխալի ձախէ:

Իսկ Յանը բաւականանում էր ձիթոտ մատների վրա բիշ մուր փչել և նրանց ետեկց շորներին, վերառկուններին շանչել. երևակայելով, որ արդէն ապականել է նրանց կոկ ու շքեղ շորերը: Յանի բարբը դիպցողները արհամարում էին խեղճին, իսկ անտեղեկները ժպտում, անցնում:

20 Սեպտեմբերի

Թաւրիզ

1899

Վ Ի Պ Ա Կ Ա Ն

ԱՄԵՐԱՍ [Թրքահայերի կեանքից երկրորդ տպագրութիւն			
Երկու հատոր, իւրաքանչիւրի դինն է	1 ը.	5 զա.	
ԽԵՒ - ԱՐԲՊԵՏ. Թրքահայ. կեանքից	1 ը.	5 "	
ՔՈՒ - ԵՂԻԿ	"	"	30 կ. 30 շհ.
ՅԽՆՈՑ	"	"	30 կ. 30 շհ.
ԺՐԹՆԳՆԵՐ	"	"	30 կ. 30 շհ.
ԲԵՐՍԵՒ ԱԹՎԵԼԸ	"	"	25 կ. 25 "
ԹՈՒՆՈՒՄՐԵՋՈՆԵՐ	"	"	10 կ. 10 "
ՎԻՆՔԵՐԱՆՍԻ ԳԵՂՏՆԻՔԸ	"	"	1 ը. 5 "
Ընտիր [Թղթի վրա 2 բուրլի—կամ	10 զրան		
ՋԱՐԸՆԻՐ 77-8 թ. Ռուս Թուրք կուէից արկած	1 ը. 5 զա.		
Ընտիր [Թղթի վրա 2 բուրլի—կամ	10 զրան		
ՊԵՏԿԵՐՆԵՐ [Թրքահայերի կեանքից	1 ը.	5 զա.	
Ընտիր [Թղթի վրա	2 ը.	10 զա.	
ՎԻՊԵԿ ԵՐ Թրքահայերի կեանքից	1 ը.	5 զա.	
Ընտիր [Թղթի վրա 2 ը.—կամ	10 զա.		

Ո Ղ Բ Ե Ր Գ Ա Կ Ա Ն

ՅՈՒՅԸՆ Երեք արտրւած. [Թրքահայ կեանք	1 ը.	5 զա.
ՍԵՐԵՓ Հինգ	"	" 30 կ. 30 շհ.
ԽԱՆԻՓԸՐ Պատմական տեսութիւն.	30 կ.	30 "

Գիմել Թիլիսի Կենտրոնական Գրա վաճառանոցը  
և Կովկասի քաղաքների հայ գրավաճառներին:  
Գրավաճառները կարող են գիմել նոյնպէս.

TAURIS ( Perse ) ATRPET

Որոնց կը լինի սովորական 20 օ զիջումն:

# ԿՈՏՐԱՆ ԳԳԱԼ

ԵՐԿԵՐԱՆ

Մի օր առաւօտեան վաղ զարթեցաւ և ինձ՝  
բաւական յաղթանդամ արարածիս, այնչա՛ն թեթև  
զգացի անկողնիս վրա, որ տարակուսեցաւ անձի ս ժափն  
և կասկածեցաւ, թէ մի դուցէ գիշերը փոխս չնկած լի-  
նիմ: Իսկոյն աչքերս դարձուցի ս նետկիս անկիւնում  
կանդնեցրած հայելի փեղլիքով պահարանին և դէմքս  
զննելուց յետո թէև անտեղի կարծիքս փարատեցաւ,  
բայց սիրտս կատարելապէս չհանգստացաւ, մի տե-  
սակ շփոթութեան և ցնորքի մէջն էի: Չգիտեմ բը-  
նազդմամբ թէ մի ուրիշ ոյժ ինձ վրա վատ էր ներգոր-  
ծում և հոգիս ճնշում էր: Ուզիզը շկարողացաւ դիտել  
թէ ինչ եղանակ էր, որովհետև կինս լուսամուտների  
թանձր վարդոյրները չէր բացել: Ես էլ չուզեցի բա-  
նալ, այսինքն կինս նեղանում է, չի սիրում առաւօտ-  
ները ննջարանի վարդոյրները բաց անել, ինչև  
շորերը հագնելը, բայց ենթադրում էի, որ երկինքը  
ամպամած էր լինելու, բանիոր այդպիսի եղանակ-

ԳԻՄԵԼՆԵՐ

ները միշտ վատ են ազդում ջղերիս վրա:

Քովի սենեակից կնոջս խօսակցութեան ձայնը թէև լսում էի. բայց որքան ուշադրութիւնս լարեցի չկարողացա ըմբռնել, թէ խօսակիցն ով էր: Մի քանի անգամ հազացի, որ ձայնս լսէ, մօտս գա, բայց այնքան տաք վիճարանութեան մէջ էր, որ չլսեց անգամ: Մի քանի անգամ էլ ձայն տւի, կարծեմ բաւական բարձր, դարձեալ պատասխան չեղաւ: Երբ անհամբեր ականջներս սրած սպասում էի կնոջս վերադարձին, կամ պատասխանին, լսեցի կնոջս խօսակցի հետեւեալ խորհուրդը:

— Սարէթ, ասում էր այդ ճիւղի աշակերտուհին իմ կնոջս, այս հինաից ութ-տասը դդալ թասի մէջ լից, վրան էլ մի բաժակ, եղկումնդ ջուր ածիր, մի կոտրած, ետ ընկած անպէտք գդալով լաւ սրիւր, մինչև որ հինաի բոլոր հատիկները լուծւեն ջրի մէջ: Յետո գլուխդ լւան, բռով հինաից վեր ան, ցելի նըման մազերիդ հետ գլուխդ ամէն կողմից ծեփի, կապիւր շորով, գիշերս մնա մինչև լոյս: Առաւօտ վաղ ես կգամ, բաղնիս կգնանք, կլողանանք, գլխիդ ցան էլ կանցնի, օպիտակ մազերդ էլ կսեանա, էլ չի թափւիլ, մորթիդ կառողջանա, քեզ էլ աւելի թարմ կըզգաս:

Այս որ լսեցի, համբերութիւնս հատաւ, կրակ դարձա ու գոռացի:

— Սարէթ, Սարէթ, մի լսիլ այդ քաւթառին, նախ բժշկարանը բեր ինձ, կարդամ, եթէ վնասակար չէ... եթէ բժիշկն էլ խորհուրդ կտա, եթէ ուրիշներին՝ փորձողներին օգնել է, կվկայեն, հարցնենք, ի-

մանանք, այդ ժամանակ դու էլ կարող ես կատարել այդ պառաւի խորհուրդը:

— Գու ինչ, «կոտրած-դդալ», ասաց խոժոռագէմ կինս ննջարան մտնելով, ինչ ես գլորում, ամէն մի ամանի մէջ ընկնում, թաթախում ամէն տեսակ լպրծուն կեղտերի մէջ, «հինաի-դդալ»:

— Ինչպէս թէ «հինաի-դդալ», «կոտրած դդալ»...

— Չայնդ կտրիր, «կոտրած-դդալ», քեզ երբ հարց տան, այն ժամանակ կարող ես խօսել, բու ինչ բանդ է իմ դործերին միջամտել, կնոջ գործերին խառնել...

— Ինչպէս թէ՛ խառնել...

— «Կոտրած դդալի» հետ խօսելու գլուխ չունիմ, ասաց և դուռը պինդ փակելով հեռացաւ սպանալիքներ կարգալով, գնաց գտաւ դարձել իւր խօսակցին: Կարող էր երևակայել իմ զրութիւնը այդ ժամին: Չատ ու քիչ նախատական խօսքեր լսել էի կնոջիցս, (խօսքը մեր մէջ մնա, շատ սխալեցի սրս փայլով, մանաւանդ ժառանգութիւններով, քթիցս բրունել է անիծածը,) բայց արդէն չափն անցկացրեց վերջին արարքով... Հնա, կարող էր երևակայել իմ զրութիւնը այդ ըոպէին, իմ վիճակը, որ եօթը քէալական դպրոց եմ փոխել՝ շատախօսութեան համար, ճեմարանի եօթ ուսուցիչների հետ կուել, արտօքուել եմ այդ պակասութեան համար, համալսարանից կիսատ եմ վճարել՝ լեզուս ծայրից, եօթը տարւա եօթը քաղաքների հոգաբարձութեան հետ պայմանաւորել, ուսուցիչ եմ մտել և եօթնից էլ, առանց վեր ջացնելու ուսումնական տարին ակամա հեռացել եմ

մի խօսքով, կարծր ինձ վռնդել են ամէն տեղից: Այս բնութեան տէր մարդու հետ, այսպէս վարեւ... Կատարութիւնիցս բիշ էր մնում, որ վեր կենայի և կնոջս մի լաւ թակէի, թէ կուզէ ինձ վայրենի անւանէին: Բայց ինչպէս ասացի, սիրտ չունէի, տեղիցս շարժել չէի ուզում: Քիչ լուսթիւնից յետո համբերութիւնս սպառեց. կրկին ու կրկին անգամ սկսեցի գոռալ կանչել:

— Սարէթ, այ Սարէթ, այ կնիկ, բեզ եմ ասում մի լսիլ այդ ջաղբին, խնդրում եմ, խնդրում եմ ու ուշադրութիւն մի դարձնիլ այդ քաֆթառի խօսքերին: Բժշկարանը բեր կարգամ, մի բժիշկին էլ հարցնեմ յետո կվճռենք, թէ ինչ պիտի անես: Թող, հոգիդ սիրես, թող, այդ պառաւի աջէմական ղեղերը և թրքութիւնի նման մի ներկիլ ձեռքերդ ու զլուխդ: Սարէթ ինձ լսիր, Սարէթ...

Կինս փոխանակ պատասխանելու, անտարբեր շարունակում էր իւր խօսակցութիւնը դեղճուր պառաւի հետ: Սիրտս ծակում էր, նամանաւանդ երբ օտարների, այն էլ բաւթառի ներկայութեամբ կինս ուշադրութիւն չէր դարձնում իմ խօսքերին, արհամարում էր ինձ իր անտարբերութեամբ: Մեր մէջ մի կերպ ամէն բան կարելի է տանել, բայց օտարի, անծանօթի մօտ արհամարել կնոջից... ջղերիս դիպաւ: Կրկին կանչեցի. — Սարէթ, Սարէթ...

Այս անգամ փոխանակ պատասխանի, կինս ներս մտաւ, վերմակս մի կողմ շարտեց, երկու սրունքներս երկու մատի մէջ բռնելով, մի գդալի նման ինձ վեր բարձրացրեց, տարաւ և անմիջապէս գլուխս կոխեց

հինաի տոպրակի մէջ: Փորը ժամանակ դետի մէջ լողալիս խորասուզելու համար, ականջներումս, աչքերումս, բթիս ծակերում, բերանումս ջուր չլցւելու համար, մտաներովս ինչպէս որ կապում էի այդ ծակերը՝ իսկոյն նոյն գիրքը բոնեցի, այսինքր երկու բթամամտերովս երկու ականջներս ծածկեցի, երկու ցուցամատերովս երկու աչքերս բռնեցի, երկու միջամատերովս բթիս ծակերը սեղմեցի և երկու մատենմատներս բերանիս շարեցի և այդ գիրքով սպասեցի մինչև կնոջս բարկութեան աստիճանների իջնիլը: Չարմանում եմ ինձ վրա, թէ ինչպէս այդ բոբբոբման և իրարանցման վայրկեանին չշփոթուեցի, նոյն ակնթարթում այդ գիրքը միտս լնկնիլն ու գործադրելը բնազդաբար կատարեցի և պաշտպանեցաւ: Ուղիղ է ասած թէ յարկը մարդուն ստիպում է գիտեր անելու:

Կինս առանց խզճահարելու, սովորական զրդալի նման ինձ վերցրեց, սլորեց տոպրակի մէջ: Ինձ շատ չփորձացնելու համար տոպրակ եմ ասում. բայց հաւատացէր, որ սովորական հինայի քսակ էր: Գլխիս, թեքիս ու կրծքիս մէջ լցւած հինայով դուրս հանելով տոպրակից, դատարկեց այդ անիծեալ փոշին լականում, այսինքն թասում: Ութ-տաս անգամ մտա և դուրս եկա այդ քսակում, այսինքն կինս հինան ինձանով դատարկեց և ամէն անգամ կողերս այնպէս պինդ պինդ էր խփում թասի սուր սուր շրթներին, մտգերիս, դնչիս, պնչիս, վզիս ու կրծքիս կպած հինանս թասում թափտալու համար, որ կողերս մի քանի տեղով վիրտուրեց, կաշիս բերձեց, սկսեց արիւնել... Մի տեսակ ջարդեցաւ, կոտրեցի...

ձար շունկի, եթէ էլի մի բան լեօսէի, պէտք է էլ աւելի ինձ տանջէր, այդ պատճառով տաղ արի, սպասեցի վախճանին: Մի բան որ չէի կարողանում պարզել, մի բան որ մինչև այս րոպէին էլ ինձ համար մութն է, այն էր, թէ ինչպէս ինձ նման ահագին մարդուն այն թոյլ արարածը բռի մատների մէջ խաղացնում էր զգալի նման և անգաղար ծագրելով կրքկնում — «որտեղից գտա ես այս «կոտրած-զգալը»: Եթէ մի բիշ նախապաշարում ունենայի, կասէի, թէ կինըս կախարդ է, կամ խօսակիցը վհուկ. թէև կախարդութեան գոյութիւն չունենալուն կասկած չունիմ, միայն կինս իւր արարքով տարակուսանքներ բարձրացրեց հոգուս խորքերում և ես սկզբունքներին վրա, սրանից յետո էլ այնքան մեծ հաւատք չունիմ: Թէ գիտութեան հետ ասեմ, գերբնական «գորութիւններ չկան, հապա կինս ինչ է, թէ կնոջս արարքի վրա հիմնելով հաւատամ կախարդութեան, հապա գիտութեան ինչ պատասխան տամ: Տատանում եմ, այն էլ հաստատ է, բանի որ գիտութիւնն է բարոգում, այս էլ փաստ է, բանի որ ինքս փորձով տեսա... մարդ մոլորում է: Բայց ես կարծում եմ այն էլ ճիշտ է, այս էլ իրաւացի... Գերբնականութիւն էլ կա, բնական-գիտութիւններ էլ կան...:

Մի խօսքով, ես ծնւած տաղանդս ու հանճարըս, ես, գիտութեան և իմաստութեան հարազատ պաւակս, ես, հայրենիքիս համար փայլելի ամենալուսաւոր աստղս և ծննդավայրիս անփոխարինելի զարդըս, դարձել էի այդ տկար, թուլակազմ էակի ձեռքում մի խաղալիք: Մի թոյլ, շնչին արարածի ձեռքում

բում խաղալիք դառնալը, «կոտրած զգալի» նման դործածելը, եթէ կախարչութիւն չէր համարում, հապա ինչպէս կարելի է անւանել:

Չէր կարող երեսկայել, թէ ինչ անտանելի դրութեան մէջ էի, չէի կարողանում շնչել անգամ, հինայի փոշին բերանս լքցեց և շնչիս հետ կուլ էր գնում: Սարսափելի կերպով գանեցա, քիչ էր մնում փսխէի, բայց իսկոյն յիշեցի մի օղտակար բան և համբերեցի: Ուղիղ որ նեղութեան մէջ մարդ անշնփ սրամիտ է դառնում, յանկարծակի մտքեր է ծնում, բոլոր անցեալը մտարեբում է ակնթարթում: Մի ժամանակ ուսուցչական ժողովում մարդակազմութեան վարժապետը ինձ նկատեց, թէ արիւնս սովորական մարդկային արիւնից նւազ կարմիր է: Ուզում էր ասել, արունս ճերմակ է: Պէտք է իմանաք, որ ես մարդակազմութեան, ընդհանրապէս բնագիտական սուարկաների մէջ միշտ մրցանակներ եմ ստացել, բայց հնար չէի գտնում արիւնս ներկելու: Իսկոյն ուղեղումս մի միտք ծագեցաւ, մի հարց բարձրացաւ: Եթէ կարելի է թորերում գտել, մարբւել, ինչի չի կարելի ներկել: Արիւնը թորերում գտում է, մարբւում է, թոյլ այնտեղ էլ հինայով ներկելի, ասացի մտքումս և սկսեցի աներկիւղ շնչել, ծծել օդը հինայի փոշիներով և բիրանումս թրջւած հինան էլ կուլ տալ, որպէսզի ստամորսիս կողմից էլ նոպաստեմ արիւնիս գոյնին, որ ուրիշ անգամ մասնազէտները չկարողանան այդ պակասութիւնս զգալ և նկատել:

Հինայի քսակը ելումուտ անելիս, մի կերպ էի դիմանում էի, որովհետև բաց օդից անցնելիս,

կարողանում էի մի կերպ շնչել: Բայց երբ ինձ գլխովս թողեց թասի հինախ մէջ, եղևուսեղկ ջուրն ամեց գլխիս, շնչառութիւնս խսպառ կտրեց: Իսկ երբ արագ-արագ ինձ ստացրեց թասի մէջ հինան սրելու համար, ուշքս անցաւ, մարեցաւ: Գրանից յետո ինչ խաղ խաղաց կինս դիւիս, ինձ յայտնի չէ, բայց երբ սթափեցաւ, գլխից մինչև ծնկներս հինախ մէջ կոխուած, ջարդուած, արիւնլաւ բնկած էի խոհանոցի ճինճոտ ամանների կողքին: Լաւ էր, որ սուս աղախինն էլ այնտեղ չէր, թէ չէ ողջ քաղաքում պատիւս գրօշի կհասցնէր: Իսկոյն գիշերնոցս գլխիս բաշեցի, փափուչներս հաղա, վազեցի սիր տան կողքի բաղնիսը, ներս մտա, բաղտիցս Մելիքենց Անդրին, էլ այնտեղ չէր և երբ շտապ շտապ նստեց լախանջեցի, վերակացուն սովորական սառնութեամբ աթոռ առաջարկելով ասաց.

— Մի քիչ սպասեցէք, մինչև դուրս գան լողացողները:

Այն դրութեան մէջ ես ինչպէս կարող էի սպասել: Մանաւանդ որ աչքիս առաջ տեսաւ երեջ դատարկած նստակներ, որոնք իմ բաղնիս բնակելու բոսակն տւին ուրիշներին: Մատով ցոյց տալով այդ նստակները սախ բաղնիսպանին բարկացած.

— Գրանցից մէկը կարող էք ինձ տալ, իսկ նրանցից խնդրել, որ քիչ սպասեն: Իմ գրութիւնս տեսնում էք, շտապում եմ . . .

— «Կոտրած գգալ», ասաց ինձ ծաղրելով բաղնիսպանը դու ինչ իրաւունք ունիս մեր գործերին միջամտելու և թէլաղբութիւններ անելու: Նստակները

հերթով սպասողներինն է, ոչ թէ «հինախ գգալներ»: Չես ուզում սպասել, հրամայէք, կարող էք հառնալ, ասաց նա էլ զնշով դուռը նշան տալով:

Ուզում էի պատասխանել, յանկարծ բոլոր ծառաները միասին փռնդտացին և սկսան բարձրաձայն ծիծաղել: Այնպէս բարկութիւնս բորբոքեցին, որ էլ չկարողացայ ծաղտուն հանել, թողի և դուրս ելաւ: Բարեբաղտարար բաղնիսներն իրար մօտ են, իսկոյն մտա ամենամօտ բաղնիսը և առանց ուշադրութիւն դարձնելու փողոցի լակոտներն և բաղնիսի ծառաների հահոցին, « կոտրած - գգալ », « հինախ - գգալ » աղաղակներին, առանձնացաւ նստելու և լաւ լողացաւ: Ոչ մի բոսակ մտրիցս չէր հեռանում կնոջս արարքը, անդադար ախանջումս պղծում էր լակոտների աղաղակը: Մէկ մէկ էլ մտածում էի, չի՛նի, որ ես հաստատ « կոտրած գգալ » եմ: Բայց հայեացքս անձիս վրա ուղղելով, հայելու մէջ ինձ զննելով, ինքս ինձ զիտելով համոզում էի, որ ես ինքս եմ, ես « հինախ - գգալ » չեմ: Այնքան ներգործել էր իմ ջղերի և մտրի վրա թէ կնոջս, թէ բաղնիսպանի, թէ փողոցի լակոտների խօսքերը, որ կասկածում էի նոյն իսկ աչքերիս վրա, ուշքիս վրա: Բայց շնչառութիւնս, խօսակցութիւնս և մտածմունքս ինձ համոզում էին, որ ես անզգա « կոտրած - գգալ » չեմ, անպէտք շարտած փայտի կտոր չեմ, այլ ես մարդ եմ, ես բանական արարած եմ . . .

Բաղնիսից դուրս գալուց յետո մտմտունքը ինձ արաւ, չէի իմանում, թէ ինչպէս տուն դառնայի, կնոջս երեսը ինչպէս մտիկ անէի, ինչպէս

նորա հետ հաշտէի, նորա հետ, որն իմ գլխին այս խայտառակութիւնը բերեց: Մտախոհ ըիշ առաջ գընալուց յետո, տեսա մեր տան քահանա՝ Տէր-Եղիշէին, որ վիճում էր գործակալ Տէր-Խորէնի հետ: Մտածեցի մօտենալ տաներեցիս, յայտնել բոլոր անցքը և խնդրել, որ, որպէս հոգևոր հայր, գնա ու խելքի բերէ ինձ հարս տւածին, յիշեցնէ կնոջս մեր պսակւած ժամանակ կայացած պայմանը, նահապետական զիրքը, որ նա է ինձ հնազանդելու, ոչ թէ ես նորան: Այս խոհերով տարուբերւած նրանց մօտենալիս, լսեցի Տէր-Եղիշէի ձայնը, որ ասում էր.

— Տէրտէր, տուր ինձ երկու հարիւր ծուխ, էլ ոչինչ չեմ ուզում: Ես ծխի կարիք ունիմ, ինձ փող պէտք չէ: Ընտրի՛ր ամէնից աղքատ ընտանիքները և ինձ յանձնիր...

— Քաղաքի զիրքը ես չեմ կարող փոխել: Ինչպէս կառավարել են մինչև հիմա, այնպէս էլ կկառավարեն մինչև մահս, ասաց Տէր Խորէնը ծանրութեամբ:

— Ախար, այդ անխղճութիւն է, խեղճ ժողովրդին ստնատակ էր տալիս: Ի՞նչի հասարակութիւնը զրկում էր հոգեկան մխիթարութիւնից, պատասխանեց Տէր-Եղիշէն:

— Ես բան չեմ կարող անել, զիրքը զրւած է, մեծաւորներից հաստատւած, նախորդներից սրբազործւած՝ ժողովուրդն էլ այդպէս է պահանջում:

— Սուտ ես ասում, ասաց բորբորւած Տէր Եղիշէն, ժողովուրդը այդպէս բան երբէք չի կարող ցանկալ, իրաւունք էլ չունի մտածելու: Այդ մի քա-

նի աղաների մտածմունքն է, որ ժողովրդի կամբը չի կարող դառնալ: Ժողովի հրաւիրեցէք և մեծամասնութեան ձայնով վճռել տանք հարցը:

— Այդ իմ իշխանութիւնից վեր է, կարող էր զիմել բարձր իշխանութեան:

Տեսա որ խօսակիցները ինձ վրա ուշադրութիւն չզարձրին. բացի բարեխա չափաասխանելը այնպէս էին վարում, որ իբր թէ այնտեղ ներկա չլինէի, ուստի գլուխս ցոյց տալու համար խօսքի մէջ մտա և իմ համոզմունքս պարզապէս առաջադրեցի ասելով.

— Տէր հայր, դուք սխալում էք, հայ եկեղեցիի կարգերի և ծէսերի համաձայն, պէտք է ամէն մի քահանա իւր ծուխն ունենա, ամէն ծխական իր որոշ և մշտնջենաւոր քահանան: Այս աւանդութիւնը անխախտ պահպանելը մեր բոլորիս նւիրական պարտականութիւնն է, իսկ դուք, ցուալի է, որ նոյն եկեղեցիի պաշտօնեա էք, դուք ինքներդ ոտնատակ էր տալիս այդ հայրապետական կարգերը:

— Գու ի՞նչ, դու ո՞վ, այ «կտորած գղալ», ասաց Տէր Խորէնը, դու արգետօք հասկանում ես, թէ բանը ի՞նչումն է, որ այդպէս խոշոր խոշոր բրդում ես... Սա հասարակական գործ է, քիմիական աղեր չէ, որ խառնափշտորես:

— Տէր հայր, գոպեցէք ձեզ...

— Վայ մեզ որ «կտորած գղալները» պիտի սովորեցնեն մեր պարտականութիւնները: Ախար եթէ դու կարողանաս հասկանալ, ըմբռնել թէ՛ հարցը ինչ բանի վրա է կայանում, ես հաւատացած եմ,

որ երբէք այդպէս չես խօսիլ: Դու չես ըմբռնում թէ նրա հեռաւոր նպատակը որտեղ է և ծխերը բաժանելուց յետո, զործը ուր կհասնի: Այն, այսօր նա համաձայն է ունենալ երկու հարիւր ամենադրատ ընտանիք իրեն յատուկ ծուխ, թուղնելով հարուստները ուրիշներին. բայց էգուց հարուստ ծուխերը նրանից զրգւած մի մի խնդրագիր կտան թիմակալին, որ իրենք չեն ուզում իրենց ծխատէր այսինչ քահանային, այլ ուզում են իրեն՝ Տէր Եղիշէին, կամ մը ուրիշին: Թէմակալը իրաւունք ունի ժողովրդին ասելու. — Դու եղիր սրան ծուխ, կամ ներան ծուխ, այլ ծուխը պէտք է իրեն համար ծխական քահանա ընտրէ: Այդպիսով հարուստները, իզգալի օջախները կանցնեն ճարպիկներին ճանկը, իսկ տնանկները շունետրները կմնան առանց ծխականի, կամ այնպիսի ծխականներ կունենան. որոնց երեսը տարիներով հագիւ թէ տեսնեն:

— Այլ էլ ուղիւ է, ասացի Տէր Խորէնին, դու էլ ճիշտ ես ասում: Բայց չէ որ նրա ասածի մէջ էլ ճշմարտութիւն կայ:

— Է՛հ, ասաց Տէր Խորէնը դէմքը թթւեցնելով և ուտելու շարժելով, միթէ կարելի է «կոտրած - զգալի» հետ խօսել, միտք փոխանակել. երբ ամէն մի կողմին էլ կարող է պատասխանել, թէ «ճշմարիտ է քու ասածն էլ,» ու հեռացաւ:

Էլի «կոտրած - զգալ», քիչ է մնում խելագարէլի: Այնք ինչ են իմացել սրանք, ինչ է պատահել: Բայց արդէն Տէր Եղիշէն հեռացել էր, մինչ Տէր Խորէնը ինձ հասկացնում էր կօլէզի հեռաւոր

նպատակները: Հետեցի, բայց հետքը կորցրի: Մոլորած հրապարակի շուրջը ման էի գալիս, քայլերս տանս կողմը էի կարողանում ուղղել: Չարունակ գլխումս պամւած էր մեխի նման «կոտրած - զգալը» «հինախ - զգալը և բացատրել չէի կարողանում: Ծանօթներիս բարեններին անսիրտ պատասխանելով շարունակում էի քայլերս մեքենական շարժումներով:

Դէմքը զիմաւորեցին ընկերակիցներս, որոնք քսան քայլ հեռւից արդէն սկսեցին քրքջալ և ծիծաղել: Յայտնի բան է այդ ժպիտներն ու խնդումները ինձ համար էին, բայց արդեօք սէրի, յարգանքի, թէ ծարրի նշան էր, չէ կարելի բացատրել: Ինչպէս կարելի է մարդու հոգու խորքերը թափանցել, քննել և զգալ նրա վիճակը, երբ հոգին չի անդրադառնում հայելու նման դէմքի մէջ, կամ կուրծքը թափանցիկ չէ, որ գնես ներքին աշխարհը: Եթէ սիրտը թափանցիկ և տեսանելի լինէր, միթէ խորամիտ մարդիկ նրան էլ չպիտի կարողանային շարժել և կեղծել: Բայց քանիոր ինձ համար էին խնդում, ես միշտ սովոր եմ այդպիսի ծիծաղները ինձ նպատաւոր կերպով բացատրել, կարծել որ նրանք դէպ ինձ ունեցած բարեսիրտ յարգանքն էին արտայայտում որոշ վարկածութիւններով: Տասը քայլ հեռաւորութիւնից արդէն բարենները տեղացրին և ես շփոթեցի չէի իմանում դէմքս, հայեացքս որ մէկի կողմը դարձնել, որին յայտնել ջերմ զգացումներըս:

— Քէֆդ, հալո, որտեղ էիր, ինչի չես երե-

ուամ, ինչի տխուր էս, ամէն բերան մի հարց էր տալիս, առանց իմ հողեկան վիճակի մասին տեղեկութիւն ունենալու: Ես լուռ մտտեցա, ձեռքերը սեղմեցի և դարձա նրանց հետ ձեմելու, վրդովումս և վիշտս ցրելու յոյսով: Ընդհատուած խօսակցութեան կարեւած թէլի ծայրը ձեռքից բաց չթողնելով, Մարգարեանը շարունակեց.

— Զատ էլ մեր պապերը այս ու այն դիրքը դրել են, կարգը սահմանել են և դարբերով կուրութեամբ հետեւել են: Ասացէք, խնդրում եմ, կարգը պապերն են դրել, թէ մի ուրիշ գերբնական զօրութեամբ է կազմուել: Դրեւած կարգը հասարակութեան շահի, թէ վնասի համար են սահմանել: Հետոմ մեր պապերը իրենց շահերի համաձայն, այդպէս բարուք են համարել և տնօրինել: Իսկ ներկայիս պահանջների համաձայն, քանի որ հինը վնասակար է, միթէ մենք մեր պապերի նման իրաւունք չունինք կարգերը փոփոխել մեր կարիքների և պահանջների համեմատ:

— Կարծիր չկա, պատասխանեց նրա բնդդիմախօս Մ. - Զօղալեանցը, որ կարգերը մարդիկ են սահմանել հասարակութեան բարիի համար: Բայց ներկայիս կարգերը փոփոխելու կարիքը գեռ չէ զգացուում և մի օրէնք որ սահմանուած է միլիոնաւոր ժողովրդի համար, այդ օրէնքը չի կարելի փոփոխութեան ենթարկել մի քանի անհատների հայեցողութեան համեմատ: Մանաւանդոր մի այդպիսի փոփոխութիւն կարող է առիթ գառնալ աւելի արմատական փոփոխութիւնների, որով բոլորովին կարող է

կործանել այն շէնքը, որը քանդելով վերաշինելու միջոց, կարողութիւն — հնարութիւն չունինք ներկայումս:

— Բայց եթէ այդ շէնքը թողնենք իւր խարխուլ վիճակի մէջ, նա յանկարծ այնպէս փուլ կգա, որ բոլոր ապրողները մէջը կկործանուին: Այս բանը աչքի առաջ ունենալով, ինչի թողնենք, որ այդ աւերակներում մարդիկ ապրեն միշտ փլատակների տակ մնալու սոսկումով: Մենք մեր ամբողջ կեանքը գառնացնենք աւերակների մէջ, զրկենք յառաջադիմական քայլերից և սոսկանք վիճակներիցս, թէ ինչ է, գուցէ չկարողացանք վերանորոգել մեր ժառանգական աւերակները: Ինչի փոփոխել էք ձեր տարազը, նիստը, կացը, ուտելիքը, խմելիքը, յարաբերութիւնները, չէք ուզում փոփոխել և եկեղեցական, ծխական աւանդութիւններն ու սովորութիւնները: Նայեցէք ձեր շուրջը, ձեր վրան զլուխը, ընտանիքը և կհամոզուիք, որ մեր ժառանգական սովորութիւններից ոչինչ չէք պահել կեանքի շրջանում:

— Էհ, գահլա տարաք ձեր պահպանողական և արմատական փիլիսոփայութիւններով, վրա բերեց Զահ - Բուդաղեանցը: Տէր Խորէնի և Տէր Նդիշէի հացի խնդիրը զբաղեցրել է բոլորիդ: Ուրիշ ցաւ չունիք, ինչ է, որ այդպիսի մի փոքր խնդրի առթով ամբողջ ժամեր զղում էք շինել մեր գլուխները: Երկուսն էլ ժողովրդին մաշկելու հնար են մտածում, երկուսի էլ աչքը ուզուած են մեր կաթին ու բրբղին:

— Ամերիկան գտնը, էլի, ասաց Մարգարեա-

նը: Հարցը շարիքի փորձագույնն ընտրելն ու ժողովրդի շահերի նպաստող կողմն անցնելն է: Տէր-Եղիշէն մտածում է հովւի նման ժողովրդին հօտի վերածել, բաժան բաժան անել ժեղւիտի նման էլ իւրացրած ոչխարի կաթն ու բուրդը արիւնի հետ ծծել: Այն ինչ Տէր Խորէնի սիսակմով կղերի գերիշխանութիւնը ժողովրդի վրա մասամբ չէզոքանում է, հասարակութիւնը աւելի սառնասիրտ հայեացք է ուղղում հոգևորականութեան ծիսակատարութեան վրա, ընտելութիւնը թուլանում է, մտերմութիւնը դադարում և ժողովուրդը քննդատում է, այն պատգամները, որոնց հստատակում էր մի ժամանակ ամենայն սրբութեամբ և հեղութեամբ: Ահա թէ ինչի երիտասարդութիւնը պէտք է Տէր Խորէնին աջակցի, այնպէս չէ, հարցն ինձ ուղղեց Մարգարեանը ժպտերես:

Ճշմարիտն ասած ես շփոթեցի: Երկու սրի մէջն էի, երկու կողմից ո՛չ մէկի հետ ընդհարել, վէճի ջոնելի երբէք չէի ցանկալուստի դանդաղ մըտածումներով ասացի:

— Գիտէք, պարոններ, ինչ կա, ուս մի հարց է, որ շատ լրջութեամբ պէտք է քննադատել և ապա լուծել: Գիտի ասեմ, որ իմ կարծիքս նրանց համար մեծ նշանակութիւն ունէր, զիրքս պահպանելու համար պէտք էր հեռատես լինիլ:

— Այստեղ, պարոններ, շարունակեցի, կարծիքի խնդիր չկա, այստեղ սկզբունքի հարց կա և ազնիւ մարդու համար ամէնից գլխաւորն սկզբունքն է: Ուստի անպողա յոյսից անշափ պէտք է գերադասել այժմէութիւնը: Ապագայի ինչոր աղօտ յոյսի նշոյլի

համար պէտք չէ այսօր կեանքերս խաւարեցնենք, վտանգալի աւերակներում օրերս մթնացնելով և յաւիտենականապէս կործանելու, կլանելու վտանգին մատնել մեր կեանքը, գոյութիւնը և սերունդը: Նոյնպէս անբարեխղճութիւն է մեր ներկա վայելքների համար, առանց դրական փաստ ձեռքերումս ունենալու, ուրիշների յուսացած աղօտ ապագա դամպարը հանդցնել: Իմ կարծիքս այն է, որ մենք կարող ենք մեր աւերակների մօտ վրաններ խփել, ապրել, նրանց շուրջը, քաղաքակրթական ապարանքների հիմքերը գցել, որմերը, կամարները հիւսել, կապել: Իսկ մեր հակառակորդները ողբալով իրենց կործանած փառքը, ներբողելով անցեալը, կսպասեն իրենց գուշակած դամբարի լոյսի յայտնելուն: Մենք կարող ենք մեր գործն առաջ վարել մեր համոզումների համաձայն և բարեկամ մնալ թէ Տէր Խորէնին, թէ տէր Եղիշէին: Այս ընթացքով, թէ կվայելենք քաղաքակրթութեան բարիքները, թէ կկուենք առաջադիմական բանակի հակառակորդների հետ մեր խղճի թելադրման համաձայն և թէ չենք արագացնիլ այն փլատակի անկումը, որը վերականգնելու յոյս ունին շատերը, որտեղից ծագելիք արևը կարող է գուցէ ապագայում նպաստել և մեր պրօպագանդային...

— « Գոտրած - գրնայ ». ասաց գէմբը ծամածռուելով Մարգարեանը: Յիմարը ես եմ, որ լսում եմ սրա դատարկաբանութիւնները: Մի մարդ որ պատրաստ է ամէն ըոպէ կշէնքի ծանր թաթը թուշելու, միթէ կարելի է նրանից համոզմունք գոյացնել:

— Իրար համոզումը չյարգելու իրաւունք

չունինք, ասացի յուզւած, հայհոյանքով չես կարող բռնաբարել համոզմունքս:

— Համոզումները ես էլ եմ յարգում, բայց ոչ թէ « հինայի - գղալի » բարբաջանքները, որը կողմերին հաճոյանալու համար պատրաստ է ամէն գոյնից խառնուրդ շապիկ հագնելու:

— Չափաւորիք հայհոյանքներդ...

— Լաւ, լաւ, դադարեցէք, միջամտեցին ամէն կողմից և ես մի քանի բոպէից յետո, նրանցից բաժանւած, դրօսնում էի ծովափում: Աչքերիս թւում էր, թէ ամբողջ աշխարհն այլակերպւել էր, ամէն բան տարբեր գոյներով էր ներգործում ջրերիս վրա: Մինչև անգամ մարդկանց յարաբերութիւնների մէջ ահաւոր փոփոխութիւններ էի նկատում: « Կոտրած - գղալը » աչքիս առաջից չէր հեռանում, մտապատկերներումս « կոտրած - գղալներ », « հինայոտ գղալներ » էին դիզւած, ականջիս թաղանթին անդադար բաղխում էր « կոտրած - գղալ », « հինայի - գղալ » խօսքերը ճակատիս դրօշմողների արտասանութեամբ և առողանութեամբ: Միտքս ուր չէր թռչում, ինչեր չէի երևակայում: Կասկածում էի, որ այն հինա բերող ջապու — բաւթաւը կախարդել էր ինձ: Ո՞վ կարող էր գուշակել, թէ ինչ հեռաւոր նրպատակով: Ո՞վ է իմանում, թէ ինչ թալիսիմա էր բերել այն աջամական հինաի հետ մեր տուն: Հինաի փոշին մեր տունը սփռելուց յետո, կարծես ինձ կախարդական շապիկ հագցրին և ամէն պատահողի աչքում ես թւում եմ, նմանում եմ « կոտրած - գղալի », հինաի - գղալի: Կարծես իմ աչքումս անգամ

բնկա, ( խօսքը մեր մէջը, առաջ էլ վրաս լաւ համարում չունէի ) և ամաչում եմ, որ սկզբունքներիս հակառակ կախարդութեան գոյութեան մասին համոզումներս արմատներ են դցում սրտիս ջրերի մէջ: Աչքովս անձս գննելով, ինքս ինձ եմ տեսնում, բայց օտարների աչքում այս ահագին իրանս մի կոտրած - գղալ է երևում: Կատարեալ թալիսիմա էր այն անիծւած հինան. իսկ պառաւը ձձում նստած կախարդ, որն օձը ձեռին մտրակ շինած ինձ հալածում է:

Գնացի նահանգապետի այգին և առանց տատանելու մտա ակմբանոցի բնիթերցարանը աչքից անցկացնելու, որպէսզի դառն մտածութիւններս ցրեմ: Կարգալու բոլորովին հաւաս չունէի, սկսեցի պատկերագարդ հանդէսները թերթել: Չարմանալի է աշխարհը, միջնադարեան աշճատութիւնները, անհամաչափ անճոռնիութիւնները նորից ասպարէզ են եկել և զեզարեւտը, համաշափական սքանչելիքները, նրբակազմ ձեռակերտները, ակնապարար վանիւածև նկարները բացակայում են ամէն թերթից և հրէշաւոր պոչերով ու պոզերով լեզմաւարները տեղ են գրաւել: Գարձրի թերթերը գրաւիչ մի պատկեր գտնելու յոյսով, բայց գուր, շինական, ժաբոնական ծամածռութիւնների նման խազմոյցներ էին իրար հետևում, բուզայական, մանդարինական այլանդակութիւններ էին միմեանց յաջորդում: Չկարողացայ զգացումներս գտակել, ասացի դրասեղանը շրջապատողներին.

— Կլուրի վարչութիւնը միթէ գտած փողեր

շատ ունի, որ այս այլակերպ հրէշական նկարների վրա ահագին ծախսեր է անում և ընթերցողների, յաճախորդների ճաշակն է բթսցնում:

— Ի՞նչ է պատահել, ի՞նչ այլանդակութիւնների մասին է ձեր խօսքը, միջամտեց պաղարանատը, որ գրքեր էր բաժանում ակմբանոցի յաճախորդներին և պարտաւոր էր նկատողութիւնները յատուկ մատեանում արձանագրելու: Գէմբս ծամածուկով հանդէսների թերթերը շորտեցի և պատկերները ուղղեցի աչքերը ինձ վրա յառողներին: Ամէները հետաքրքրական լուրջ գէմբ ընդունեցին և զարմացական հայեացք ուղղեցին գէպ ինձ, իսկ կլուրի վարիչներից մէկն ասաց.

— « Կոտրած - գգալը » միթէ կարող է դատել դեկադենտական նկարները: Քո տեղը հինաի թասն է, գնա, գլորւիք և ինչքան ուզենաս գէլին տուր:

— Պարոն... պարոն... պարոն... մի բանի անգամ ընդհատեցի, բայց ո՞վ է լսողը: Վերջապէս դուացի, - պարոն, դուք չափն անցրիք...

— Դուք չափն անցրիք, ասաց հեզնաբար և յարեց, խնդրում եմ, իսկոյն հեռանանք, եթէ չէք ուզում, որ ձեզ դուրս շարտեն ընթերցարանից, « հինաի — գգալ »:

— Դուք... դուք... լեզուս էլ բռնեց:

— Ես օրապահ վարիչ եմ այստեղ, ձեզ էլ հրամայում եմ, որ դուրս գաք, « կոտրած - գգալ », հակառակ գէպքում սպասաւորները դուրս կշարտեն: Էլ ճար չկար, թէև դուրս եկա, բայց չկոտր-

ւեցի, դռնից նրան վերադարձրի արժանաւոր սպասախանը.

— Դուք բռնակալ էք, ես արհամարում եմ ձեր հրամանը: Դուք խեղդում էք անհատի ձայնը, ըստորաբար կեզտոտ անոււններ էք կնքում...

— Կորիք, « հինաի - գգալ », քո տեղը...

Միւսը չկարողացա իմանալ, իսկ դուք կարող էք բմբռնել, թէ ինչ կարող էր լինիլ: Ինչ էլ որ լինի, հողս չէ, այնպիսի բուրժուայի կարծիքը ո՞վ է բանի տեղ գնում, թէև բիշ առաջ գէմսկրատ վարժապետներն էլ այդ բառերը շարտեցին երեսիս: Ասենք վարժապետներն էլ մի գատ չեն, բայց բանը նրանուան է, որ ամէնքը միաբերան « հինաի - գգալ » և « կոտրած - գգալ » են կանչում: Թէև ուզում եմ արհամարել բոլորին, բայց այդ բառերը ծակում են ականջներս, որտեղից սնդիկի նման լցուկ են սրտիս խորշերը և այնքան են այնտեղ կուտակել, ծանրացել, որ գայրութիցս քիչ է մնում ճարեմ:

Անդգայաբար առաջ գնալով հասել էի բնակարանիս դռանը ուշքս, միտքս բոլորովին ցրած: Երբ սենեակներից լսեցի կնոջս սրտման ազմուկը, իսկոյն շանթահարի նման սթափուեցի: Ինակարանս շուր եկաւ դիսիս, կարծես մի գոյլ սառը ջուր ածեցին վրաս: Միբտ չարի կնոջս դիմաւորելու, առանց շշուկ բարձրացնելու դուրս եկա թափառումներս շարունակելու: Սրտագոյ առաջ էի գնում մայթերից, ամէն շուր, ամէն ականարկ, ամէն հեզնանք և ծիծաղ թուում էր թէ ինձ էին ուղղւած: Ոչ միայն

փողոցային լամուկները, կառքերի զզրոցը տրամուայի ճրճուցը, բամբին՝ լւազրին անգամ «կոտրած - գզալ» էին սուլում ականջիս: Գուցէ կասկածիք, բայց հաւատացնում եմ, որ ականջներումս բաղխւած ամէն մի ձայն «հինաի - գզալ» էր հնչում: Ծովափից աննպատակ բայերս մշեցի առաջ, մեքենաբար երկրորդ անգամ անցա նահանգապետի այգուց, բարձրացա մթերանոցների մօտով իջա պարակետ, շրջան տւի, գնացի Մալականի այգին և էլ չեմ յիշում որ փողոցները: Թուլութիւն եկաւ վրաս, ստամոքսս լողոք էր բարձրացրել սրունքներէս դէմ, քաղցը բայերս ուզղեց դէպի աժանագին ճաշարան:

Մտա սրահը, ուր ահաւոր բազմութիւնը որկորի սպասին էր ծառայում: Կարծես թէ տօն լինէր, բանուոր, գործաւոր, մերենավար իրար բով բոլսրւած, կարծես միմիեանց հետ զբազ մտած, աշխատում էին ստամոքսները բեռնաւորելու համար իրար դէմ մրցել: Մէկը կերած ձկի խորովածը ուզում էր զինիով լողացնել, երկրորդը կովի բիւֆշտէքսը՝ զարեջրով յագեցնել, երրորդը խորոված դաւը՝ օղիով կենդանացնել և ամէնքն էլ ազահաբար կանանչ էին կլանում, որ կլանած և ստամոքսներում զետեղած բուսակեր կենդանիներն առատ արածեն ու որոճան: Այս մրցումը իմ էլ անկուշտ ստամոքսս զրգուեց, (պէտք է խոստովանւեմ, որ ախորժակի կողմից իսկապէս տէրտէրացու եմ,) ես էլ տեղաւորեցի մի անկիւնում, պահանջներս կուտակեցի սպասաւորի ականջում. որը աջալըջութեամբ ընդու-

նեց և սրամիտ քայլացքով սլացաւ իւր գործին:

Սովորաբար ճաշելիս թէև ամբողջ աշխարհ մոռանում, մարանչում եմ ատամներովս խորակների հետ, խոհարարի պակասորդը լրացնում եմ ջարդ ու փշուր անելով միս, ջիդ, ոսկոր, ամէն բան և միայն անձնատուր եմ լինում խաղոյի հիւթին, որը նւաճում է ինձ, բայց այդ ճաշի սեղան նստելուց յետո, երբէք աչքիս առաջից չանհետացաւ այն անիծեալ կախարդական «կոտրած - գզալը»: Կարծես ճակատիս մէջտեղը միւււրւած լինէր գզալի պոչը և բիթս հովանաւորում ձւաձև շրով: Ուտում էի, ատամներս երբէք չէին դադարում, բայց աննզհատ պարտաւորւած էի հայեացքս կերակուրից դարձնել բիթս վրա կախւած գզալին և գննել ամբողջ անձս, սրտիս խորքից հառաչանքներ արձակելով: Այնպէս էի խորուել այս մտքերի մէջ, որ երբեմն երբեմն ամբողջ մարմինս «կոտրած - գզալի» ձևով էր երևում աչքիդիս, թէև բանականութիւնս, շօշափելիքներս, լսելիքս փարատելու էին ձգտում այս կասկածներս, բայց սրտիս խորքերից իսպառ չէր անհտանում այդ սոսկալի շփոթութիւնը: Վիշտս թմրեցնելու, սև մտքերս ցրելու նպատակով, բաժակի զինին անվերջ մեծ հահոյրով տեղափոխում էի ստամոքսս: Թէ ինչքան տեեց նախաճաշս և որքան լրցրի ամբարս չգիտեմ, միայն թէ յիշում եմ, որ իրար ետեից նոր յաճախարկներ էին մտնում ճաշարան, կըշտացածները զուրս էին դնում:

Խօսակցութիւններից բան չեմ յիշում, միայն նկատեցի, որ դէմս նստած մի հաստափոր պարոն

շատ հետամուտ էր սառը գարեջրին: Նրա առաջ շիշերը սեղանի վրայ այնքան խիտ էին շարւած, որ չէի կարողանում ազատ դիտել այդ թանձր մարմինի շարժումները: Ցաւեցա խղճալու վրա, որը խոզի նման մարմինը գարու հիւթով պարարտացնելու էր ձգում: Կարծես թէ այդ մսի բլուրից երշիկ ու ապուխտ էին պատրաստելու: Գիտէք, որ լուել չէի կարող, մանաւանդ պարագային, ուստի անձանօթին մի բաժակ կար: Իր կախեթի գինի առաջարկեցի ու ասացի.

— Պարոն, ներեցէք նշատողութեանս, թողել էք մարդավայել ազնիւ գինին, ստամոքսներդ բեռնաւորում էք խոզի ըմպելիքով:

— «Կոտրած — գզալ», ճշած վրաս և մի շիշ հասցրեց ուղակի ճակատիս:

— Գնրս տարէք այս «հիտայի - գզալը», տարէք խոհանոց և կեղտոտ ամանների ջրով մի լաւ լացէք, շարունակեց հակառակորդս բորբոքւած:

Ճակատիս վերքը, հոսող արիւնս, կսկիծը այնքան չվրդովեցին հոգիս, որքան թունաւորեց սիրտս նրա արտասանած «կոտրած - գզալ» երկու խօսքը: Բարկութիւնիցս աչքերս մթնեց և լեզուս կարկամեց:

— Գնրս, տարէք խոհանոց այդ «հինայի - գզալը», գոռաց բիւֆէտի կառավարիչը, տարէք, գլխին սառը ջուր ածեցէք, գուցէ խելօքանա: Գլխներիս փորձանք դարձաւ այդ «կոտրած - գզալը», կարող է ոստկանութիւնը ներս մտնել, մեզ տուգանել, հիւրերիս դադաստանի մատնել:

— Սառը ջուրն ափսոս է, լացւած ամանների ճենճոտ ջուրն էլ շատ է այդ «կոտրած - գզալին», գոռաց դարձեալ հաստափոր հակառակորդս, մի քանի հայհոյանքների յաւելւածով:

Ես սրբիչով գլուխս բռնած դուրս եկա երկու լակոտների ընկերակցութեամբ, որոնք իբր թեքս էին մտել: Անմիջապէս գլխիս սառը ջուր ածեցին, սառուցի կտորներ դրին: Բայց այնքան մեծ էր վերքըս, այնպէս հոսում էր արիւնս, որ պարտաւորւած վազ տւին, բժիշկ հրաւիրեցին: Ուշքս անցաւ..... Սթափւելիս ինձ գտա հիւանդանոցում, վիրաբոյժի և խնամատար քոյրի հսկողութեան յանձնւած: Արդէն ճրագները վառւած էր, ինքս էլ մահճակալի վրա գիտեղւած: Արիւնիս հոսանքը դադարել էր, վերքս կապւած, թէև ուժասպառ էի հղել, բայց ցանկալի չէր հիւանդանոցում գիշերել, կնոջս թողնել տարակուսանքների մէջ...: Մանաւանդ զրկել կնոջս պատրաստած կարկանդակից...:

— Խնդրում եմ՝ ինձ մի բաժակ սառը ջուր տւէք, ասացի խօսքս խնամատար բրոջն ուղղելով, որ կանգնած էր դիմացս աչքերը վրաս յառած, ծառա պապակել և շրթուրներս իրար է կպել:

— Բժիշկն արգելած է, պատասխանեց նա արձանի նման առանց տեղից շարժելու:

— Բայց խեղդում եմ, կոկորդս չորացել է, թքեմ ես զրանց գիտութեան վրա, ջուրը ինձ չի կարող վնասել: Ես ջրով սնւած մարդ եմ: Այդ դիտնականներն իրենց գիտութեամբ արդէն աչքիցս ընկան:

— Դուք դատելու և զրաբանելու իրաւունք չունինք, ասաց միւս կողմից վիրաբոյժը. մանաւանդ զիտուժեան դէմ զառանցելու: Այստեղ բժիշկի պատուէրի հակառակ անկարելի է վարել: Համբերեցէք, որ շուտով անցկացնէք ճգնաժամը:

— Ինչպէս թէ դատելու իրաւունք չունիմ, ինձ ինչ է պատահել, ինչ ճգնաժամ է:

— Լաւ, լաւ, լուսեցէք, հանգիստ պառկեցէք, յետո, լաւանալուց յետո կարող էք վիճել:

— Ո՛չ կլուեմ, ո՛չ էլ կպառկեմ, ասացի խրախուսած խնամատար բրոջ զիջողական պատասխանից յետո: Մի ջուր տւէք, ծարաւս յագեցնեմ, կազդուրւեմ. դնամ տուն: Կինս այժմ մտատանջութեան մէջ կլինի:

— Լսիր, հանգարուիր, համբերիր: Կնոջ մասին մտածողը ճաշարանում այնքան չէր լակել և այսպիսի խայտառակութեամբ հիւանդանոց չէր մըտնի: Քո մասին այժմ տնօրէնութիւն կարող է անել միայն բժիշկը, ասաց վիրաբուժը շինովնիկական տօնով:

Սրա խօսքերից սոսկացի, կարծեցի թէ ուտիկանութիւնը ինձ կալանաւորած և հիւանդանոց է ուղարկած մինչև ասպարինելս: Մի սառն բրտինք վրաս թափեց այս միտքը և ես բորբոքւած ասի.

— Բռնութիւն է, ինչ է: Պէտք չէ, ո՛չ ձեր օգնութիւնը, ո՛չ էլ ձեր խստութիւնները:

— Լսիր, «կոտրած — գզալ», ինչ ես խառնում քեզ չվերաբերուող հարցերին:

— Ինչպէս թէ ինձ չվերաբերուող...

— «Հինաի - գզալ», լուր, բանակուիւր աւելի կարող է քո վիճակը ծանրացնել:

— Զնորհակալ եմ ձեր վարմունքից, մարդու բանտարկում էք, նախատում էք և ապա ստիպում, որ լուի: Զեմ լուի, տւէք շորերս, ես գնամ, ասացի ու զլուխս բարձրացրի վերմակի վրայից:

— Ա՛յ «կոտրած - գզալ», հանգիստ պառկիր, թէ չէ, կհրամայեմ, քեզ խելագարի շապիկ կը հագցնեն, այնպէս կկապտեն, որ ոչ միայն անդամներդ, այլ լեզուդ էլ շարժելու կարողութիւնից կզրկւես, ասաց զայրացած վերաբոյժը:

— Ուրեմն սա ոչ թէ մարդասիրական, այլ բռնակալական հիմնարկութիւն է... Ես բանտում եմ... Ճշմարիտը վերսրոյժի սպառնալիքն այնքան ազդեց, որ նստելու, խօսելու հնար չունէի: Բայց ծարաւը, պապակն այնքան չէր ճնշում, որքան տանջո մ էր վերաբոյժի նախատինջները, «կոտրած - գզալ», «հինաի - գզալ», այն էլ խնամատար բրոջ ներկայութեամբ: Աչքերս էլ պինդ խփեցի, որ այդ դահիճ վերաբուժի երեսը չտեսնեմ, բայց անհրեար էր հանգստանալ: Մտապատկերներումս խրոնւել էին կինս, բաղնիսպանը, Տէր Խորէնը, փողոցի ստահակները, Մարգարեանը, ակմբանոցի վերատեսուչը, ճաշարանի կասաւարիչը, գարեջրի հաստափոր սիրահարը, լակէյները, վիրաբոյժը, խնամատար բոյրը. անցորդները և կառապանները ձեռքերին բռնած կոտրած - գզալներ ինձ հալածում էին և և ամէն կողմից կրկնում «հինաի - գզալ», «կոտրած - գզալ»: Այդ գզալների հալածանքից ուր որ

փախչում էի, որքան որ թափառում էի, որ անկիւնը առանձնութեան քաշում էի, կամ մտնում էի խոնրւած, ամբոխի շրջանը, ազատելու հնար չէի գտնում: Պատահող փողոցային ստահակը, շրջաններից դուրս գցւած սրիկան, անդործ ու հարբաց բանուրը, մըշակն ու մուրացկանը, խանութի աշակերտն ու ստիկանը բոլորը միաբերան ծիծաղում, « հինախի - դըզալ » էին կրկնում և ամէն մէկը օդի մէջ ծածանում էր ձեռքին բռնած « կոտրած - գզալը »: Այս երգներով որքան եմ տառապել, չեմ յիշում, հիւանդանոցի մէջ որքան եմ մնացել չգիտեմ, միայն առողջանալուց յետո էլ՝ թէ բժիշկը, թէ վիրաբոյժը, թէ խնամատար բոյրը, երբ երեսիս էին նայում և ժպտում, կարծես թէ լսում էի նրանց մրմնջած « կոտրած - գզալը »:

Ինչպէս ինձ պատմեցին, հիւանդութեանս ճղնաժամերին կինս յաճախ այցելել է հիւանդանոց, այնպէս վշտանում և լալիս է եղել, որ յաճախ ուշքը կորցրած հազիւ կարողանում է կառք նստել և վերադառնալ: Չեմ հասկանում, թէ ինչ աստիճան կեղծաւորութիւն է, այն էլ ինչ նպատակով: Թէ ինձ սիրում է, սէրը նրան ստիպելու է ինձ յարգել, որով իմ կամքս, ցանկութիւններս նորա համար սրբութիւն պիտի լինի: Նորա ինձ յայտնապէս արհամարելուն կասկած չունիմ. ուրեմն այդ ինչ վշտի արտայայտութիւն է, ինչ արտասուք է, մարդ մտածելով մոլորւում է: Եթէ նա ինձ սիրէր, ինչի պիտի ինձ այն աստիճան դառնացնէր, որ ես պարտաւորւած նորանից խոյս տայի և դիմէի էժանակին ճա-

շարան, ինչի պիտի գլուխս պատուէր և ես հիւանդանոց ընկնէի այսպիսի խայտառակութեամբ: Քանի որ կինս ինձ արհամարում է, հետևաբար և ատում, էլ ինչ հարկ կա ինձ փնտռելու, կեղծելու, և ողբերգական տեսարաններ ներկայացնելու...: Եթէ ես հինախի գզալ եմ, ինձ ջարդ ու փշուր ես անում, թասի մէջ կողերս ջարդում, էլ ինչի ես հետամտում ինձ արտասուքով...:

Վերջապէս առողջացա, բայց վիրաբոյժի ծաղրին ու ներհակութիւններին շմտնելու համար, էլ շառաջարկեցի, որ ինձ արձակեն հիւանդանոցից: Բժիշկը յայտնեց, որ դեռ մի շաբաթ էլ չի կարող ինձ բաց թողնել, խնամքի և ոյժի կարիք ունէի: Ամէն օր էինս գալիս էր, ինձ համար այլևայլ սննդաբար քաղցրաւէնիներ և կարկանդակներ բերելով: Ես ընդունում էի այդ նիւթերը, խժուում, բայց իրար հետ քթով էինք, շատ քիչ էինք խօսում: Զգուշանում էի, որ բժիշկը, վիրաբոյժը, խնամատար բոյրը, ծառայողները չնկատեն մեր սառն յարաբերութիւնը: Տուն դառնալ չէի ցանկանում, թէ և հիւանդանոցը բանտ էր կատարեալ ինձ համար ազատ օդը, բուլւարների մի պտոյտը կեանք էր, բայց քանի որ երևակայում էի մեր գնդան բնակարանը, դահիճ կնոջս շարժումները, մանաւանդ նորա անվերջ կըրկնած « կոտրած - գզալ » տխրոսը, կարծես սրտիս մէջ տէգ էր խրուում և անդադար խոցոտում ու կըսկծացնում: Բայց ճար չկար, ժամանակը լրանալու պէս կօշիկներս առաջս դրին: Պէտք էր հիւանդանոցի լաթերը հանել, հալաւս հագնել և ճանապարհ

ընկնել: Է՛լ հնար չկար, ոտքի ելա:

Ուղղակի չէի գնալ բնակարանս, եթէ կինս վաղօրոք կառք վարձած և հիւրասենեակում ինձ շտապէր: Գարձեալ մտա նոյն շարաքաստիկ ննջարանը, որտեղից տասնհինգ օր առաջ լսում էի կնոջըս և հինաի դեղդիր վհուկի խօսակցութիւնները: Կինս մի քանի ծանօթ տիկիներէի հիւրընկալութեամբն էր դբադւած, որոնք շտապել էին աչքալոյսի դալ իմ ապաքինութեան, իրենց կարել տւած նոր շրջագրաստները և գղակները ցոյց տալու համար: Ուսում էին, խմում և քահրահ ծիծաղում, իսկ հեռանալ և ինձ հանդիստ թողնելը անբաղարարութիւն էին համարում: Գրութիւնս կարող էք երեւակայել, սենեակում փակւած, ո՛չ կարող էի բնել, ո՛չ աշխատել, ո՛չ էի դուրս գալ: Կնոջս քմահաճոյքներին, հիւրերի վայելչութիւններին բաւականացնելու համար պարտաւոր էի լուել, համբերել և տոկալ...: Բայց դա իմ բնաւորութեան հակառակ լինելու համոզումը կարծում եմ, որ արդէն կազմած էք: Նրանց ընթացքը ինձ արհամարելն էր, ուղղակի ուզում էին վիրաւորել, ևս ինչպէս տանէի: Գուռը կամաց բացի և կանչեցի. — Սարէթ, Սարէթ:

Յայտնի բան է արհամարանքը պաղածնակէտին հասցնելու համար, ձեացրին թէ չլսեցին: Ես հաստատամտութեամբ ձայնս բարձրացրի և կրկնեցի. — Սարէթ, Սարէթ:

Կինս դրան մէջ կանգնելով դէմքը ցոյց տւեց:

— Մխար ևս հանգստութեան կարիք ունիմ,

ինչ աղմուկ էք բարձրացրել: Ճաշի ժամանակ է, թուրութիւն եմ դգում: Ե՞րբ են հիւրերդ հեռանալու:

— Առանց ուրիշի գործին միջամտելու կեանք չունիս, «կոտորած - գդալ», ասաց կինս աչքերը ոլորելով և ետեից դուռը փակելով: Ինչպէս հաճոյքիցդ չես ցանկանում գրկւել, մի խանդարիլ ուրիշների վայելքը: Հանգստանալ ես ուզում, պառկիր, տարածւիր, կամ քնիր: Մեր խօսակցութեան աղմուկը խանդարում է, հեռացիր գրասենեակդ, ուր անդարբութիւնդ կատարելապէս ապահով է: Ճաշին դեռ երկու ժամ կա, բայց թէ սոված ես, մի կտոր աղանդներ վերցրու պահարանից կեր, մինչև կերակուրի պատրաստելը: Խօսակից ես ուզում, սիրտդ նեղանում է, եկ, մեզ ընկերացիր, կամ հրաւիրիր ծանօթներիդ և կամ գնա՛ ընկերներիդ մօտ:

Այնքան խրատներ խօսեց, այնպիսի ճանապարհներ ցոյց տւեց, որ գլուխս շշմեց: Պիտի պատասխանէի, բայց հիւանդանոցից դուրս գալուս օքը տեսարան առաջացնել չցանկացայ: Գլուխս առի և դուրս եկա:

Մտա ընթերցարանի տակի կաթնատունը և մի բաժակ սառը կաթ խնդրեցի: Բարեբաղդարար ծանօթներս այնտեղ էին. սկսեցինք դէսից, դէնից խօսել ու ծիծաղել: Գեռ կաթնատանը սանդուխներից չիջած, ամէն կողմից սրախօսութիւններ տեղացրին ինձ վրա, այնպէս որ մուտքս հեղնաբաններին առատ նիւթ մատակարարեց և կենդանացրեց կաթնավաճառի ախուր ներքնայարկը: Ինձ ուղղած հար-

ցերին պարտաւորւած էի այնպիսի կարճ և երկգիմի պատասխաններ տալ, որ ծիծաղից թուլանում էին բոլորը և ոչ ոք չէր կարողանում պոչս բռնել և ինձ հալածել: Ամէնը ապուշ կտրած լսում էին ինձ և խօսքս շաւարտած բռնկում էր նրանց անվերջ ծիծաղը:

Այս միջոցին Տարօրինակեանը մի բաժակ կաթ և մի սիֆօն սէլթէրս պահանջեց: Ճշմարիտն ասած այսպիսի անսովոր բարբերը դժարս են գալիս, դեռ առաջին բաժակը չխմած, ասացի.

— Պարոն, ինչ էք անում, գիտէք, թէ ինչ սոսկալի բաղադրութիւն են կազմում կաթի հիւլէնները այդ կաւճային գազերի և աղերի հետ: Գրանք կարող են ստամոքսը խնոցու նման հարել և ջղերդ քայքայել:

— Է՛հ, ինչ էք ասում, պարոն Կոտ... ասաց Տարօրինակեանը, ահա տասը տարի է, որ ես շարունակ այս ըմպելիքով եմ կարգի բերում իմ փշացած ստամոքսը և դուք այժմ ուզում էք հակառակը պնդել:

— Այդ անկարելի բան է, անհաւատալի է, խելքի մօտ չէ...: Դուք մասնագէտ չէք և չէք կարող ըմբռնել. թէ կաթը ինչ բաղադրութիւնից է կազմւած, սէլթէրսի մէջ ինչ աղեր և ինչ գազեր կան: Այդ բանը խնդրեմ, թողնէք քիմիկոսներին գիտնալու, կաթնատնտեսներին բացատրելու... Համոզւեցէք և ինձ հաւատացէք, որ դա շարաշար կքայքայէ ձեր ստամոքսը, ջղերը և դուք մի օր կիշէք խօսքերս, բայց արդէն ուշ կլինի:

— Այսար ինչ է ասում, Հինի...: Ի՞նչ էք պնդում, ես ձեզ ասում եմ, որ ահա ճիշտ տասը տարի է, ստամոքսիս միակ բժիշկը և պահապանը այս կաթն ու սիֆօնն է, սա է ինձ փրկել և ապրեցրել:

— Անհաւատալի է... տարօրինակ է, արտակարգ երևոյթ, ասացի կախազելով և խսկոյն աւելացրի, անշափ զարմանալի է: Բայց ինչպէս եղաւ, որ դուք սկսեցիք այս միջոցը գործածել:

— Անպիայում, Լօնդօնումն էի, ստամոքսի սարսափելի թուլութիւն ստացա: Երկար տանջեցի և վերջապէս բժիշկները ինձ այս միջոցով փրկեցին, ասաց Տարօրինակեանը:

Զգացի որ բանս փլժուկ է, իսկոյն խօսքիս տօնը փոխեցի:

— Այդ տարբեր խնդիր է, ասացի, հարցը բոլորովին նոր կերպարանք ստացաւ: Անպատճառ դուք անգլիական ստամոքսային հիւանդութիւն էք ստացել, որից երևի միայն այս միջոցով հնարաւոր է փրկւել: Այո, Ինկլիզի բժիշկներն էլ իրաւունք ունին, դուք էլ իրաւունք ունիք, կարող էք շարունակել, երբ արդէն տասը տարուա փորձերով դգալի օգուտը տեսել էք:

— Ա՛խ դու, « կտրած - գգալ », մէջ ընկաւ սեղանակիցներից մէկը և բերանը ափեղ - ցփեղ խօսքերով աղտոտելով վրաս յարձակւեց:

— Պարոն, չէք ամաչում, ո՞ւմ էք անպատում, ասացի բաժակս վերցնելով, քիչ էր մնացել, որ խփէի, բայց ընկերակիցներիցս մէկը թեա բռնեց:

Լաւ էր, որ մէջ ընկաւ, թէ չէ էլի պիտի գլուխս կոտրւէր և հիւանդանոցի կարիք ունենայի:

— Տո՛, ո՞րտեղից էլ գտել ու կպցրել են այս անունը, ասաց Տարօրինակեանը, ճիշտ որ «կոտրած գգալ»:

— Պարո՛ն, պարո՛ն, սոսացի, բայց արդէն ինձ քաշեցին ու գուրս հանեցին մտերիմներս և ուղղակի բերին տուն:

Կնոջս բարեկամները դեռ տնից չէին հեռացել, ջիղերս դողում էր գայրութիցս, լաւ էր, որ ինձ առաջնորդողները դրսի դռնից ետ դարձան, թէ չէ բոլորովին պիտի խայտառակէի: Ա՛խ, երանի չէր լինի, եթէ կաթնատանը նորից գլուխս կոտրէին և կրկին ինձ առաջնորդէին հիւանդանոց, քանթէ բնակարանս որը բանտից վատ է ներգործում վրաս: Եղբայր, դուք եղէք իմ տեղս և մտածեցէք, որ եթէ այս վիճակին ենթարկւած լինիր, արդեօք չէք խելագարուիլ, իրապէս չէք բժժուիլ: Ես Աստծուց մարդ ստեղծւիմ, էութեամբս, գոյութեամբ մարդ լինեմ, խելք, միտք, հանճար, տաղանդ, բարձր զարգացում ունենամ և ինձ ամենամտերմից, կնոջիցս սկսեալ, մինչև ամենաստոր, անգամ գահիճս «Գղալ», «Հինաի գղալ», կամ «Պոտրած — գղալ» անուանեն: Սխար, այս խիղճ է, այս մարդկութիւն է:

Մտածմունքս ինձ այն աստիճանի հասցրեց, որ ես այժմ տարակուսանքի մէջ եմ, չգիտեմ իսկապէս մարդ եմ, թէ գղալ: Տատանւում եմ այս հարցը վճռելուց. թէ մարդ եմ, ինչի աշխարհ ինձ «հինաի գղալ» է անւանում, թէ գղալ եմ, ինչի գղացմունք,

հասկացողութիւն և լեզու ունիմ: Կատաղութիւնս այն աստիճանի բարձրացաւ, որ այս հարցը լուծելու համար դիմում եմ Ձեզ, Մեծապատիւ խմբագիր և խնդրում, որ այս հարցը Ձեր հանդիսի միջոցով հրապարակ դնէք, թո՛ղ հայ հասարակութեան քննադատներն ու գիտնականները հետազօտեն և ինձ բացատրեն, թէ արդեօք ես կատարելապէս մարդ եմ, թէ՛

« ԿՈՏՐԱԾ ԳԴԱԼ ».

1891 թ. Նոյեմբերին  
Սեւ Բաղաբ:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԹԵՄԱԿԱՆ (ԹԱԻՐԻ

ԶՈՒՄ) ՏՊԱՐԱՆՈՒՄ ԾԱԽՈՒՄ Է

1. Լ. Տօլսոյի Մարդիկ ինչի եւն հարբոս  
Թարգ. Ե. Ծ. Վ. Մուրադեանի 1 դռ.
2. » » Կարմն-Բուրգալիան պատմաճք  
Թարգ. Ե. Ծ. Վ. Մուրադեանի 10 շհ.
3. Օտար փոռնջեր Ա. Հիւսք. Չիլերից  
Թարգ. Մ. Վ. Մագսուդեանի 1 դռ.
4. Կ. Կառլցի Կոչնիսիան Քաղաքականութ.  
Թարգ. Ռ. Խանազատեանի 2 դռ.
5. Ռ. Խանազատ Իդեալիզմ թե Մատերիալիզմ  
Ուսումնասիրութիւն 10 շհ.
6. Ասրպատականի Հայոց Հիմնական և Հայաս-  
տանեայց եկեղեցու ճիսական կանոնա-  
գրութիւն 2 դռ.
7. Իդեալիզմ թե Մատերիալիզմ տեսութիւն Ռ. Խա-  
նազատի 1904 թ. գինն է—10 շհ. կամ 10 կգ.
8. Անուրջներ Օ. Շրէյնբրի Թարգ. Ռ. Խ. եւ Տ. Տ.  
1904 թ. գինն է—1 դրն. կամ 20 կգ.

Դիմել՝ TAURIS A L' IMPRIMERIE DU

DIOCÈSE ARMÉNIEN



ԱՂԻԷՍԻ ԿԱԹ ԾԾԱԾԸ

ԱՏՐՊՍՏԱԿԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԹԵՄՍԿԱՆԻ (ԹԱԻՐԻ-

ՋՈՒՄ) ՏՊԱՐԱՆՈՒՄ ԾԱԽԻՈՒՄ Է

1. Լ. Տօլսոյի Մարդիկ ի՛նչի եւն նարրում  
Թարգ. Ե. Ծ. Վ. Մուրադեանի 1 դռ.
2. » » Կարմա-Բուդաբայական պատմաճք  
Թարգ. Ե. Ծ. Վ. Մուրադեանի 10 շհ.
3. Օտար փողոցներ Ա. Հիւսք. Չիլիերից  
Թարգ. Մ. Վ. Մագսուդեանի 1 դռ.
4. Կ. Կառլցկի Կոչնիսկան Գաղափարականութ.  
Թարգ. Ռ. Խանազատեանի 2 դռ.
5. Ռ. Խանազատ Իդեալիզմ թե Մատերիալիզմ  
Ուսումնասիրութիւն 10 շհ.
6. Ասրայասականի Հայոց Հիմնական և Հայաս-  
տանեայց եկեղեցու ծիսական կանոնա-  
գրութիւն 2 դռ.
7. Դիմակներ Երզնիսկան գրոյցներ Ա. Տ—Տ.  
1904 թ. զինն է—3 դռ. կամ 50 կպ.
8. Անուշներ Օ. Շրէյների Թարգ. Ռ. Մ. եւ Տ. Տ.  
1904 թ. զինն է—15 շահի. կամ 15 կպ.

Դիմել՝ TAURIS A L' IMPRIMERIE DU

DIOCÈSE ARMÉNIEN

## Ա Ղ Ի Է Ս Ի Կ Ա Թ

### Ծ Ծ Ա Ծ Ը

ՋՐՈՅՑ

Ժամանակով Կարսում ապրում էր Ղազար Բէ-  
գիրդեանը, որը քաղաքի ամենից հարուստ վաճառա-  
կանն էր: Նրա ապրանքների կարաւանները Թաւրի-  
զից, Հալէբից ու Դիրաբէքրից հարիւրաւոր բեռնա-  
ւորած ջորիներով էր գալիս, իսկ նրա հոտերը հազար-  
ներով տանում էին Չամ ու Մսր, երնջի ու արջառների  
երամակները հասցնում էին Կեսարեա, Անգիւրի, Իզմիր  
ու Պոլիս: Ղազար Բէգիրդեանին Ասուած տւել էր  
Յորի նման բիւրաւոր բարիք ու չէր խնայել, տուն,  
տեղ, խան, խանութ, բաղնիս, անտ, ազարակ, գանձ,  
զոհար ու անգին բար, տղա, աղջիկ, բարեկամ, ազ-  
գական, ոչ մի բանից զուրկ չէր թողել, ոչնչի կարօտ  
չէր: Եօթը որդով սեղան էր նստում, եօթը փեսա  
գիմացը բարե բռնած՝ սպասին էին կանգնած, բացի  
հեռաւոր ու մօտաւոր, արիւնի ու մեռնի ազգական-  
ները, բարեկամները:

Ղազար Բէգիրդեանը ոչ միայն իւր ազգականներին ու առհմակիցներին մէջ միայն յայտնի դիրք ունէր, այլ նրան պատուում էին նահանգի պաշտօնականները, ենիչէրիները, սյազդիներն ու օտարականները: Նա պետութեան գաւառական գանձապահըն էր, ամբողջ վիճակի ելումուտը նրա ձեռին էր: Ամէն մարդ այնպիսի կապերով էր կապւած Ղազար Բէգիրդեանի հետ, որ ոչ ոք չէր յանդգնել ոչ միայն նրա վէմ, այլ ետեւից անդամ որեւէ աննպաստ բան խօսել: Ամէնի աղան էր, բոլորն էլ նրա պատգամներին հլու հպատակ էր և գործադրողը: Նրա բազաի անիւր երբէք ձախ չէր պտուել, նա օրիցօր բարձրանում հարստանում, ճոխանում և անօրինում էր շրջապատողներին բազդը:

Այնպէս հաստացել, այնպէս դօրացել ու ամբարացել էր Ղազար Բէգիրդեանը, այնպէս խօր արմատներ էր դցել, որ ոչ թէ պատահական հոգմերը, այլ երկրաշարժն ու վիշապներն էլ չէին կարող նրան ցնցել ու քանդել: Նա գիմադրում էր աշխարհի գանազան պատահարներին և նրան բազխողները փշրելում, ցրում, անհետանում էին, իսկ Ղազարը խրրոխտ գլխով, ձիգ թիկունքով, պինդ սրունքներով, հաստատ կանդնած արհամարում էր բոլորին, ծագրում էր և շարունակում իւր անվեհեր բայերը, վէս հայեացքով:

Ինչպէս արեւի տակ անփոփոխ ոչինչ չկա, ամէն բան ծլում, ծաղկում, բարձրանում, զարգանում և ապա ծերանալով թուլանում, չորանում ու զլւրում է, այդպէս էլ պատահեց Ղազար Բէգիրդեանին,

մին, մի օր նրա էլ բազաի անիւր շրջեց և սկսեց ձախ պտտիլ: Այս բնական ընթացքը զարմանալի չէ, ոչ ոքի չի կարող հտաբրբրել, քանիոր ամէն տեղ, ամէն քայլափոխի դարերից իվեր մարդիկ դրան ենթակա են եղել, տեսել, զգացել, ըմբռնել, փորձել են, բազաի խաղերին ընտելացել են, բայց Ղազարի բազաի ձախելու պատճառը այնքան արտակարգ էր, այնքան հագւադէպ, որ կարծում ենք թէ ընթերցողներին կարող է հետաբրբրել, անշնփ խրատական լինիլ, ուստի հարկ համարեցի դրի անցկացնել:

Ղազար Բէգիրդեանը երբ բազաի գազաթին էր հասել, ստրուկներով, աղախիններով ու ծառայողներով շրջապատել, տունը լքցրել էր թուրքման ու բուրդ սպասաւորներ: Սրա շէմքից չէին հեռանում իր ծառաների ձեռքով կեղեքումների ու զրկանքների ենթարկւածները, որոնք նրա սպասին կանգնած, նրա գթութեանն էին սպասում, որպէսզի ազատին կեղեքումներից ու զրկանքներից: Այս ժամանակները Բէգիրդեանը եօթերորդ արու գաւախն ունեցաւ, որն այնքան թուլակազմ, այնպէս նիհար էր, որ պառաւած մայրը, յոգնած իր մեծացրած տաներիք երեխաներից, յանձնեց այդ թուլակազմ և անյուսալի երեխային իրենց դրանը ծառայող եզիգուհի մի աղախնի խնամքին: Եզիգուհին երեխային «անունը չարսասանողի» հայեացքը — Նազար անւանեց:

Ղազարը իրեն անունի դարձւածն համարելով այս կոչումը, համակերպեց եզիգուհիի հետ, իսկ

ծխատէր քահանան, որպէսզի մեծաւորների պատուհասին չենթարկուի, թէև մկրտութեան մատենանում նազարէթ արձանագրեց, բայց ամէնը մանուկին եզիզուհի յորջորջումով նազար կանչեցին, կամ աւելի ճիշտը՝ նազար — աղա, քանի որ աղայական ծագում ունէր երեխան:

Ենթադրում եմ թէ ընթերցողները գիտեն, որ Եզիզիները դիւապաշտ են: Նրանք հաւատում են, որ Ամենաբարի Արարիչը մարդկութեան վնաս չի հասցընում, ուստի հարկ են տեսնում դեերին երկրպագելու, ճիւղներին անշափ յարգանք տալու, որպէսզի նրանց լարած թակարդը չզլորւին, փորձանքների չենթարկուին: Բէզիրգեանի տանը ապաստանած Եզիզուհին էլ այս դիւապաշտներից էր: Եզիզուհի դայեակը որպէսզի իւր ամուսնի օջախը փրկէ դիւատիպ Բէզիրգեանի հրէշային արբանեակների ճիրաններից, նա սատանային նւէր էր մատուցել նորածին մանուկին — նազարին, համոզւած լինելով, որ այս զոհաբերութեան փոխարէն անունը - չարսաւանելին պիտի իրեն և իւր գաւակներին ազատէր Ղազարի պատուհաս գործակալներից և իրեն պիտի վերադարձնէր պաշտած Փրթօյին՝ ամուսնին:

Որովհետև Եզիզուհին համոզւած էր, որ Ղազար - Բէզիրգեանը երբէք իրենց հանպիստ չէր թողնելու, նրա գործակատարները երբէք չէին թոյլատրելու, որ իրենք մի կտոր դարի հաց անցաւ կրկտենն, ուստի բոլորովին ազատելու համար, վհուկը միտքը գրեց նրա տունը հիմքից քանդել, բրիշակ դարձնել, հիմքը արեգակի տակ հանել: Այս պատ-

ճառով նա ծպտեց ծծմօր հազուստով, հաճոյախօս լեզուով, անոյշ երգերով և արթուն հսկողութիւնով զիրեր - ցերեկ անբաժան պահպանեց մանուկին իւր բազուկների վրա: Ղազարի կինը՝ Ջանանը տասներէք երեխա մեծացրած լինելով՝ յոգնել էր, պառուել, կաթը ցափքել, հաւասը փախել էր, անշափ գոհ մնաց այս անկոչ աղախնից՝ դայիկ - ծծմօրից, քանիոր ինքը հանգիստ ապրելու էր: Եզիզուհի ցանկութիւնն էլ այդ էր, նա սկսեց զաղտագողի իւր կախարհութիւնները, հմայքը գործադրել:

Եզիզուհին գիւղից հետը բերել էր մի ընտելացած բած - ալւէս, որը ցնդնել էր Ղազարի դոմի բակի խոտնոցում: Յաճախը վհուկը երեխայի բալուլը գրկած զնում էր դոմի բակը և ամենայն զգուշութեամբ նազարի շրթունքները մօտեցնում էր աղւէսի ծծերին: Երեխան ազահութեամբ ծծում էր առանց ուշք դարձնելու աղւէսի կծկտոցին, որը Եզիզուհի ահից չէր համարձակուում ընդդիմանալ: Ամբողջ վեց ամիս շարունակ Եզիզուհին նազարին սնուցանում էր աղւէսի կաթով, մանուկն այնպէս էր ընտելացել, որ չաչերով հեռացնում էր աղւէսի կունտալներին, որպէսզի միայն ինքը առատութեամբ լափէ գազանի կաթը: Նազարն այնպէս էր վարժւել աղւէսին, որ օրական մի քանի անգամ լացուկոծ էր զնում, որ իրեն տանեն գոմի բակը: Աղախինն էլ այնպէս էր վարժւել, որ երեխան նշան տալու պէս իսկոյն գրկում, իջեցնում էր խոտնոց: Ջանան ու Ղազարը այնքան էին ձանձրացել երեխաններից, որ նազարին թողել էին բոլորովին Եզիզուհի խնամ-

քին, ամբողջ տարին չէին նկատել թէ ինչպէս աղ-  
ւէսի կաթով էր սնուում իրենց երեխան: Անչափ դոհ  
էին, որ այդ անկոչ ու անվարձ աղախինը այնպէս  
էր պահպանում մանուկին, ուր իրենց թէ ցերեկը  
և թէ գիշերը ոչ մի ձանձրոյթ ու նեղութիւն չէր  
պատճառում:

Երբ ութ - ինն ամսական դարձաւ նազարը,  
այնպէս էր վարժել աղւէսի կաթին, որ յաճախ Եգի-  
պտահի գրկից ցած գալով, շանչերով չոչէչոչ գնում,  
հասնում էր աղւէսին ու ազահարար ծծում: Մի ան-  
գամ խոտնոցում պառկած էր բակի շունը և դիեց-  
նում էր իր կունտալներին: Նազարը աներկիւղ  
նրան էլ մօտեցաւ և առանց ուշք դարձնելու շան  
կազկանձիններին ու դրմշտոցին, սկսեց սրա էլ  
կաթը ծծել: Աղախինը նկատելով նազարի ժրաշա-  
նութիւնը, վազէվազ նրան մօտեցաւ, գրկեց, համ-  
բուրեց ու ասաց.

— Ծծիր, նազար ջան, ծծիր, որ շան նման  
հոտառութիւն ունենաս, բարեկամիտ ու շարեկամիդ  
ճանանչես, կարողանաս թշնամիիդ կծել, պատառել:  
Այսպէս դիւապաշտ Եգիպտահի, աղւէսի ու շան կաթ-  
նով սնաւ և օրիցօր աճեց ու զօրացաւ նազարը և  
տարեկան չեղած ոտք ելաւ: Մանուկը իր առաջին  
ոլոր - կոլոր քայլերը ուղղեց մօրը կողմը և այնպիսի  
ճխանքով, կնձկնձալով նորան փաթաթեց, որ մայրը  
ուրախութիւնից գրկեց երեխային, գպւեց, համբու-  
րեց և թաթից բռնելով կրկին ման ածեց սենեակի  
չորս բոլորը: Երեխայի այս առաջին քայլը, գէպի մօ-  
րը ցոյց տաւ սէրն այնպէս զբաւեց Ջանանին, որ

նա ամբողջ օրը չուզեց բաժանուել այդ փոքրիկից:  
Մօրը նկարագրութիւնը հետաքրքրեց նոյնպէս հօրը՝  
Ղազարին, մանուկը այնպիսի խաղերով ու շարժում-  
ներով բորբոքեց և սրա սիրտը, որ ծնողները նրան  
էլ չհեռացրին իրենց մօտից և ամբողջ գիշերը նրա  
թոթովանքով ու ճխանքով զբաղեցան:

Նազարը իր շարժումներով, ձևերով թոթո-  
վանքով ու զգւանքով այնպէս կապեց մօր հետ, որ  
Ջանանը ամէն բան մոռացած, բոլոր գաւակներին  
ուրացած, նազարովն էր յափշտակւած: Ամբողջ օրե-  
րը նազարի համար հագուստ կարելով, խորտիկներ  
պատրաստելով և խաղալիներ սարքելով էր անցկաց-  
նում: Մնդուկ, պահարան, մարան, ամէն բան թողել  
էր երեխայի քմհաճոյքին, ինչոր ցանկանում էր,  
ինչոր մտրից անցնում էր, իսկոյն կատարում էին:  
Ջանանը ուրախութիւնից բերկրած կրկնում էր.

— Ախ՛ էս տաշտարես, վախ էս տաշտարե-  
րես, ևս ինչպէս սրան գցել էի, իսկ սա ինչ տղա  
դուրս եկաւ: Մա իմ կիսականջս է, սա իմ պստիկ ու  
չստիկս է: Նազարը խրախուսւած այս դուրդուրան-  
քից ու փայփայումից օրիցօր նորանոր խաղերով ու  
ձևերով աւելի ու աւելի էր զբաւում ծնողների սէ-  
րը և նրանց ստրկացնում, իր քմհաճոյքներին էր  
ծառայեցնում: Նազարը անվերջ զանազան թոթովում-  
ներով, կատակներով ու ճոճանքով ծիծաղեցնում էր  
Ջանանին, այնպիսի դիրք էր բռնում, որ ամենա-  
տխուր բողբոջներին անգամ ըրքիչ էր բարձրացնում:  
Քանի մեծանում էր նազարը, այնքան նսեմացնում  
էր մեծ եղբայրների և քոյրերի աստղերը և լոյսն

ու արեգակը Ջանան ու Ղազարը տեսնում էին իրենց պստիկի - չստիկի վրա:

— Ես կուրանամ, չորանամ, ասում էր Ջանանը ձեռները ծնկներին խփելով, ամբողջ ոյժս, կարողութիւնս անշնորհ տղաներիս վրա փշացրի, իսկ այժմ ճարս կտրել է, կարգին չկարողացա սրան հոգալ անգամ, թողի խելօքիս Եզիզուհիի արով — յոյսով:

Երեք տարեկան հասակում նազարը ոտքից մինչև գլուխ թաւիշի, սնդուսի շորերով էր ման գալիս, ամբողջ հագուստը ոսկեթէլով, երիզով էր զարդարւած, եղբայրների, քոյրերի, մինչև իսկ գրացի երեխաների նախանձն էր բորբորում: Եւ օրիցօր նազարը գրաւչական դարձւածների հետ նագանքն ու պահանջներն այնպէս էր սաստկացնում, որ ծնողները մեծ հրճւանքով գոհացնում էին իրենց վերջնեկին: Միշտ գգւած, փայփայւած, անվերջ ծնողների կողքին բազմած մեծանում էր նազարը ոսկեթէլի, մետաքսի մէջ կոլոււած, օրիցօր աւելի ու աւելի գրաւելով հօրն ու մօրը և ամէն մի շարժումով ու թոթովանքով աշխատելով նրանց սրտից վանել, դուրս գցել այն սէրը, որը ծնողներին կապում էր իր մեծ եղբայրների ու քոյրերի հետ:

Չնայելով Եզիզուհիի խնամքին, մօրը գուրգուրանքին, մի օր, երբ դեռ նազարը հօթներորդ տարին ոտք չէր կոխել, մի փողոցային կատաղած շուն հանդարտ քայլերով մօտեցաւ երեխային և ժանիքները խրեց մանուկի ազդրում: Ջանանը սկսեց վնջ տալ, գլխին ու ծնկներին խփել և անէծք կար-

դալ, իսկ Եզիզուհին անվերջ մի կողմը բաշւած ծիծաղում էր ու կրկնում.

— Խանութ, դու մի վախենալ, կատղած շան թոյնը չի ազդիլ նազարին, նրա միտն ու արիւնը այդ թոյնի դէմ պատւաստւած է, երեխային ոչ մի վտանգ չի կարող սպառնալ այդ խայթը: Ընդհակառակը այդ թոյնը շատ կարևոր է նազարին, սրանից յետո նա ում երեսին թքէ, կկատաղի, կթունաւորւի ու կմեռնի, ում աչքին նայի, կթովէ և կհնազանդեցնէ, որին ուզենա, կներշնչէ կքնացնէ, կթմուեցնէ, կստրկացնէ: Այս թոյնը նազարին գէնք դարձաւ, այնպէս որ դրանով թշնամիներին կզինաթափէ և կխոնարհեցնէ:

Եզիզուհին չթողեց, որ դեղտուր հրաւիրեն, դեղ անեն, նա իր գլխով երաշխաւորեց նազարի կեանքը և ինքն սկսեց բուժել իւր սանին: Եզիզուհիի ասածի նման թէև բժժկուց նազարը, բայց արդ Գարշիլի վէրքի հետքը մնաց երեխայի արիւնի մէջ: Նա ոչ միայն էլ աւելի նւաղեց, նիհարեց, դեղնեց, արլ կմախք դարձաւ և վրայից մի գարշիլի հոտ էր տարածւում, այնպէս որ ոչ ոք նրա մօտ չէր կարող նստել: Մանուկը աճում էր օրիցօր, թէև ցաւերից մորմորում էր, բայց այնպէս էր գրաւել ծնողներին, սրանք այնքան գգւում, փայփայում էին երեխային, որ նա մոռացած ներքին կսկիծները, աշխատում էր ծնողների զգացումների ջղերը ամբողջապէս ամփոփել իւր բռի մէջ և նրանց սանձը ուղղել իւր բմհաճոյքով:

Նազարի վեց եղբայրները առաւօտից մինչև

իրիկուն վագում էին իրենց հօր առևտրական տան գործերով, որը գիւղ էր գնում, որը գաւառ, որը Գիարբէքը էր գնացել, որն էլ Հալէբ գանազան յանձնարարութիւններով, բայց նազարը ծնողների ծնկներից ցած չէր գալիս, նրանց շնչից չէր բաժանուում և շքի նման պտոյտ էր գալիս հօր ետևից: Նազարի ճկունութիւնը, սրամտութիւնը, և ժրագլխութիւնը բոլորովին գրաւել էր հօրը, այնպէս որ Ղազարը ոչ միայն տանը, հանգստեան ժամերն էր նրա բառախաղերով ու մտքերով զբաղուում, այլ ցերեկն էլ նրան տանում հետը խան՝ իւր վաճառատունը, ուր մանուկը թէ գրական և թէ վարկեցողական դասերը միասին էր սովորում:

Նազարը իրեն աւանդւած սաղմոսը, նարեկը վարժապետից էլ արագ, էլ գրավարժ ընթերցանելու վարժութիւնները կատարելիս, հօրից պակաս չէր տանջում վարժապետին: Եթէ հայրը ուսուցչի ոռճիկը ուշացնում էր վճարելու, նազարն էլ դասերը կրկնապատկել էր տալիս, որ թէ շուտ աւարտի և թէ շատ հարստահարէ խեղճ վարժապետի ջղերը: Եթէ Ղազարը վարձը կտրում էր, թեթև կամ կեղծ գրամ էր վճարում, նազարը փչացնելով ուսուցչի ծխախոտը, թաշկինակը, գրչահատը, մատիտը, գրիչը արտակարգ ծախսերի էր ենթարկում թշուառի ազրատիկ բիւջին: Նազարը իր տարօրինակ խաղերով ու կատակներով մի օր վարժապետի մկրատն էր կտրում, մի օր վերարկուն պատռում, մի օր կօշիկի հատն էր գլորում....., մի օր թանաքն էր թափում, գրչամանը ծռում և խեղճ ուսուցիչը ամսականից

չգրկելու համար պարտաւորւած էր սանի բոլոր բմայքը տանելու տաժանելի համբերութեամբ:

Վաճառատանը առանձին մնալու պէս Ղազարըն սկսում էր նազարին խրատել, օրինակներ տալ, առակներ պատմել, որ մարգէ երեխայի միտքը: Մի օր լրջադէմ ասաց հայրը որդուն.

— Տղաս, աշխարհը « սև ու սպիտակի » մէջ չէ: Եթէ թուղթ ու գիրը մեծ բան լինէր, վարդապետներն ու մօլլաները աշխարհը կտիրէին. այն ինչ վարժապետդ, որ բառասուն արեղայի կարող է դաս տալ, մեր դռանը ամսական մի ոսկիով է ծառայում: Թո՛ղթ, գիր, լսելք, սրամտութիւնը, հոտառութիւն, ամէն բան պէտք է փող դիգելու ծառայեցնել, որ փողիդ շլացումից բոլորը խոնարհին, զան բեզ ծառայել:

— Հայրիկ, ասաց նազարը, թէ վարդապետն ու վարժապետը կարողանան փող դիգել, հարստանալ, էլ ինչի կգան, մեզ կծառայեն. կամ թէ մեր գործակատարը, հաշւապահը եթէ միջոց գտնի, չէ որ նա էլ կարող է Հալէբից ու Հինդից ապրանք բերել և մեզ դէմ մրցելով յաճախորդներս խլել: Փող վաստկելը հեշտ է, եթէ հնարք գտնենք մրցողների ճանապարհը կտրել, կամ նրանց քսակները քամել.....:

— Ապրես, դաւակս, ասաց Ղազարը որդուն գրկելով, հիմի հասկացա, որ դու աշխարհը ճանաչել ես և էլ վարժապետի ու դաստիարակի կարիք չունիս: Էլ ինչի գուր տեղը նրան ոռճիկ տանը:

Գեռ Ղազարը տաներեք տարին շրա-

ցրած վարժապետին ճամբեցին:

Նազարի այս նենգամիտ խաղերն ու դարձ-  
լածները այնպիսի հաճոյք ու հրճւանք էին պատճա-  
ռում Ղազարին, որ նա մի ժամով անգամ չէր ուզում  
բաժանել իւր տաշտաբերից: Հայրը անշնամի գոհ էր,  
որ գաւակը իր հսկողութեան տակ վաճառատանը  
դաստիարակում էր իւր ցանկացած ուղղութեամբ և  
երեխան անշնամի ընդունակութիւնները արտայայտում  
էր ամէն քայլափոխին: Նազարը զգալով հօր հաճոյ-  
քի շարժառիթները, գիշիր ցերեկ նորանոր հնարներ  
էր մտածում տանջելու և թեթեացնելու իրենց գոր-  
ծակատարների, բանւորների համեստ զրպաները,  
խուզելու և դարտակելու վաճառատուն մտնողների  
քսակները: Առևտրական բանակցութիւնների ժամա-  
նակ այնպիսի սուր սուր խօսքերով էր միջամտում,  
այնպիսի խնդրալի ձևերով, զրաւիչ ժպիտով, անեկ-  
դոտներով, առակներով, որ թովում էր բոլորին,  
կամա, ախմա ստիպում էր զիջանելու: Ղազարը  
այս ընդունակ գաւակի կարողութիւններից յափըշ-  
տակւած, կնոջը հետ կրկնում էր.

— Աշմարիտ որ սա իմ կիսլանջս է, սա պի-  
տի բռնէ իմ տեղս, նազարս անունս արար աշխարհ  
պիտի հոչակէ:

Եւ նազարը ոչ մի օր, ոչ մի վայրկեան պա-  
տեհ առիթը չէր բաց թողնում, թէ հօրը թովելու  
և թէ մօրը հմայելու, որպէսզի ծնողների ամբողջ  
գոյրը միակ ինքը իւրացնէ, նրանց տեղը բռնէ, զը-  
կելով եղբայրներին էլ, քոյրերին էլ: Բայց սրտի  
խորքերում փայփայած այս խորհրդաւոր ցանկու-

թիւնը, իղձը ոչ մի նշանով, ոչ մի քայլում և ոչ մի  
արարքով չէր ուզում արտայայտել, գզուշանալով որ  
միգուցէ ծնողների կոյր վտահութիւնից զրկւի: Նա-  
զարը անվերջ մտածում էր այնպիսի հնարք գտնել,  
որ հայրը իւր իղձը ինքնաբերաբար յօժարութեամբ  
կատարէ, առանց որեէ արտաբերին ճնշման, կամ թե-  
լաղբութեան: Եւ տենջանքը որքան որոճում էր չէր  
կարողանում մարսել:

Հայրն էլ թէև յաճախ ինքնիրեն մտածում էր,  
որ միայն նազարը իւր նենգամտութեամբ կարող էր  
հօրը տեղը բռնել, բայց երբէք չէր մտածում միւս  
գաւակներից մէկն ու մէկին զրկել: Ընդհակառակը  
նա երեսակայում էր նազարի միջոցով, ինչպէս իւր  
վաճառատան նոյնպէս և միւս գաւակների ապագան  
ապահովել, որ յաւիտեան իւր թշնամիների փափա-  
զը զուխ չգա և իւր օջախից անպակաս կրակի ծու-  
խը ծխա ու բարձրանա:

Գեւ տասնեակից տարին չլրացրած նազարն  
ստացաւ հօրից զրամարկի և մուրհակների գաբանի  
բանալին, իսկ հաշւէմատեաններն ու ծախսի տո-  
մարները էլ վաղ նրա թելաղբութեամբ էին արձա-  
նադրում: Ղազար բեկիրգեանի այս կանխական որո-  
շումից թէև սաստիկ բորբոքւեցին վեց եղբայրները,  
բայց նրանից ոչ ոք չյանդգնեց խստապահանջ հօր  
դէմ համարձակ արանջալ. ամէն բան հայրն էր դիզել,  
ամէն բան նրա անսահման իշխանութեան տակն էր,  
հետևաբար կարող էր ցանկութեան համաձայն անօ-  
րինել: Վեց եղբայրներին հասցրած այս վերքը որ-  
քան որ խորն էր, հազար անգամ աւելի խիստ թու-

նաւորեց նրանց սիրտը նազարի ակնարկներն ու բացազանչութիւնները, այնպէս որ այս վշտից ընկճւեալ չէին իմանում ինչ հնարքով ազատել այս ստորութիւնից:

Մեծ եղբայրը՝ Արիստակը ոչ միայն արհամարում էր նազարին, այլ յաճախ նկատողութիւններով ստիպում էր նրան չափաւորել ընթացքը և չվիրաւորել միւս եղբայրներին: Նազարի ամէնից ատելի եղբայրը սա էր, քանիոր ըստօրինի սա էր ժառանգելու՝ յաջորդելու հօրը. իսկ նազարին ներքին տենջանքն էր անդրանկութիւնը սրանից յափշտակել, սրան բոլորովին չէզոքացնել և իրաւունքներից զրկել: Ղազարն զգում էր, որ կիսլանջին տւած այս առաւելութիւնը, այս առանձնաշնորհը բարեխղճութեան դէմ էր, բայց իր և օջախի շահը, ապագան պահանջում էր, որ առևտրական տան դէկը վարէ նազարը, քանիոր սրա թովիչ լեզուն, հմայիչ աչքերը, ձկուն կնճիռները, հեռատես միտքը, հնարագէտ խելքը, հակառակորդի հոգու խորքերը թափանձող ընդունակութիւնը այնպիսի գրաւիչ խոստումներ և յոյսեր էին ներշնչում, որ պարտաւորւած էր արդարութիւնից շեղւելու: Ծերունի հայրը՝ տոհմի ապագա բարօրութիւնների տենջով՝ կոյր էր ձևացել, խուլ էր դարձել և չէր ցանկանում նրանց տրտունջներին ու մրմունջները լսել, կնճիռները և բռունցքները տեսնել:

Ղազարը տարիներով իւր հոգու խորքերում թաղում էր ամէն անախորժ տեսարանները և այնպիսի ընթացք էր բռնում, որ եղբայրները զիջանին

խոնարհելու և հպատակելու խորամիտ կիսլանջին: Իսկ եղբայրները օրից օր աւելի ու աւելի բորբորւում էին նազարի բռնած բռնակալ, կամսպաշտ և ինքնագլուխ ընթացքից: Հայրը յաճախ խրատում և երբեմն երբեմն էլ սաստում, յանդիմանում և անպայման իր կամքին հնազանդել էր պահանջում. բայց ծերունու փաստերը չէր համոզում զաւակներին, նրանք չէին կարողանում անտարբեր տանել իրենց վիճակը: Սրանց մասին զիջելու ու ցերեկ ամբողջ ժամերով մտածում էր նազարը, հնար չէր գտնում, որ կարողանա նպատակին հասնել, ուստի յաճախ սրտի խորքերից հառաչում ու մնջում էր: Ծերուկը նկատելով որդու հոգեկան յուզումները կրկնում էր.

— Նազար ջան, էլի ինչ է պատահել, զաւակս, ինչի ես հառաչում, ո՞վ է նորից բեզ վշտացրել.

— Ո՛չ ոք, սիրելի հայրիկ, ո՛չ ոք, կրկնում էր նազարը և ժպտադէմ յառում, ինչ կասկածներ էր տածում, հայրիկ, ո՞վ պիտի ինձ վշտացնէ, միթէ մեր մէջ խորթումօրի կն: Կամ թէ ես այնպիսի փոքրօգի սիրտ ունիմ, որ որեւէ սիւսից վշտանամ և սրտիս վրա երեակայական մաղձ կուտակեմ: Ո՛չ, ո՛չ, երբէք, հայրիկ, երբէք, այդպիսի բան մի երեակայէք: Սրտիս վրա միայն մի բեռ կա, միտքս գրաււած է մի միայն նպատակիս շուրջը. թէ ինչ ընթացք բռնել, որ անունդ... օջախդ...

— Գիտեմ, գիտեմ, զաւակս, մի կրկնել, ես համոզւած եմ, թէ ո՛ւր է սաւառնում միտքդ, բայց այս ապուշները չեն ըմբռնում, բեզ էլ վշտացնում են, քեզ, որ տքնում ես նրանց համար դրախտ

պատրաստել... Իրենք կոյր են և ոսկիապաշտ, կարծում են, որ դու էլ ժանգլին Լըկըպագում ես իրենց նման, նրանց միտքը չէ լուսաւորւած, նրանք քեզ հասկանալու կարողութիւնից զրկւած են....:

— Է՛հ, հայրիկ, մի վրդովւի՛ր, այսպիսի մշտքերով սիրտդ մի գառնացիէ՛ր. նախ որ նրանք ո՛չ մի անգոյշ քայլով, կամ խօսքով ինձ չեն վրդովել. Եթէ անեն էլ, ինչ հոգս է, մեծ եղբայրները իրաւունք ունին փոքրին յանդիմանելու, խրատելու....:

— Այո՛, մեծ են տարիքով, պիտելով, բայց ո՛չ սրատեսութեամբ....

— Խնդրում եմ, փակեցէ՛ք այս խնդիրը, հայրիկ, այսպիսի խօսքեր մի կրկնէ՛ք, ձեր ընթացքը ինձ տանջանքի նիւթ կդառնա: Չէ որ ձեր էլ, իմ էլ տենջանքս ընդհանուրիս բարօրութիւնն է. ես բոլորիդ ամանախոնարհ ստբուկն ու ծառան եմ: Իմ պարտականութիւնս ծառայելն է, ո՛չ թէ վշտանալ, կամ վիրաւորել....:

— Ա՛խ, անդին գաւակս, դո՛ւ իմ գանձս ես, դո՛ւ մեր օջախի սիւնն ես, բայց որ քեզ չեն ըմբռնում....

— Թողէ՛ք, խնդրում եմ, թողէ՛ք այդ կանխասացութիւնները: Ես ձեր ստբուկն եմ, իսկ նրանք էլ ձեր մեծ և հարսպատ գաւակները, հետևապէս և իմ տէրերս են, ինչպէս կարող եմ ես նրանց ձեզանից գանազանել: Նրանց բոլորի էլ փոքրաւորն եմ, հլու հպատակը ինչպէս և ձերը...: Բայց թողէ՛ք, ազաշում եմ, թողէ՛ք...

— Կթօ՛ւնեմ, կլուեմ, բայց սիրտս, զղացում-

ներս չեն թողնում...: Ա՛խ, ապերանխտ գաւակներ, ա՛խ, անխոհեմ եղբայրներ...: Սա ձեր ժառանգութիւնը, այսինքն իմ գանձս չորս հինգ տարում կրկնապատկեց, կալւածներս քառապատկեց, եկամուտս տասնապատկեց և ինչ է խոստանում, ինչ անաւոր յոյս...: Բայց դուր, կոյրեր, միթէ աչք չունի՛ք, որ կարողանանք գուշակել:

Եւ վրդովւած ծերուկը մտնում էր ննջարան խորհելու, կամ հանգստանալու, իսկ նազարը նրա ետևից շարունակում էր իւր մենախօսութիւնը.

— Չառամեա՛լ, ցնդած, խելքը կորցրել է, ոչինչ չի հասկանում, բան չի ըմբռնում. միակ զէնքը հառաչանքն է՝ լալկան կնոջ նման: Դէհ, վերջապէս ըմբռնիր, հասկացիր, թէ քեզ ինչ են ուզում ասել, թելազրել: Ի՛նչ օգուտ հառաչանքներից և բարի ցանկութիւններից, դորժ, զրական միջոց է հարկաւոր, համարձակ քայլ....: Տո՛ւր կարողութիւնդ արժանաւորին, գցիր լղպորների առաջ մի քիչ բան, թո՛ղ զրմշտան, բայլերս չկաշկանդեն, ասպարէզս չկտրեն...:

Մի զիշեր երկար մտորելուց յետո, ասաց նազարը ինքնիրեն.

— Քաջերը չեն խնդրում, այլ խլում են, գահը չեն շնորհում, այլ յափշտակում են: Հնար չկա, պէտք է ուրիշ ճանապարհ բռնել, խիստ միջոցների դիմել:

Ղազար Բէգիրգեանը իւր բոլոր գանձը կարողութիւնը, մուրհակները, տոմարները նազարին յանձնելիս, թանգադին և հազազիւտ գոհարները յատուկ

բսակով պահեց իր տանը մի առանձին արկղում: Այս գոհարները նա շատ անգամ ցոյց էր տւել ինչպէս Արիստակին, Նազարին, Նոյնպէս միւս զաւակներին, բացատրել էր դրանց յատկութիւնը, արժանաւորութիւնը, գոյնը, գինը, որպէսզի պատէ՛հ առիթներէց զաւակներն էլ օգտւին, չխաբւին և ձեռքից բաց չթողնեն հազադէպ գոհարները: Ծերուկը յատուկ խնամքով ամուր - ամուր պահում էր գոհարի քսակը, որը չէր փոխել իւր մնացորդ կարողութեան հետ:

Այս բանը շատ լաւ գիտէր Նազարը, նա վաղուց աչք ունէր այդ քսակի վրա և որոշեց այնպէս մի գործ բռնել, որ թէ քսակին և թէ հօր մնացորդ գոյքին միակը տիրանայ: Մի գիշեր նենգաւոր որդին հին գինիով ծնողներին զարթացրեց, երբ նրանք խոր բուն ընկան, նա զգուշութեամբ բացեց հօր սնդուկը, վերցրեց - գաղեց գոհարները, կտորեց արկղի փակը, դռան նիբը, մտաւ Արիստակի ննջարանը, այնտեղից վեր առաւ եղբօր գօտին, բերեց գրցեց կտորած սնդուկի մօտ, ինքն էլ ընկաւ քնեցաւ: Ղազար բէզիրգեանը երբ առաւօտ նկատեց կտորւած փակերը, փշրւած արկղը և գողացւած քսակը, նա զայրութից բորբռւած, երբ գտաւ գոհարի արկղի մօտ Արիստակի գօտին, իսկոյն անդրանիկի ոտն ու ձեռը կապեց, յանձնեց ենիչէր - ազասիին, որը անմեղին Սահարա արսորեց:

Այս դէպքից թէև աւելի բորբորեցին մնացեալ եղբայրները, բայց հօրը Երկիւղից չէին կարողանում բողբ բարձրացնել: Նրանք հաւատացած

էին, որ Արիստակը բոլորովին անմեղ էր, նա զո՛հ էր գնացել Նազարի խարդաւանանքներին, բայց հնար չէին գտնում ծերուկին համոզելու, որը բոլորովին դիւթւել էր Նազարի հմայքներով: Ղազար բէզիրգեանը ո՛չ մի բացատրութիւ չէր ուզում լսել և անգաղար կրկնում էր.

— Ով որ Նազարին չի լսում, ինձ արհամարում է, ով որ նրա դէմ բողբում է, իմ դէմ զէնք է բարձրացնում, հայրական իշխանութեանս դէմ ապստամբում է, այդպիսի անձի ձայնը, թէ կուզէ որդիս, երկու աչքիս լոյսը լինի, չեմ ընդունում: Նազարը՝ Նազարս - վէզիրս է, տեղապահս է, լիազօրս է, գործավարս է, մի խօսքով նրա շրթունքներից ես եմ խօսում: Անպայման պահանջում եմ, որ բոլորը նրան հնազանդիր:

Արիստակի արսորից յետո, Նազարն էլ յանդուգն էր վարւում եղբայրների հետ, արհամարում էր նրանց, ո՛չ միայն հրամաններ էր արձակում, այլ երբեմն սպառնալիք էլ էր կարգում: Ո՛չ միայն առանց եղբայրների խորհրդին վարում էր բոլոր գործերը, ո՛չ միայն նրանց մղում էր այս - այն կողմը գրաստների նման, այլ մինչև անգամ նրանց ազատ միջոց չէր տալիս ճաշելու, հանգստանլու, գրօսնելու...: Կամ առաւօտից մինչև իրիկուն թափառելու էին խեղճերը այս ու այն կողմը, կամ անվերջ կշռելու, շափելու, գտելու հետ էին իրենց բերքն ու բարին, որոնցից վայելելու իրաւունքից զրկւած էին, կիսլանջ եղբօր մեքենայութիւնների շնորհիւ:

Ամէն օր Բէնիկը՝ Նազարի երկրորդ եղբայրը

մշակների, մաճկալների գլխին անցած, շրջելով դաշտ ու սառ, դիւղ ու գաւառ, վարել էր տալիս դուրանն ու գարիվարը և հնձած ու կաւած բերրի կիսից աւելին բաշում էր ռանչպարի - մարաբանների ձեռքից, լցնում էր իրենց ամբարները: Երրորդ եղբայրը՝ Ոստանիկը անվերջ թափառում էր քաղաքի ջուհակների գործարանները, գննում էր ոստայնների, մեքենաներն ու մաքուրները, մասրանն ու ջահանները և օրական տասնը վեց ժամ տանջելով դատիցնում էր թէ վարձկաններին և թէ հարագատներին, թէ հարս - աղջկան, թէ գառամեալ ծերերին ու պառաններին, որ մսնիսա, կտաւ գործեն, լցնեն իրենց մթերանոցները: Քաղաքի թաղերում դեռ գործերը շաւարտած Ոստանիկը վազում էր Զիթչի - շայր ներկարանները գննելու, գաճօղներին խրախուսելու և յինածնէլի չափն ու համբանքը քննելու: Զորբորդ եղբայրը՝ Հերմէսը լուսը չբացւած մտնում էր դարբնոց և անվերջ շուռ էր գալիս հնոցների շուրջը, պայտ, մեխ, ալ ու կռան, արօր ու գուլթան էր պատրաստել տալիս, փակ ու շղթա էր կոփել տալիս, որ չկանգնեն իրենց բանուրներն ու գործաւորները: Այս բոլորի ջանքերով արտադրւած բարին կուտակում էր Նազարը, դիզում, լցնում մթերանոցները և ոչ միայն բանուր - գործաւորներին, այլ հարագատներին և դրանց մանր ու խոշորին անգամ խեղդում էր զրկանքների մէջ:

Եղբայրներից միայն Մարտիկն էր, ու ոչ միայն չէր խոնարհում Նազարին, այլ սրա գլխին խրփելով, բաշում ձեռքից խլում էր ոսկին էլ, ար-

ծաթն էլ, բերքն էլ, բարին էլ: Սա ոչ միայն անգործ թափառում, փշայնում էր եղբայրների դատածները, այլ մինչև անգամ իւր դարձութիւնների, գելտութիւնների համար անազին գումարներ էր փշայնում, նժոյգներ էր զնում, բարակներ էր ձեռք բերում, զէնքերի, զարգերի համար բան չէր խնայում և անաւոր դրամ էր վատնում:

— Դու եղբայրներիս կեղերում, զրկում ես, ասում էր Նազարին, նբանց դառն դատումը մինակն ես լափում, դիզում և մահ սպառնալով յափշտակում էր ձեռքն անցածը ու խժուում, մոռանալով եղբայրներին էլ, նրանց մատուցներին էլ: Որքան որ աշխատում էր Նազարը սբան սանձել, հնար չէր գտնում:

Ծեղրունի Ղալարը Մարտիկին այնքան երես էր տւել, այնպէս կամապաշտ էր դարձրել, այն ատիճանի յանդուզն, որ շատ անգամ թշուա ծերուկը աղաչում էր Նազարին, որ բաւակամացնէ Մարտիկի պահանջները, իրեն վիզն ապատէ նրա խշտիկից: Նազարը նկատելով որ զիզածները այդ ծոյլ ձրիակերը փշայնում, վատնում է, չի թողնում, որ կարողանա բաղձազին հասնել, ոսկիի գէղեր կուտակել և բոլորի տանջանքով ձեռ բերածը միակը վայելել, նա մտածում էր սբան էլ սանձել, Մարտիկին էլ կաշկանդել, չէզորացնել Արիտակի նման: Բայց հարցն այն էր, որ Նազարը ոչ միայն զէնք շարժել, կուել, մարտնչել չէր կարող, այլ անչափ վախկոտ էր. գործաւորներին, մշակներին, մարաբաններին, եղբայրներին հպատա-

կեցնելու համար նա Մարտիկի բազկին ու անվեհեր սրտին կարօտ էր: Ինքը չէր կարող Մարտիկի դերը կատարել, իսկ օտարի էլ չէր վստահում: Մարտիկի մտրակն ու նիզակը, խանչալն ու թւանքը, սարսափեցրել էր բոլորին, ստրկացրել խոնարհեցրել Ղազարի ու Նազարի առաջ և ամէն մարդ կաշւի երկիւղից ձայնը փորը գցած, գնում էր, ուր որ նրան վարում էր Նազարը:

Երկար մտատանջելուց յետո, Նազարը որոշեց Մարտիկին իրենց Քարատունը (գաշխանա) բանտարկել, այնտեղ նրան մատակարարել կարևորը և չթողնել, որ նա կարողանա մտնել հայրական տունը կամ մթերանոցը: Մարտիկի անունով ժողովուրդին սարսափեցնել և ցանկացածները առաջ տանել: Ծերունի Ղազարը անչափ գովեց Նազարի հանճարեղ միտքը և հրամայեց, որ Մարտիկը Քարատանից դուրս չգա:

Մարտիկը զիջաւ, հօր կամքին չկարողացաւ ընդդիմանալ: Նա ապրում էր Քարատանը և միայն երբեմն երբեմն որսի համար դուրս էր գալիս այնտեղից, շուրջը սարսափ սփռում: Մարտիկը մեկուսացած գեխութիւններով, գւարճութիւններով էր կեանքը անցկացնում և շռայլում, վատնում եղբայրների դառն դատումով ամբարած բարին: Որքան որ Մարտիկը պահանջը սատակացնում էր, Նազարը երկիւղից այնքան անխնա լրացնում էր նրա պահանջները և Մարտիկին թէկէն տւած, կռնակն ամբացրած՝ աւելի անգթաբար խաշում էր եղբայրներին ու գործակատարներին և նրանցից տասն անգամ աւելի

պոպկում ու ամբարում էր:

Եղբայրների զարհուրելի դրութիւնը սարսափեցրել և թախիծով լցրել էր վեցերորդ եղբոր՝ Փիլիպպոսի սիրտը, որը վշտաբէկ գիշեր-ցերեկ իւր երգերով ու առակներով ողբում էր իրենց անարգ վիճակը, բայց կարեկից չէր գտնում: Նազարը որքան էլ տրնում էր Փիլիպպոսին էլ ստրկացնել, մի գործով զբաղեցնել, բայց նա մեկամաղձով բռնւած, խօսք չէր լսում, գլուխ չէր թէքում և ամբողջ կեանքը թախծալի մտածումներով էր մթնացնում: Նա անվերջ երգերով, առակներով ու ողբերով ուզում էր սթափեցնել եղբայրներին, ցնցել զառամեալ հօրը, արթնացնել և ցոյց տալ այն վիհը, ուր տարել հասցրել էր նրանց Նազարը, բայց ցնորած ծերուկի և թախիծալի տանջանքներից բժժած եղբայրների գլուխները, թմրած մտքերը չէին գործում, ոչինչ չէին ըմբռնում և նրանց աչքերում ապագան անչափ ազօտ ու շփոթ էր երևում:

Փիլիպպոսը վաղ կորցրել էր իւր հոգեկան անդորրութիւնը, դադարումը կտրւել էր, նրա վշտերով խոցոտւած կարեկից սիրտը անյալէս էր բորբոքում, անյալէս էր տառապանքից մորմորում, որ նա գիշեր ցերեկ խորհում էր մի հնարքով չարատանջ եղբայրներին ազատել Նազարի մերենայութիւններից, միջոց տալ որ նրանք էլ հայրենի ահաւոր գոյքից և իրենց արտադրած անչափ բերքից արդար բաժին ստանալով՝ կարողանան մարդավայել ապրել: Այս մտքերով ալէծուփ և այս անարդար յարաբերութունից չարաչար բորբոքւած Փիլիպպոսը

մի դասան շարադրեց, բերան արաւ, պատառոտեց հագուստը, դիւարաց, բոբլիկ, ճղճղած օձիքով, մերկ կրծքով մտաւ բանտրների շրջանը, սկսեց նշարանց իր երգերով ծիծաղացնել, լացացնել, զրաւել ու սթափացնել:

Երեխէքն ու փոքրիկները ծիծաղից թուլացած գոռում էին:

— Քեռին եկաւ, բեռին հասաւ, իսկ սրանց աղաղակից ու հրհոսցից անաւոր բազմութիւն հաւարում էր Փիլիպպոսի շուրջը, լսելու նրա երգերն ու վերբերից բղխած եղանակները:

Թշուառները հետզհետէ լրջացան, ցնցեցան և ըմբռնեցին Փիլիպպոսի միտքը, բայց Նազարի սարսափը նրանց այնպէս էր ընկճել, սովից կոտորելու, շղթայելու, անարգելու, ձեծւելու և կախելու միտքը այնպէս նրանց սարսափեցել էր, որ չէին կարողանում որոշել իրենց բռնելիք ընթացքը: Նազարի մի ակնսարկով անգութ ու անկուշտ ենիչէր-աղասին կարող էր մի դաշոյնի հարւածով տասնեակ գլուխ կտրել, ընչաքաղց ենիչէրիները պատրաստ էին իրենց աղայի մի ծպուտով քերթել ողջ ողջ բոլորին, ինչպէս կարող էին յանդգնել և Նազարի կամօրի, հրամանների հակառակ շարժել: Իսկ Փիլիպպոսը աներկիւղ, արհամարհելով Նազարին էլ, եէնիչէրիներին էլ, սրանց սրերն էլ, կաղախանի իւզոտ շանն էլ, անգաղար փշում էր իւր սրինդը, չորս բոլորը հաւաքելով հարազատներին, երդում էր, պատմում և շէխի ելեէջով այրում, մրկում, բորբոքում ու զրգում թմրած սրտերը:

Հարազարտներ այնպէս գրաւեցան Փիլիպպոսի երգերով, մանաւանդ մանուկները, պատանիներն ու դեռահասները, որ սրանք յաճախ արհամարելով զահիճների խարազանները, ենիչէրիների մտրակների հարւածները, գտնում, բոլորում էին Փիլիպպոսին և խնդրում, որ նրանց համար երգէ ու նւագէ, իրենց տապալկած սրտերն հովացնէ: Իսկ Փիլիպպոսը առանց յոգնելու հնչեցնում էր շէին, որոտացնում էր սրինդը, կկլացնում էր ձայնը, բոցափայլում էր աչքերը, որոտում, ողբում, և իւր եղանակների ներգործութեամբ յուզում, լացացնում, փոթորկում ու մրրկում էր բոլորի սիրտը, այնպէս լեեղճ մշակներն ու բանտրները մոլեգնած օրերով գործի չէին մօտենում:

Այս պարագան անհնար էր Նազարի սրամիտ աչքերից ծածկել, նրա զգայուն ականջները, խորատես աչքերը թափանցում էին հաստ որմերից, գննում, բննում էին կատարւածները և բորբոքում: Նա շկարողանալով այլևս համբերել, մօտեցաւ ձերունի հօրը և տաց:

— Ափար ջան, ես այլևս չեմ կարող շարունակել վաճառատան գործերը, ես յուսահատուել, ընկճուել եմ, յանձնիր գործերդ ում որ կբարեհաճիս, միայն թէ ինձ ազատիր, թող քիչ էլ ես գնամ, ազատ ման գամ և աշխարհ տեսնեմ, զբօսնեմ: Ես զգեցի, այս ըմբոստների հետ այլևս գլուխ չեմ կարող գալ: Մրանք բնաւ աշխարհի կարգը, ժամանակի ոգին ըմբռնելու շնորհք չունին: Թող ինչ ուզում է, լինի, ինչ անենք, որ ձեր յիսուն տարւան, իմ տասը տար-

ւան ջանքը, աշխատութիւնը զուր պիտի կորչի, թշնամիներս պիտի ուրախանան և նահանգի բոլոր արդիւնքը, շահը պիտի անցնի հակառակորդներին ձեռքը: Աշխարհի երեսին ո՞ր բարեգործին, ո՞ր տաղանդին, ո՞ր մարգարէին մարդիկ չքարկործեցին, որ ինձ չկործածեն: Այլևս ես ոյժ չունիմ, հնար չեմ գտնում սրանց սանձելու... Գուցէ մի ուրիշը...

— Էլի ինչ է պատահել, խելօք կիսլանջս, ո՞վ է քեզ վրդովել, հաւատարիմ գաւակս, ո՞վ է յանդգնել, քեզ տանջել, սուր մտքիդ թելերն է կտրել, անսահման խոհերդ մթնացրել, խաւարացրել: Աստ, խօսիր համարձակ, յայտնիր, ո՞ր մէկն է ըմբոստացել և ծրագիրներդ շփոթել, աւազի վրա, ապառաժի լանջին խաղածո գծերը ջնջել և տակն ու վրա է արել միտքդ, աստ, այդ ո՞վ է, ես նրան կախել կտամ, խեղդել կտամ, ենիչէրիներին կըլանձնեմ, որ մորթից տիկ հաննն և գանկից շերէփ շինեն: Անպատճառ աղչիկներին օտարներից աճեցրած լակոտները քեզ վիրաւորել են, անպատճառ այն խորդ լամուկները քեզ վրդովել են, այն ապօրինի ծնունդները մաղձոկ են բորբոքել: Երանի չէր, որ Ջանանը եօթ քար ծնէր, նրանց ամէն մէկին տանըս ամէն մի դռան տակ շեմ շինէի, առաւօտ, իրիկուն կոխրճէի, քանթէ այդ օձերի վիժածները, վիշապի լորձունքները, որոնց կտրւած մէն մի գլխի տեղը եօթն անգամ եօթը գլուխ է սողոսկում, դուրս թռչում և եօթանասունը եօթն անգամ եօթանասունը եօթը հազար ձեւեր են թափւում: Աղչիկ չեղան ինձ համար, այլ մէմկ փէրի դարձան, փեսա չեղան

ինձ համար, այլ մէկ մէկ բելիար դարձան գլխիս և կտրեցին խաղաղութիւնս: Աստ, աստ, տեսնեմ, ո՞ր մէկի ձեթուկներն են քեզ այգայէս խոտիկ, որ գուկելի վրդովում ես ձերութիւնս, աստ, դրանցից ո՞ր մէկի ծուխը կտրել տամ, բունը բիշակ դարձնել տամ ելնիչէրիների ձեռքով...

— Է՛, ո՞վ է այդ աղչիկորդներին մարդի տեղ դնում. մթթէլ ես ինքս չեմ կարող, քո շնորհիւ, նշբանց փշրել փոշու նման քամուսն տալ և ցրել: Ո՛չ, ո՛չ, նրանցից ոչ մէկը չի կարող ծպտիւն հանել, եթէ...: Բայց ինչ ասեմ, ասելն ու խօսելն աւելորդ է, ամենից գլխաւորն այն է,.... է՛հ, ես հօգնել եմ, ես տկար եմ, ես անկարող եմ գործելու. ինձ ապատեցէք, ինձ թոյլ տէ՛ք, քիչ գնամ, ման գամ, թարմանամ, նոր ոյժով կարգուրեմ, հանգստանամ,.... էլ ինչ ասեմ:

— Ո՛չ, ո՛չ, հեռատես գաւակս, դու այգայիսի միտք, այգայիսի նպատակ չես կարող տածել: Գու վրդովւած ես, ուզում ես փախչել...: Ո՛չ, դու խորատես ես, ապագան գուշակոյ սուր միտքդ երբէք քեզ չի թոյլ տալ այգայիսի սխալ քայլ անելու: Միթէ գու. որ կալւածներս տառնապատկեցիր, գանձերս հարիւրապատկեցիր, եկամուտս հազարապատկեցիր, իմ կէս դարի և բու տասը տարւան աշխատութիւններով դիզւածը կթողնես, որ ցրիւ տան այն ապօրինի օձի ծնունդները, այն ձեթուկները, որոնք որթունքի նման ինձ շրջապատել են, լափում են և ուզում են կուլ տալ կարողութեանս հետ: Ո՛չ, իմ հոգեծին գաւակս, ո՛չ, դու ինձ չես թողնի նրանց

ճիբաններում, շես դեռ: Ասա ինձ, ասան վիշտդ...: Մի կատկածի, իմ ծնկներում այնքան ույժ կա, որ կարողանամ զիմազրել ասանց գողգողու: Արիւնս զեւ այնպէս չէ նւագել, որ ուժասպառ գտանամ: Ասան, ասան. սով քեզ վրդովեց, չլինի այն քաշ գլուխ Ոստանիկը քեզ բորբոքեց... թէ այն պնդագլուխ Բէնիկն է՝ ճագձգ իւռանի...: Խօսիր, պատասխան տուր, երեի այն տարգրուխ Հերմէսից եւ իտովի: Արժէ գրանց վրա բորբոքել, արժէ գրանց համար արիւն պատարի: Որ քեզ հաս՝ աւնային, որ նպատակը ըմբռնէին, բարիքն զգային, էլ ինչի այդ օրը կմնային: Մեզք եւ. հոգիս, մեզք եւ, ույժերդ այդ զգումների համար մի սպառել, դեռ ծրագիրներիդ կազմիր, նախագծերդ յօրինիր...: Նրանք բարբառս կրրից արժեն...:

— Հայրիկ, երբէք, երբէք գրանցից չեմ նեղանալ, գրանք տեղի չեն տել...

— Ես գիտեմ, եւ համոզուած եմ, որ հարսգասներս. արիւնիցս շառաւիղածները երբէք տեղի չեն տալ քեզ բորբոքելու: Այն տար գլուխ Մարտիկը քիչ վերվեր էր թուշում, նրան թիարան գլորեցինք, թնոյ իր սրջում ուտէ, խմէ, երբեմն երբեմն էլ ձիաուրէի, սրսի գեա, այնքան որ նրա շուքը երկա այս ապուշների աչքին...: Նա թէկ փշայնում, լափում է. փառս չունի, այդ կորուսան էլ պէտք է... Այն մտամբա Արխատակից էլ փնոյ ենք սպառել...: Բացի այդ խորթերը, այդ անիծեալ աղչկորդիները, էլ սով պիտի յանդգնի քո ասաջ գլուխ ցոյց տալ... քեզ շնորհակցել, քո կարգերին չհպատակել...:

— Ո՛չ, հայրիկ, ո՛չ, ախար զրանք քո շրից, քո շշուկից սարսափում են, երբէք չեն յանդգնիլ...:

— Հապա ինչ ես բնիճուել, ինչո՞ք է պակաս, գանձերս, կայքերս, մինչեւ անգամ անդին գոհարներս քեզ յանձնեցի, կնիքս անգամ ձեռքիդ է, էլ ինչ ես ուզում, ասան, ինչ է փափագդ:

— Ոչինչ, հայրիկ, ոչինչ, քո սուտղջութիւնը, քո հանգստութիւնը, քո երկարակեցութիւնը... միայն ինչդրում եմ, որ ինձ թոյլ տաս, հեռանամ, դեռ քիչ ման գամ ե հանգստանամ...:

— Եւ դու կյանդդնէս ինձ երեսի վրա թողնել, այս ապուշներին յանձնել ինձ ու զործերս, հեռանալ, հեռից կործանումս զիտել...:

— Ախ, հայրիկ...

— Մի հառաչել, թշնամին կլսէ, « օխ » կասէ, սիրտը կեղտուի...: Ասան, դու ինձ ցաւ յայտնիր:

— Յաւ չունեմ, ախար, դու գիտես, որ սրգից այնքան յիմար չէ, որ հարսգասների սխալները իրեն ցաւ շինէ... նախանձն է, առանին նախանձն է ինձ ստիպում, որ հեռանամ... թնոյ քիչ էլ զիտուն նախանձորդներս կառավարեն...:

— Ո՛վ է նախանձորդդ, ասան, ես հրամայեմ նրան ենիչլըրները զզկն:

— Այնպէս մարդ չէ, հայրիկ, այնպէս մէկը չէ...:

— Համբերութիւնս կտրեցիր, ասան, քեզ հայրդ հրամայումէ, ասան, սով է...:

— Փիլիպպոսդ, ախար, փիլիսոփա սրգիդ:

— Հէյ, հէյ, ... Արժէ այդ խելացնորի համար ինձ այսքան վրդովել: Միթէ հազար անգամ ասածս էլի կրկնեմ: Թո՛ղ կրկա, թո՛ղ բլբլա ու անցնի... Այդ կրկուցն ու բլբլոցն ո՞վ է լսում... Կա հարագատ եղբայրդ է, նրանից մեզ վնաս չի կարող դալ... Ցնորած է, կարծում է, բան է հասկանում, ապագան է զուշակում, թո՛ղ, հոգիդ սիրես, ես էլ մըտածում էի ինչ է պատահել...

— Այն, հարագատդ, ցնորամիտ հարագատդ, բայց ինչ օգուտ, որ իր խելացնոր մտքերով, երզերովն ու դասաճանաչովն զրգուում է քեզ գէ՛մ, ինձ գէ՛մ, հարագազներիդ էլ, խորթերիդ էլ... Գարբնանոցը դարտկել է, ջուհակները բանթող են արել և մեծ ու փոքր շրջապատել են Փլլիսպոսին, լսում են նրա զառանցանքները...

— Չարժէ, չարժէ, ուշիմ գաւակ, զրանց համար բորբորել: Ես նրա ականջները կոլտրեմ, կհրամայեմ, որ էլ չերգէ, չծիծաղացնէ, չզբաղացնէ նրանց, պրծաւ զնայ: Արժէր, որ սրա համար դու ինձ այնքան բորբորես և ես այսքան սիրտ մաշեմ: Ե՛ս յոգնեցի, ես չեմ կարողանում շնչել, զնում եմ քիչ հանգստանամ, նրան կանչել կտամ, կպատուիրեմ, որ էլ բնաւ չմտենա ո՛չ որի, ո՛չ երգի, ո՛չ խօսի, ո՛չ էլ ծիծաղացնէ...: Բայց դու էլ անզույճ բայլ շառնես, հա՛, մեղք է, իմ որդիս է, հարագատս է, նրան շատ եմ լսնամել, ափսոս, որ ամպերից ցած չի գալիս, թէ չէ խելահաս է...: Ես կպատուիրեմ, կյանդիմանեմ...:

— Գնա՛, զնա՛, երեսդ շտեմնեմ, ասաց նապա-

րը դէմքը կնճռոտելով և շանչերով զոռ շափելով, զնա՛, էլ գլուխը բան չի մտնում... չի կարողանում միտքս ըմբռնել... «կյանդիմանեմ, ... կպատուիրեմ»... եպաւ, զնայ: Ո՛չ, այս գառամեալը նստել է վզիս, կաշկանդել է թևերս և չի թողնում, որ ես թռչեմ, սաւառնեմ, երկինք բարձրանամ... Ի՛նչի է պէտք, ինչ գեր է կատարում, ուտում է, խմում է, լափում է, մեծ մեծ պահանջներ, ահաւոր ծախսեր, ազախիններ, ծառաներ, կառք ու ձի, գրօսանք ու դարձութիւն... Միայն ինքը լինի, էլի ոչինչ, իրեն էլ լսնամիր, Մարտիկի նման ոչնչացնող, փշացնող խելագար գաւակին էլ խնամիր, միւսների ցաւը բաշէ, այս ցնորամիտի էլ թունալի ծաղրին ու ծանակին նիւթ դարձիր... Եւ այս բոլորը կապկպել են թևերս, շեն թողնում, որ ես բազմանքիս հասնեմ, ծրագիրներս իրականացնեմ...: Անկարելի բան է, սրտնից օգնութիւն չկա...: Ախ՛, կարծես հոգին կպել մարնին, ջգերին ու ոսկորներին, պոկելու հնար չկա...: Չի զգում, ինչ ուզում ես, ասա, ինչ ուզում ես, արա՛, անտարբեր, նա իր ուղիից չի խոտորում և մի միայն իմ խելից, հանճարից, տազանդից ու հեռատեսութիւնից ուզում է օգուտել, ինձ ստրկացրած բանացնել...: Չի գլտրում, որ ազատ, անկախ, ինքնիշխան տիրեմ ու կառավարեմ...: Ինքն ու իր բիթը, ինքն ու իր գոյութիւնը... իսկ մնացեալը կարծես ստեղծւած լինի միայն իր վայելչութեան համար...: Ցնորւած, նեխւած անգամալոյժ, ասա, ինչի ես ապրում, ...: Հարցրու թէ — ինչի ես պէտք... Գողում է կեանքից, չի ուզում, որ ստալ քամին

կամ տօթը իրեն նեղեն, սարսափում է լակոաներից ու թուռներից, ... ցնցում է ամէն մի ազմուկից ու շշուկից... բայց չի ուզում ասպարէզը ուրիշին տալ: Ո՛չ կարող է վայելել, ո՛չ էլ թողնում է, որ մատաղ սերունդը, ժամօնակի սզին տիրէ ու վայելէ...: Ինչ-չացու է, ինչ կանազանութիւն կա սրա և իւր Արիստակի, Մարտիկի կամ Բէնիկի մէջ... Բոլորն էլ մեծամիտ, ինքնահաւան, պահանջող, բայց կոյր, կարճատես, չեն տեսնում ոտքերի տակ տարիներից իվեր փորածս հորն անգամ... Ո՛չ, ո՛չ, էլ չի կարելի համբերել, էլ այս վիճակը շարունակելը յանցանք է, աւելի, շատ աւելի մեծ սճիր է, մարդասպանութիւն է... Միթէ կարելի է ներել, որ նրանք ոտքերի տակ փրչացնեն այն ահաւոր կարողութիւնը, որ ձեռք բերելու, կուտակելու համար այնքան արիւն քրտինք է թափել... է՛հ, այս ցնդածն իր լիթացրով պիտի կործանէ, պիտի ցրէ ինձ էլ... ասենք ես իմ դատաստանս տեսել եմ, ես դիպել, գաղել եմ բաժինս... առանձնացրել, սեփականացրել եմ այնպիսի գումար, որ եթէ հայրական կարողութիւնը այժմ իսպառ կործանի, ես այնքան մեծ կորուստ չեմ ունենալ...: Չարժէ այս զառամեալին ծառայել, որ չգիտէ գնահատել... ինձ էլ, Փիլիպոսին էլ միասակով է գնահատում: «Ես կպատուիրեմ, ես կլանդիմանեմ»...: Ըստ հարկաւոր է, բո յանդիմանութիւնը նրա շատ պէտքն է: Ո՛չ, ո՛չ, ամէն մարդ իր գործը իր ձեռքով պէտք է տեսնի...: Ուրիշից յուսալը տխմարութիւն է... ուրիշը միայն ոգորմութիւն կարող է բաշխել, ո՛չ թէ իշխանութիւն...: Նրանք ովքեր որ սպասում են,

սպասում են յաւիտեան և միշտ աննկայելով էլ գլխում են անգամնալի անգունդի մէջ...: Ընդհակառակը քաջերը մի անգամ ձեռք բերելուց յետո, դժւար են կորցնում...: Ե՛ս ծառայեմ, ես սարկարար նրա սպասին կանգնած՝ սպասեմ, թէ հօրս մահից յետո պիտի իշխեմ եղել...: Ըստ հարկաւոր է, ինձ այսօր է պէտք իշխել, ես ցանկանում եմ այսօր տիրել և վայելել, ես բղձում եմ անսխալէս ծրագիրներս գործադրել և ամէն բան իմ թիւրացրութիւնով առաջ մղել: Ծերանալուց, թարբ՝ ոյժից, սուղ մտքից գրկելուց յետո. ինչ եմ անում կարողութիւնը, երբ գրկեմ պիտի լինիմ վայելելու հաճոյքից: Եթէ այսօր այս պարագային ցընգածը չի կամենում, չի թողաւորում, որ ես լնկճեմ, փշրեմ այդ երեակայող Փիլիպոսին, այդ ցանցառամիտ իմաստներն, այդ լաւատես գուշակին... վաղը կարող է հրամայել. բանի որ բոլոր իրաւունքը նրան է վերապահւում, կարող է պահանջել, որ ես հետգանդեմ իր կրկնացույ ու բլրացույ ի երացնորին, իսկ այն ժամանակ...: Ո՛չ, Նազար, ո՛չ, սրամաութիւնը, խորամանկութիւնը բեզ թիւրացրում է. որ զուամբողջական խորամանկութիւնը, ներքնագործութիւնը գործադրես և բեզ, տպագուգ փրկես վասնդից, որ եւ պատահական փորձանքից...

Նազարն երկար մտածելուց յետո, բարբորեւմ կրկնեց. — Ցագած, դառամեալ, դու «կպատուիրեա, էլյանդիմանեա», որ էլ չերդէ, չծիճագիցնէ, իսկ ես ուրիշ իւրով պարել կտամ, այնպիսի եղանակ ամել կտամ, որ էլ աւելի երդէ ու բարբորէ և այնքան

ծիծաղեցնել, որ խինդից թալանան, ս'յսին արտաու-  
 ւել լալ, սղբալ իրենց վիճակը...: Ողբալ, այնպէս  
 սգան, որ սրբուց սրգի, թուսից թմու գազին, գառն  
 քրտինք թափեն օտարի գաներում և շագատին  
 տանջանքից: Նրանց այնպիսի կրակը պցեմ, որ էզով,  
 սրձով, օրօրայով և մինչև անգամ թնդրի չիւրով գե-  
 րի ու դրաւ մնան իրենց թշնամիի ձևքին...:

Նազարը հայրական կաշի, գանձի, գոչի  
 մնացորդներն սկսեց դադանալ ու գազել: Ծերունի  
 Ղազարի անդին դահարեղէնից սրը ծախեց, սրը գը-  
 րաւ գրեց, սրն էլ թագցրեց իրեն համար: Նա աչքը  
 ի վեց, իրը թէ էլ չէր տեսնում, էլ չէր լսում Փի-  
 լիպպոսի երգերն ու ներկայացումները, բոլորովին  
 չէր էլ ստիպում, որ բէնիկը, Ռստանիկն ու Հէրմէ-  
 սը հետամտնն իրենց գործին, Ղազար Բէգիբեկանի  
 թուներն ու ծանները, հարագասներն ու խորթերը  
 գործից չփախչէին: Բնդհակատակը խրախուսում էր,  
 որ ամէնն էլ հետեին Փիլիպպոսին, դարձանան, բզ-  
 բունին, որ երեսի վրա մնա գործարանն էլ, դարբնացն  
 էլ, գտնառանցն էլ: Ամբողջ օրեր ու ամիսներ բա-  
 րեկենդան էին անում բանտորները, բանթոզ էր ար-  
 հատանացում, ամէնքը բաշւած այս ու այն կողմը  
 պահանջում էին Ղազար Բէգիբեկանի մատակարարից  
 ուտելիք, խմելիք, հագնելիք և դարձանում էին:  
 Ահն՝ մի սենեակի պատկազ օջախի առաջ դար-  
 ձնում էր Ղարս - Բեարսիի շամբարը, կանձում էին  
 սատականն ու կարմիր գինին խորովածի վրա:

— Է՛լ, տակառապեա, գոռում էին գլխերը  
 տարացրած, մենք այն գինիից ենք պահանջում, որ

խմում է նազար - սղան, շտապէ՛ք, գրաֆինները լից  
 ու բեր: Ինչի մեզ համար Խարբերդի գինի չէս բե-  
 րում, նազարը վերի արախ ցորենն է, իսկ մենք  
 ներքի...:

— Մեզ համար նազարի գիպակ ու թիրմա  
 վերարկուից կարել տուր, գոտում էին մանուկները  
 մատակարարի վրա, ինչի մեր հագուստի աստառն  
 էլ անդուսից ու բեհեզից չես կարել տալիս. ինչ է,  
 նազարը մեր պապի սրգին է, իսկ մենք նրա որ-  
 թունքն ենք... ինչ է, ... մենք շարժենք...:

— Մենք էլ ենք ուզում դրօսնել, դարձանալ,  
 մենք ցանկանում ենք հանգստանալ ու վայելիլ...:  
 Տնտես, մեր սեղաններն էլ գարգարիք համեմոտ  
 խորտիկներով, իշխան ու գեղարբունի ձկներով,  
 կարաւով, փասխանով, լորերով, մեր ախորժակն էլ  
 սրսի կարօտ է բաշում:

Այսպէս ամէն կողմից պահանջում, բաշում  
 լափում էին, իսկ անտես, տակառապեան ու մատա-  
 կարարը չէին յանդգնում գիմազբել: Ովքեր ուժեղ  
 էին՝ բաշում էին, լափում էին, թուլերն էլ թէ ճան-  
 կերն ընկնում էր յափշտակում էին, թէ չէ, սրտորդի  
 նման աչքերը չորս կողմը չառած, սպտում էին գէպ-  
 րի: Պարձկաններն էլ ուրախ էին, քանիտը բնդհա-  
 նուր աւարից, ծախսից իրենց էլ իւզալի բաժին էին  
 հանում և ամէն մի ծախսի քառապատիկ արժէքն  
 ստանում էին նազարից: Բայց այս ճոխութիւնն եր-  
 կար շտեկց, բանիտը շուտով լցւած ամբարները  
 սպառեցան, մատանները սղարպեցան, կարանները  
 դարակեցան, բզուկներն ու կճուճները փշրեցան,

Նազարն էլ չուզեց նոր միժերք գնել, ամբարել և վարձկանները գլուխներն առին փախան: Բէնիկի, Ոստանիկի, Հէրմէսի և սրանց բոլորի սրղինները, թոռներն ու ծոռները շրջապատեցին Նազարին և պահանջեցին, որ իրենց կարի ներք: Տոգա, զրամ վճարէ, որ կարողանան ցանկացածները ձեռ բերել:

— Այս ինչ բան է, դու լսվում ես, լսվում ես, ջնջում ես, պատում ես, չես մտածում, որ քո եզեւանները քաղցած են, ծարաւ են. մերկ ու բորբիկ են: Ա՛վ է տեսել, որ հայրական գոչքը մի սրղին յափշտակէ, տակը գնէ, մինակ վայելէ, իսկ նրա հարազատները կարիքից խեղդւին:

— Ես ինչ կարող եմ անել, իմ ձեռքս ինչ կա. եղած - չեղածն հայրիկին եմ յանձնել, ես էլ ձեզ նման, եթէ տան՝ կուտեմ, եթէ ոչ, կսպասեմ... Ուզում էք, գնացէք պապից խնդրեցէք...:

— Ո՛չ, դու սուտ ես ասում, աւագակ, դու տակց լցրել ես, մեզ հաւատայնում ես, որ պապին ես յանձնել, որպէսզի մեր ձեռքից օձիքդ ազատու՝ Քեզ չենք բաց թողնել, մինչև մեզ բաւականութիւն տաս...:

Նազարն անճարացած նրանց առաջնորդեց ծերունի Ղազարի մօտ և նրանց դուրսը թողնելով, ինքը ներս մտաւ և հօր ակտիւզում շշնջալով ասաց.

— Հարազատներդ ու խորթներդ բորբոքել, եկել են քեզ խեղդելու... աճապարիք, գլուխդ փրկելու ճարը տես:

— Զտապիր, շտապեցէք, ձայն տւէք, կանչեցէք Մարտիկիս, բացէք քարատան դռները՝ թող

դուրս գն. նա զրանց կտարափեցնէ, կփշրէ ու կցրուէ: Զնա, Մարտիկիս ասէք, որ մտրակն ու սուրը տանի, ձիաւորի ու սլանա նիզակաւորների խմբով: Նազար չան, շտապեցէք, նազար, դու ինձ մենակ մի թողնել. նազար, ես սարսափում եմ...:

Ծառաները վազեցին Մարտիկին ձայն տալու, իսկ սրղիքն ու թոռները անզագար գոռում էին.

— Մենք պապին ենք ուզում, մենք մեծ հայրիկին ենք ուզում տեսնել, մենք քաղցած ենք, մերկ ենք... Նազարը մեզ սովով է ուզում կոտորել:

Այս աղմուկից, գոռում - գոչումից մոլորած Ղազարն ազաշում էր.

— Նազար, ինձ փրկիր, նազար ջան, ինձ ազատիր, սրամիտ դուակս, ասն ինձ, ես ո՛ւր փախչեմ:

— Ես որ ասում էի, ափսոս, թէ Փիլիպպոսը բորբորում է թոռներիդ մեր դէմ, փշրիր, բոցերի մէջ ճինճրտացրու այդ ստահակին, դու ինձ չէիր լսում, դու իմ խորհուրդներս չէիր զործադրում, ինձ տեսար, տեսար ցնորամիտ գուշակիդ, ինձ այժմ համոզեցար, թէ ո՛ւր հասցրեց խելացնոր սրղիդ մեր աւտնին գործերը...:

— Գրանց ժամանակը չէ, խորամիտ սրղիս, ասն, խրատիր ինձ, ինչ անեմ այժմ... Երբ ազատւենք, ես փշրել կտամ այդ ցանցառ խմաստակի ատամները...:

— Էլի ես գնամ, նրանց մի կերպ համոզեմ, ցրեմ, թէ չէ վտաւ հոտ է գալիս, ախար մեր հարազատներն են, ինձ արիւն չենք կարող թափել...:

— Տես, հեռապես գաւակս, թէ փող են ուզում, ոսկի շաղ տուր այդ խոզերի առաջ և նրանք կրեն ու կցրւին: Տներ, հեռացրու, քիչ խաղաղցրու, մինչև Մարտիկս գա: Նա քնջ է, Մարտիկս հերոս է, նա բարեսիրտ է, ազնիւ զգացում ունի, նա զբանց բոլորին կցրււ և չի թոյլ տալ, որ ծերունի հօրը վրա ձեռ բարձրացնեն...:

— « Նա քնջ է, նա հերոս է, ազնիւ զգացում ունի, նա կցրււ... » մըթմըթալով կրկնեց քթի տակ նազարն ու դուրս եկաւ: Գաթում նրան շրջապատեցին ջուհակներն ու դարբինները սրտաւալով:

— Հնայ, գինի, գաւուլ - գուռնա ենք ուզում: Բաց արէր զոները, բացէք սեզանատան զոները, մեզի բաւականութիւն տէր:

Նազարն աչքով, ունքով նշան աբաւ, կնճիռներով հասկացրեց խմբի գլխաւորներին, որ մի կողմը բաշտեն, նրանց ասելիք ունի: Նրանք բմբունցին և մի անկիւնում շրջապատեցին նազարին:

— Պապը հրամայեց, որ Մարտիկը մտրակով ու սրով գա, իրեն սրտորդների խմբով, իրեն նիզակաւոր քրդերով, ձեզ կոտորէ, ցրւէ: Հեռացէք, բանի նա չի եկել, ես ձեր բարիքը ցանկանալով խորհուրդ եմ տալիս, որ այս անմեղ երեխաներին հեռացնէք, չթողնէք որ պապի բարկութեան զոհ գանան, նրանց արխնով ներկէի մեր գուռն ու փողոցը:

— Մենք Մարտիկից չենք վախենում, թող այն գինովը մեզ շօտենա, ահսնի... նրան այնպէս փշրենք մեր մուրճերով ու մանաներով, որ խոյտա-

ռակի ու ետ փախչի: Բացէք, բացէք զոները, մանանները, գանձարանը, մենք սոված ենք, կարիքներից խեղդւած:

Նազարը զրգւած ամբոխին լծողեց, մտաւ հօր առանձնասենեակը և ասաց.

— Ախար, մտիւր, մի ծակում պահէիք, թէ ոչ, կատաղած թռուներդ ներս խուծելուց յետո զժւար կլինի վիճակդ...

— Ախար ուր է, ուր է Մարտիկս...

— Մարտիկը հարբած ընկել է անզգա, մրափում է, պատասխան տւին ծառաները, որոնք վերադարձել էին Քարառնից.

— Ախ, իմ քաջ Մարտիկս, նա, միայն նա կարող է ինձ փրկել... Գնացէք, սթափեցրէք, կանչեցէք նրան, էլ սր օրւան համար է նրա սուրն ու նիզակը, ուժն ու մտրակը...

— Գնացէք, դարձեցրէք, թող շտապի գա, ասաց նազարը սպասաւորներին և մօտենալով հօրը ցած ձայնով շարունակեց.

— Մինչև նրա սպառազինւելը դու մի տեղ պահէիք, թէ ոչ, այս անիծեալ խորթերդ, մանաւանդ հարազատներդ մեզ կփշրեն:

— Ախ, ես ուր կորչեմ, սրտեղ թագցնեմ այս ալիզարդ գուլիս... ապերանխտ գաւակներ, անարժան թոռներ ու ծոռներ...

— Ես որ բեզ կրկնում էի... թէ այս Փիլիպոսը, այս իմաստակ կրկոացողը զրգուում է բեզ գէմ որթունքներդ, ցեցերիդ, ինձ չէիր լսում... Եթէ մի Փիլիպոսու փշրէիք քսան տարով աւել լապրէիք

և ծերութեանդ ժամանակ այս օրին չէիր մնալ...

— Անհառատես որթունք, անխ, ցանցառ տղա: Ես ինչպէս ձեռս բարձրացնէի իմ հարագատ արիւնիս դէմ, իմ սրտիս դէմ...

— Թող արիւնդ ու սիրտդ այսօր քեզ դէմ բարձրացնեն իրենց բունցքն ու նիզակը...

— Լսիր, լսիր, մի կրակել սիրտս, ... չէ որ բռնութիւնը, խտաութիւնն ու անպարտութիւնը աւելի շուտ պիտի բոբրօթէր նրանց սիրտը... Թող, թող, այժմ գրանց ժամանակը չէ, նազար, փազիր ու կանչիր իմ Մարտիկիս, կանչիր. նա միայն կարող է այս բնութաներին սանձել...

— Այն գինովը հարբել, անզգա թմբել ընկել է, երազում թագաւորում է իւր ձիւրի, բարակների և աղանիկների վրա: Նա երեակայում է, գինու ազդեցութեան տակ թափառում է անպերի վրա, իսկ դու, թշառ ծերուկ, դեռ երեակայում ես, յոյս ունիս, որ նա կարողանա քեզ փրկել այս խուժանի ճիրաններից: Ներս մտիր, թապնիր, ծածկիր մեծ պահարանում, մինչև Մարտիկդ գա, թուներիդ ցրւլ, տտայ, գուրս գնաց նազարը, եղեաններին գիմաւորեց, որոնք գտում էին.

— Մեծ պապին ենք ուզում, թող մեզ սուրբուստ տա, թող մեզ սնունդ տա...

Նազարը երեւու պէս նրան շրջապատեցին բարձրահասակ, հաստաբազուկ ու արագաշարժ և զեւակներ, որոնց ախանջին շշնջաց Կիսլանջը.

— Ինչի էք կաշկանդուել, ինչի էք մուրել, թէ սպասում էք, որ Մարտիկը գա, ձեզ մտրակի

տակ խաշէ, սրի տակ ուղղէ: Ներս մալք, հայրիկը մեծ պահարանն մ ոսկիների և գոհարների պարկերն է տեղաւորում, որ չկարողանաք յափշտակել, ցրել, գնացէք, խիցէք ձեռքից, որքան որ ուզում էք և փայլեցէք...

— Մենք նախադարձակ չենք ուզում լինել, մենք պահանջում ենք, որ նա իւր կամքով մեզ բաւարարութիւն տա... երբ հերթը բռնութեան գա, մենք դիտենք մեր մկանների ոյժը արժանաւորապէս գործադրել...

— Նա ուզում է ձեզ կոտորել, բնաջինջ անել Մարտիկի ձեռքով, իսկ դուք...

— Մենք այն գինովից երբէք չենք փախնում, թող գա, մենք նրան կփշրենք, կցրենք, կթէլ բռնութիւն գործ գնէ, և նա չի կարող մեզ ընդգինանալ, թէ կուզէ փշապի գլուխ ունենա...

— Բայց մեզք է, ձեր մանուկները սունատակ կման, կիններն ու երեխաները սրի գոհ կղաւնան...

— Այն գինովը գլուխն այնպէս է կորցրել, որ նրանից մեզ փնաս չի հասնիլ... Նա այնպէս է մեծամտել, այնքան մեծ հաւատ ունի իւր շուքի ու փայլի վրա, որ երբէք լայեղ չի անիլ մեզ դէմ սուր շարժել, ...: Նա մինչև շարժւի մենք նրան կտապակենք:

Մինչ սրանց ազմուկը օդն էր թնդացնում, մինչ Ազգար Բէլգիրգեանի տունը զգրդում էր հարագատների սրտից, բազարը համբաւ հասցրին, թէ շէրթէսը կրակ է տւել հայրական տանը, որպէսզի Ազգարին ու նազարին նրա բոցերի մէջ մոխիր գար-

ձնէ: Այս յուրը հասնելու պէս, այն փաճառականները, որոնք պահանջ ունէին Ղազար Բէկիրբեկեանից, փաղեցին Սուգոփի, բարձրացան գարիփերը՝ Գիւտնենց փողոցով, հոսան Ղազարի տունը. ներս թափուցան, կանգնեցին դահլիճում և սկսեցին գոռայ.

— Մենք այստեղից չենք դուրս գալ, մինչև մեր փողերը չվճարէք...

Ղազար Բէկիրբեկեանը սրանց խառնաշփոթից զարհուրած, դուրս եկաւ թաղատից, առաջ անցաւ ու ասաց.

— Ի՞նչ էք պահանջում, ի՞նչ փող է, ի՞նչ բան: Նրանք բռնորը միտօխն, մէկը միւսի ձայնը խեղդելու տենչով բոբբորում գոռում էին.

— Նազարդ մեզ երեք բիւր զուրուշ է պարտ, տուր, առանց փողի չենք կարող հեռանալ, թէ չէ տանից ապրանք պիտի քաշենք, տանենք...

— Նազարդ մեզ յիսուն քէստ տոակ է պարտ, չորբաջիս ասաց, որ եթէ փողը չվճարէք, պիտի երթանք զբաւականները՝ «Մշկօնների» ատարանոցները՝ զբաւենք...

— Նազարդ մեզ հարիւր քէստ փող է պարտ, եթէ չվճարէք, ձեր բնակարանը, Քարատունն ու փաճառանոցը յանձնեցէք, բանիոր պայմանագրի օրը լցուել է և զրանք անցնելու են մեր իրաւասութեան:

— Նազարդ մեզ հազար քէստ արծաթ է պարտ, որի դէմ յանձնամ է մեզ ձեր ազարակներն ու մարդերը, մարտարաններն ու լծկանները, բանի որ էլ կարողութիւն չունիք վճարելու, ետ առնելու, յանձնեցէք մեզ զբանց կալած աղբերը և կապալապրերը.

— Ի՞նչ են ասում, նազար, ի՞նչ են պահանջում, ասաց շշկուած ծերունի Ղազարը յուսահատ և ընկճւած...

— Ի՞նչ պիտի տեսն, թափառաշրջիկ թոռներից ու ծոռներից ի՞նչով եմ կերակրել, նրանց բերանը ի՞նչով եմ կապել, նրանց որկորը ի՞նչ եմ մըխել...: Որ ասում էի, ափսօր, Փիլիպոսոյ...:

— Գէ՛հ, որ փոխ ես վերցրել, տանք, բաւականացուր, ճահապարհ պցիր...

— Որտեղից տամ, բանի որ թոռներից դանձերդ ցրել, անդուկներից պտրպել և ամէն բան յափշտակել են, իսկ դու սնանկ ես...

— Ո՛հ, Ղազարը սնանկ չէ, Ղազարը չի կարող արատաւորել, Ղազար - Բէկիրբեկեանի անունը ո՛չ որ չի կարող կոտրել... Տար տուն տեղ, կայր, դանձ ամէն բան տուր և անունս, անունս, անաղարտ պատիւս պահիր...

— Արդէն ամէն ինչ տրւած է, բայց դեռ բաց ունենք, ասաց նազարը և աչքով նշան արաւ, որ պահանջատէրները ազմկեն ու պահանջեն...: Նրանք ամէն կողմից զարձեալ սկսեցին միարբերան գոռալ...

— Կամ փողերս տէ՛ք կամ զբաւականները յանձնեցէք, դուրս արիք կալածներից...

— Նազար, տանք, տար այն գոհարներից մի բանի կտոր զբաւ դիր, ազատիր հօրդ տունը, պապերիդ օջախը հակառակորդներիդ ճանկից...

— Մի՛թէ չգիտես, որ գոհարներդ Արիստակղ յափշտակեց ու կորաւ:

— Նազար, սրանց բաւականացրու, տանք տուր

սրանց այն գոհարների մնացորդը, ազատիր օջախս...

— Մխար սրանց է, սուր կա թագցրել մնացորդը, որ իրանց տամ ու ազատեմ...

— Գուրս հանիր, գուրս տար զրանց, իսկ ես րեկ կտամ մնացորդները...

— Նազարը նշան սրաւ, գուրս տարաւ պահանջատերներին և հօրը հետ միասին մտան այն պահարանը, որտեղից հայրը աւել մի մեծ կապոց նազարին և երբ ձերուկը ուզում էր գուրս զալ պահարանից, նազարը մի կից աւել և գլորեց նրան այն մութ հօրը, սրտեղ թշուառը ջարդեամ սկիորների ցաւից տանջւած՝ չէր կարողանում շարժել և ձայն բարձրացնել:

— Անիծեալ ձերուկ, որքան որ նազարը խորամանկ է, դու հարիւրապատիկ նրանից ծածկամիտ ես կզել...: Երգում էիր, թէ «էլ բան չունիս», թէ «ամէն բան յանձնել ես...»: Բայց տես, տես ինչեր է ծածկել... գուցէ գեռ էլի ինչեր ունի թաղցրած... Բայց պէտք չեն ինձ քո գազամները, տուր րեկ հետ դերեզման, միայն թնօլ, թնօլ որ ես ազատ ապրեմ, անկախ իշխեմ և գազափարիս ձգտեմ... նպատակիս հասնեմ... ծրագիրներս գործադրեմ, միջոններ... գարի թագաւորութիւնը գանձի տէրերինն է... Մինչև դոնների բացելը, թոռների ներս խուժելը նազարը այդ թանկագին գոհարների կապոցն էլ գազեց և որտասուալի աչքերով դիմաւորեց եզրայրներին, սրանք գոռում էին:

— Ուր է մեր պապը, ուր է մեծ հայրը, նրան ենք ուզում, մենք սոված ենք...

— Անգոյթ գաւաղներ, անխիղճ թոռներ, ապերախտ սերունդ, պապին չզիմացաւ ձեր ըմբոստութեանը, անանկութեան վշտին, գնաց, գլորեց խոր գանձարանը... ինքնասպան գարձաւ, որ գաւաղների ձեռքերը իւր արիւնովը չապակտնէ...: Նա ձեզ այնքան սիրում էր, որ չուզեցաւ անգամ, որ ձեր սրտերը ծանրաբեռնէ հայրասպանութեան տանջանքներով, ինքն իր կեանքին վերջ դրեց, ապերախտ գաւաղներ...: Նա չուզեցաւ, որ ձեր թոռները ձեզ վայեն, հայրասպանութեան սփռի համար... Անձնասպան կղաւ, որ սահմի, հարապատենքի ապագան չարատաւորէ...:

— Հեռու, հեռու գիացէր ապականւած անհարազատ ծնունդներ, հեռու, հեռու այս սրբութիւնից, սասոց ներս մանկով Մարտիկը, սրբ կրեւալով առաջ էր գալիս գոռալով, մերկ սուրը գողգոջուն ձեռքին բարձրացրած և աչքերը ձգձուկացնելով: — Ես ձեզ բոլորիդ կգլորեմ, ձեր արիւնով փողոցները կոզոզեմ, այնքան մեծ սէլ կբարձրացնեմ, որ արիւնով Ռահ գետը ներկելի: Ուր է հայրիկս, ուր է ցընգած ձերուկս...:

— Է՛յ, խելագար գինով, ինչ ես սրտում, ումն ես ուզում վախեցնել, ձրիակներ, կորիք այստեղից, սուրբ վար իջեցրու, գորդում էին կգեանկներ իրենց րեռու կամ հօրեզրօր դէմ...:

— Լուցէր, կորէր ձեր որջերը, գնացէր նազարի մերկեաները գարձրէք, սինյլար խուժան, ինչպէս էք համարձակում ինձ գէմ գոռալ, չէ որ ես տան մեծ անդամն եմ և ինձ էք հնազանդելու բոլորը

էլ... ես պիտի լուծեմ հօրս վրէժը այս ապերախտ նազարից և նրա վաշէտու պարտապաններէց...

— Յայտնի բան է, եթէ մենք էլ քեզ նման պապի շնորհները վայելէինք, պառկած խժովինք...

— Լոեցէք, չհամարձակէք խրոխտալ, անհարգատներ, գնացէք. մութ կու տէք, ձեր ինչ գործքն է...

— Այն, ձրիակեր քեռի, մենք խորթ ենք, անհարգատ ենք, իսկ դուք ազնիւ, ազնւական, որ պատրաստ էք խժուխու սպականւածներէս սրդինարեւածները, ... բաւական է ինչքան որ յափշտակեցիր...

— Կորէք, անիծւածներ, ասաց և սուրը շարժեց, յարձակեց Մարտիկը եղեանների վրա, անբնդհատ հայնոյելով:

— Չատ մի յախորտալ, սպա Մարտիկ, ափեցցփեղ հայնոյանքներդ կարող ես թափել Քարատան ստրուկներիդ և ծառաններիդ գլխին: Այլեւ շեւ կարող մեզ գուլ սրովդ վախեցնել:

— Այ, անգամ աղչկորդիներ, ես ձեր... ասաց ու յարձակեց և սուրը գոյգոյուն ձեռքով շարժելով մի բանիսին խփեց:

Եղեանները բորբորւած վրա պրծան, մի քանի բռունցք տվին, գլորեցին Մարտիկին, ոտքերի տակ այնքան գնդատեցին, որ ուշքից բնկաւ: Մարտիկի հետեորդները, որ ակամա հեռեկ էին իրենց տիրոջը, այս տեսարանից սարսափւած, թողին, վախան, ցրեցան: Մարտիկին այնքան էին խփել, որ ստիւրները փշրել, վէրքերից թափւած արիւնը ներ-

կեց հայրենի յաջկի տայակը: Բայց նա, մեծամիտ և անբնկճելի, անբնդհատ գէլին էր տալիս և մրմնջում:

— Ես հիմա կրարձրանամ և այդ աղչկորդիներիդ, ոչ մէկիդ ողջ չեմ թողնի, ես ձեր վաստակողների հօրը...: Ես ձեզ բոլորիդ կմանրեմ, կթափեմ Կարսի-չայր և ձեր գէշով ձկներին կկերակրեմ...

Ել ոչ որ ուշք չէր զարձնում Մարտիկի բարբանջանքներին, նրան շրջապատել էին իւր եղեանների մանուկները, ծաղրում էին գինովի շարժումները, տատանումները, բարձրացրած ձայները և փսխունքը...:

Այն կողմից ներս թափեցան թոռները, ծոռները պապի գանձարանը, որ կողպատեն և գնան իրենց բմբին յազուրդ տալու, բայց ապշած մնացին, երբ նկատեցին, որ պապի սնդուկները պարպւած, արկղները պարտակւած, կապոյները ցրւած և խեղճի տրոցի ձայնը, մրմունջները լուռւմ էր գանձարանի խորքում գանւած խոր հօրից: Ենթադրելով թէ ձերուկը կիսլանջին է յանձնում իւր գանձերը և նա նկուղիների և գետնափորի այրերի մէջ գաղում է պապի պատուական գոհարներն ու սակի թսակները, իսկոյն շաններով իրար հետից կախեցան խոր հօրը, իջան գառամետալի մօտ, որը սակորների խոստակից տրում և կցկտուր մրմնջում էր:

— Ներեցէք ինձ, խղճացէք ինձ, իմ անիրուտ թիւններիս համար թողութիւն տէք, սգնիւ գաւակներս...: Ես սխալեցա, բնձ մտորեցրեց այն ազէսի կաթով սնւածը, իմ աչքերս կապեց, թովեց,

հմայեց ինձ այն օձի ձուով պարարւածը,....: Ամբողջ  
 գոյքս յափշտակեց, ձեզ հետ կուեցնելուց յետո,  
 շինայեց այս ալետր մագերիս, ինձ այս անգուենդը  
 գորեց...: Ես էլ չեմ կարողանում շնչել, ես էլ չեմ  
 կարող շարժել. . . ես մեռնում եմ,.... ձայնս խեղ-  
 դում է... ներեցէր ձեր պապին, թողութիւն տւեր  
 անիրաւութիւններէս,....: Ես մեզք չաւենեմ, նա ձեզ  
 ինձնից բաժանեց, որ մինակ տիրի... նա ձեզ հետ  
 ինձ կուացրեց, որ կարողանա յափշտակել, իւրացնե  
 իմ ամբողջ կայքս...: Այն աւազակը ինձ կողոպտեց,  
 այն ազւէսը ինձ...:

Ծերուակին մեռաւ թոռների գրկում, որոնք  
 նրան դանձարանում թագեցին, բայց նազարին չկա-  
 րողացան զանեկ, նա փախել էր, նա հեռացել էր,  
 որպէսզի եգեանների ճանկը չբնկնի:

Պատմում են թէ նազարը գնացել է Ստամ-  
 բուլ թէ Եւրոպա, նոր նոր գործարաններ է հիմնել,  
 փախցրած ու գաղտն ասկով մերենաններ է ձեռք  
 բերել և զանազան ապրանքներ դաճել տալով, ու-  
 դարկում է Տաճկաստան, Պարսկաստան, բայց որ-  
 բան ճիշտ է այս լուրը, ո՛չ որ հաստատ բան չի կա-  
 րող ասել:

Կիսլանջի պարտատէրները խմբեցան, Ղա-  
 գար - Բէգիրգեանի ամբողջ գոյքին ախրացան ու բա-  
 ժանեցին իրենց մէջ: Տուն, տեղ, կարգ, սարք, խան,  
 խանութ, գարբնոց, արհեստանոց, ներկարան, ամէն  
 բան անցան հակառակորդների ձեռքը, իսկ Ղազարի  
 որդիքը գլխակոր ընկան պարտատէրերի ճանկը, որ-  
 պէսզի նրանց իշխանութեան տակ բանին, թէ ապ-

բուտս ձեռք բերին և թէ Կիսլանջի մերենայած ան-  
 հուն պարտերի տոկոսիքը վճարեն:

Մարտիկը գուրս չեկաւ իւր Քարաանից, որին  
 ձեռ չաւին պահանջատէրները: Թէն էլ ոչ ձի ունի,  
 ոչ էլ ախոռապետ, ոչ ծառա տնի, ոչ էլ խոհարար,  
 բայց երեակայում է, թէ էլի հին իշխանն է և ամէն  
 օր մի գործիր, մի գէնր, մի թամբ, կամ սանձ գուրս  
 է բերում, ծախում, օգի է գնում, հարբում, ու այս-  
 պէս միմայցնում է օրերը, ինքն էլ այդ կեանքից,  
 այդ գգելի ունակութիւնից ձանձրացած: Զգում է  
 Մարտիկը, որ ինքը ոչնչի պէտք չէ, ոչ մի գործ  
 կատարելու ոչ թ չունի, բայց անձնասպանութիւն  
 գործելու էլ չի յանդգնում:

Իսկ Եգիպտէի գայեկը վերադարձած Ալազայի  
 բարձունքը՝ Բագնայրի կողերից դիտում է ու հրճում,  
 որ կարողացաւ կործանել Ղազար - Բէգիրգեանի թա-  
 կարդները և ազատել թէ ամուսնին, թէ գաւակնե-  
 րին և թէ հարազատներին այն սոսկալի որոգայթնե-  
 րից, որտեղ ընկնողը թնջկում և յաւիտեան էլ չէր  
 կարողանում ազատել: Տարիներ ու դարեր աշխա-  
 տում, տանջում, բայց պարտերից աչք չէին կա-  
 րողանում բանալ Բէգիրգեանի գործարաններից բան  
 չէին կարողանում ազատել, որ սնուցան էին իրենց  
 գաւակներին:

— Իսկ Փիլիպպոսը առանց յուսահատելու, ա-  
 ռանց վշտանալու՝ անտարբեր դարձեալ շրջում է հա-  
 ռազատների գործարանները նորից երգում իւր դաս-  
 անը, նորանոր մտքեր է արձարձում, որպէսզի բո-  
 լորովին փշրէ նրանց մտքի պինդ շղթաները և վե-

բահաստատ, այն եզրայրութիւնը, որից նրանց զրկեց  
Կիսրանջ — նազարը: Այս անգամ նրանք զինուում են  
նշ թէ իրենց հարազատ Կիսրանջի գէմ, այլ նրա մե-  
րենայութիւններով հակառակորդների ճանկ բնկած  
կարողութիւնը ետ բերելու տենչանքով, որպէսզի  
կար՝ զանան ցրտից ու բազցից փրկել իրենց գլուխն  
ու սերունդը...:



27 նոյեմբերի 1887 թ.

Կարս

6-50-77

6503

2013

Հայաստանի Ազգային գրադարան



NI 0435415

